ՀՀ աշխատանքի եւ
սոցիալական հարցերի

USAID FROM THE AMERICAN PEOPLE

PRIP Pension Reform Implementation Program

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ՄԱՍ 2: «Աշխատանքային Կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ արդյունքները

ՀՀ աշխատանքի եւ
սոցիալական հարցերի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՄԱՍ 2: «Աշխատանքային Կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ արդյունքները

Երևան, 2016թ.

Բովանդակություն

Հապավումների ցանկ 3

1. «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 5

1.1. «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի մշտադիտարկման փաստաթղթերը 5

1.2. «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների վերլուծությունը՝ ՄԳ հաշվետվություն 7

Նախաբան 7

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի գնահատման ամփոփագիրը 9

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ արդյունքներն ըստ ոլորտների 30

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի իրականացման վերաբերյալ ԱԽ անդամների ձևավորված դիրքորոշումը և առաջարկություններ 105

Հավելվածներ 109

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Աշխատանքային խմբի կազմը 109

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ՀՀ ԱՍՀՆ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման փաստաթղթեր 109

ՀԱՎԵԼՎԱԾ Գ ՀՀ ԱՍՀՆ «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման փաստաթղթեր 109

Առդիր 1: ՀՀ ԱՍՀՆ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակ: 109

Առդիր 2: ՀՀ ԱՍՀՆ «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակ: 109

Առդիր 3: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության Հաշվետվություն 1՝ Կենսաթոշակառուների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները 110

Առդիր 4: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության Հաշվետվություն 2՝ ՀՀ ՍԱՊԾ աշխատողների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները 110

Առդիր 5: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության Հաշվետվություն 3՝ Հանրային կարծիքի և իրազեկվածության աստիճանի գնահատման հետազոտության արդյունքները 110

Առդիր 6։ Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության մեթոդաբանությունը 110

Առդիր 7։ Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության հարցաշարերը՝ տնային տնտեսությունների հարցաշար, ... 110

Առդիր 8։ Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության հարցաշարերը՝ ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հարցաշար 110

Առդիր 9։ Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության հարցաշարերը՝ Ֆոկուս խումբ քննարկումների հարցաշար 110

Առդիր 10։ «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի շրջանակում իրականացված ֆոկուս խումբ քննարկումների հաշվետվություններ 110

Առդիր 11։ USAID/PRIP կարճաժամկետ խորհրդատու դոկտոր Ջոզեֆ Անդերսոնի հաշվետվությունը 111

Առդիր 12։ Մշտադիտարկման և գնահատման վերաբերյալ ՀՀ ԱՍՀՆ նախարարին և ՀՀ ԱՍՀՆ ՄԳ աշխատանքային խմբին ներկայացված պրեզենտացիաներ 111

Հապավումների ցանկ

ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԱԽ	Աշխատանքային խումբ
ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի միացյալ նահանգների միջազգային զարգացման գործակալություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԲՍՓԳ	Բժշկասոցիալական փորձաքննության գործակալություն
ԶՊԾԳ	Զբաղվածության պետական ծառայություն գործակալություն
ԻՍԾՀ	Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգ
ԿԲԻԾ	Կենսաթոշակային բարեփոխումների իրականացման ծրագիր
ԿՀԻԿ	Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն հիմնադրամ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՍԾՏԿ	Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոն
ՄԳ	Մշտադիտարկում և գնահատում
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսային ծրագիր
ՆՍԶ	Նվազագույն սպառողական զամբյուղ
ՍԱՊԾ	Սոցիալական ապահովության պետական ծառայություն
ՏԶՀԿ	Տնտեսական զարգացման և համագործակցության կազմակերպություն
ՓԳ	Փոխհատուցման գործակից

Սույն հաշվետվությունը երկրորդն է, որը պատրաստվել է ԱՄՆ ՄԶԳ Կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի և ՀՀ ԱՍՀՆ աշխատանքային խմբի կողմից՝ պետական կենսաթոշակային համակարգի ծրագրերի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման և գնահատման մեթոդաբանության կիրառմամբ։

Թիվ 1 հաշվետվությունը ներառում է պետական կենսաթոշակային համակարգի ծրագրերի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման և գնահատման մեթոդաբանությունը, և այդ մեթոդաբանությամբ «Աշխատանքային կենսաթոշակներ» և «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգեվավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրերի մշտադիտարկման ցուցանիշների շրջանակների մշակման, տվյալների հավաքագրման և հաշվարկման պարզաբանումները։

Թիվ 3 հաշվետվությունը ներառում է «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգեվավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի գնահատումը։

Սույն հաշվետվությունը ներկայացնում է արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման և գնահատման մեթոդաբանությամբ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի վերլուծությունը։

1. «ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1.1. «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի մշտադիտարկման փաստաթղթերը

Առաջարկվող մեթոդաբանության համաձայն, «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի մշտադիտարկման փաստաթղթերն են՝

- Ծրագրի **վավերագիրը**,
- Ծրագրի **ՄԳ անձնագիրը**,
- Ծրագրի **ՄԳ ցուցանիշների շրջանակը**:

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի վավերագրում (տես հավելված Բ:1) տրված է ծրագրի գաղափարախոսությունը, մշակման նախապատմությունը, իրավական հիմքերը, վերջին տարիներին Հայաստանի կենսաթոշակային ապահովության համակարգում ընթացող բարեփոխումները և մասնավորապես «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի զարգացումները: Վավերագրում համառոտ նշված է նաև Սոցիալական ապահովության պետական ծառայության՝ որպես «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի իրականացնող կառույցի նախապատմությունը:

Ինչպես նշված է Ծրագրի ՄԳ վավերագրում, Ծրագրի իրականացմամբ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին երաշխավորվում է քաղաքացիների սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը, քաղաքացիներին տրամադրելով աշխատանքային՝ տարիքային, արտոնյալ պայմաններով, երկարամյա ծառայության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում տրվող, մասնակի, կենսաթոշակներ: Կենսաթոշակի իրավունք տվող պայմանները և շահառուների շրջանակը սահմանված են «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքով: ՄԳ համար ելակետային տարում՝ 2014թ.-ին աշխատանքային կենսաթոշակառուների թիվը կազմել է 453917 մարդ, իսկ աշխատանքային կենսաթոշակների վճարմանն ուղղված ֆինանսական միջոցները՝՝ 195.7 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 4.1%-ը: 2014թ.-ին միջին կենսաթոշակը կազմել է 30962 դրամ:

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի անձնագիրը պարունակում է ծրագրի գործունեության գնահատման համար կարևոր ցուցանիշների վերաբերյալ թիրախներն ու կանխատեսումները մշակելու հիմքերը (տես հավելված Բ:2): Հիմնական փաստաթղթերը, որոնք օգտագործվել են Ծրագրի որակական ու քանակական արդյունքների սահմանման համար հետևյալն են.

- ՀՀ Կառավարության 2014-25թթ.-ի Հեռանկարային զարգացման ծրագիր;
- ՀՀ կառավարության ծրագիր 2014թ.
- ՀՀ ՄԺԾԾ 2014-2016թթ; 2016-2018թթ.

Ծրագրի ընթացիկ և հեռահար նպատակները, ծրագրի խնդիրներն ու գործողությունները սահմանվել են հիմք ընդունելով «Պետական կենսաթոշակների մասին»» ՀՀ օրենքը և վերջինիս կիրարկումն ապահովող կառավարության որոշումները:

Այսպիսով ծրագրի ընթացիկ նպատակն է Պետական բյուջեի միջոցների հաշվին օրենքով սահմանված դեպքերում և կարգով ՀՀ քաղաքացիներին, ՀՀ երկքաղաքացիներին, օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց պետական աշխատանքային կենսաթոշակ տրամադրելը:

Ծրագրի հեռահար նպատակն է կենսաապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի պետական կենսաթոշակի նվազագույն չափ ապահովելը՝ կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության պայմաններում:

Համաձայն ՄԳ անձնագրի, Ծրագրի շրջանակում իրականացվում են հետևյալ գործողությունները՝

- Աշխատանքային կենսաթոշակի նշանակում
- Աշխատանքային կենսաթոշակի վերահաշվարկում
- Աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցում և վերականգնում
- Աշխատանքային կենսաթոշակի վճարման դադարեցում և վերսկսում
- Ծրագրի շրջանակներում իրականացվող այլ ծառայություններ:

Ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների շրջանակը մշակվել է հիմք ընդունելով Ծրագրի ՄԳ անձնագրում նշված գործողությունները և ծրագրի գործունեության հիմնական ոլորտները:

ԱԽ քննարկման արդյունքում և հիմք ընդունելով USAD/PRIP միջազգային փորձագետի առաջարկները, «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի անձնագրում առանձնացվեցին ծրագրի համար կարևոր 9 ոլորտներ՝

1. Համակարգի մասնակիցները և ժողովրդագրություն
2. Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի բեռը տնտեսության վրա
3. Ծախսերը (աշխատանքային կենսաթոշակների վճարման համար հատկացվող գումարներ)
4. Կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը
5. Աշխատանքային կենսաթոշակի թիրախավորումը
6. Կենսաթոշակային համակարգի գործունեության արդյունավետությունը
7. Աշխատանքային կենսաթոշակառուների բարեկեցությունը և եկամտի աղբյուրը
8. Կենսաթոշակառուների բավարարվածությունը մատուցվող ծառայություններից
9. Կենսաթոշակային համակարգի աջակցությունը հասարակության կողմից:

Նշված 9 ոլորտների համար ԱԽ անդամները մշակեցին **109 անուն ցուցանիշներ**, որոնք, եթե դիտարկվեն ըստ ենթախմբերի, օրինակ ըստ սեռի, կամ կենսաթոշակի տեսակի կամ բնակության վայրի, պահանջում են հավաքագրել **ավելի քան 470 ցուցանիշներ**:

Ծրագրի ՄԳ փաստաթղթերի և ցուցանիշների մասին ձևավորված առաջարկություններն ամփոփված են սույն հաշվետվության առաջին մասում՝ ՄԳ մեթոդաբանության մասով առաջարկությունների բաժնում:

1.2. «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների վերլուծությունը՝ ՄԳ հաշվետվություն

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ հաշվետվությունը պատրաստվել է ըստ սույն հաշվետվության առաջին մասի 2.1 բաժնում նշված բովանդակության.

- ✓ Նախաբան
- ✓ Ամփոփագիր, որը տալիս է ՄԳ անձնագրի հարցադրումների ամփոփ պատասխանը և այն հատվածն է, որ պետք է տրամադրվի ՀՀ ԱՍՀ նախարարին,
- ✓ Հիմնական մաս՝ որը մանրամասն վերլուծում է ՄԳ 9 ոլորտների տեղեկատվությունը,
- ✓ Առաջարկություններ, որտեղ նշվում են ծրագրի վերաբերյալ առաջարկությունները։

Նախաբան

Կենսաթոշակային եկամտի տրամադրումը կարևորագույն և չափազանց զգայուն սոցիալական խնդիր է Հայաստանի Հանրապետության համար։ Պետական բյուջեից ծրագրին հատկացվող ֆինանսավորման չափերով «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագիրը համարվում է Հայաստանի սոցիալական պաշտպանության համակարգի ամենամեծ ծրագիրը։ Ծրագրին հատկացվող ֆինանսական միջոցները տարեկան կազմում են երկրի համախառն ներքին արդյունքի 4.1-4.2 տոկոսը։

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի արդյունքների վրա հիմնված մշտադիտարկումն ու գնահատումը հնարավորություն կընձեռի Ծրագրի գործունեության և արդյունքների մասին տեղեկատվության հավաքագրման ու վերլուծության միջոցով հետևել Ծրագրի հեռահար և ընթացիկ նպատակներին հասնելու ընթացքին, Ծրագրի անձնագրում տեղ գտած որակական և քանակական ցուցանիշների վերլուծության միջոցով հասկանալ, արդյոք Ծրագրի իրականացումը բերում է նախանշված արդյունքների և եթե ոչ, ապա որոնք են հիմնական խոչընդոտները, գնահատել Ծրագրի ազդեցությունը, վեր հանել Ծրագրի արդյունավետության ապահովման հնարավոր ռիսկերն ու խոչընդոտները և ժամանակին մշակել ու իրականացնել միջոցառումներ՝ նախանշված նպատակներին հասնելու համար։

Մշտադիտարկման ցուցանիշների վերլուծությունն իրականացվել է հետևյալ տրամաբանությամբ. ներկայացվել է Ծրագրի իրականացման ընթացքը, տրվել են մեկնաբանություններ նախանշված թիրախներից շեղումների և դրանց պատճառների վերաբերյալ, ներկայացվել են կենսաթոշակային ապահովության քաղաքականության իրականացման և Ծրագրի արդյունավետության գնահատման տեսանկյունից առավել կարևոր ցուցանիշներն ու դրանց միջոցով կատարվել է Ծրագրի ամփոփ գնահատում։

Ելնելով Ծրագրի՝ մշտադիտարկման անձնագրում նշված հեռահար և ընթացիկ նպատակներից, Ծրագրի գնահատումը կատարվել է հետևյալ հարցադրումների շրջանակում.

- որքանո՞վ է Ծրագրի իրականացումը նպաստում կանխելու կենսաթոշակառուների շրջանում աղքատության խորացումը կամ իսպառ հաղթահարելուն, որպես չափանիշ ընդունելով նվազագույն և միջին աշխատանքային կենսաթոշաների և նվազագույն սպառողական զամբյուղի հարաբերակցությունը,
- արդյո՞ք Ծրագրի շրջանակում ապահովվում է արժանապատիվ կենսամակարդակ կենսաթոշակառուների համար, որպես չափանիշ ընդունելով փոխհատուցման գործակցը,
- պահպանվու՞մ է արդյոք սերունդների միջև արդարությունը՝ ինչը կարևորվում է հատկապես ժողովրդագրական վիճակի փոփոխությունների ֆոնին, քանի որ խոսքը վերաբերում է սերունդների միջև կենսաթոշակի տրամադրման ֆինանսական բեռը կրելուն: Որքանո՞վ է գործող կենսաթոշակային համակարգը կարողանում կիսել այդ բեռը ներկա և գալիք սերունդների միջև՝ դիտարկելով կենսաթոշակային տարիքը, կենսաթոշակառուների կենսամակարդակը և այլն,
- ինչպիսի՞ն է ֆինանսական կայունության ապահովումը՝ հաշվի առնելով համակարգին հատկացումներ կատարողների և համակարգի ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը:

Այսպիսով, վերլուծության նպատակն է գնահատել կենսաթոշակային համակարգի արդյունավետությունը՝ ելնելով ֆինանսական կայունության ապահովման պայմաններում արդար և համարժեք կենսաթոշակներ տրամադրելու հնարավորություններից, նկատի ունենալով ինչպես երկրի սոցիալ-տնտեսական, այնպես էլ համակարգի վարչարարության բարելավման, տեղեկատվական տեխնոլոգիաների կատարելագործման, ծառայությունների մատուցման որակի բարելավման ընձեռած հնարավորությունները:

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի գնահատման ամփոփագիրը

Ծրագրի ՄԳ հաշվետվության ամփոփագիրը կազմվել է՝ հաշվի առնելով Ծրագրի ՄԳ անձնագրում նշված՝ ընթացիկ և հեռահար նպատակները, Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները:

Հայաստանի տնային տնտեսությունների գրեթե կեսը՝ 48-49 տոկոսն ունի առնվազն մեկ անդամ, ով ստանում է աշխատանքային կենսաթոշակ, ուստի կենսաթոշակային քաղաքականության ցանկացած փոփոխություն անմիջապես իր արձագանքն է ստանում Հայաստանի յուրաքանչյուր երկրորդ ընտանիքում:

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ընթացիկ նպատակն է պետական բյուջեի միջոցների հաշվին օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական աշխատանքային կենսաթոշակ **տրամադրելը:**

Աշխատանքային կենսաթոշակառուները 2015թ.-ին կազմել են ՀՀ աշխատունակ տարիքի և աշխատունակ տարիքից բարձր տարիքի բնակչության 18.5%-ը Կենսաթոշակառուների գերակշռող մեծամասնությունը՝ **65.9%-ը 2015թ.-ին ստացել** է տարիքային աշխատանքային կենսաթոշակ, հաջորդ խոշոր խումբը կազմել են հաշմանդամության կենսաթոշակառուները՝ 27.7%, կերակրողին կորցնելու կենսաթոշակառուների բաժինը կազմել է 2.3%, վաղաժամկետ կենսաթոշակառուները (արտոնյալ, երկարամյա, մասնակի)՝ 4.1%: Կենսաթոշակառուների թվաքանակի՝ ըստ կենսաթոշակի տեսակների, տեսակարար կշիռները 2012-2015թթ. ընթացքում էական փոփոխությունների չեն ենթարկվել: Բացառություն են կազմում երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակառուների թվաքանակները՝ 2012-2015թթ. ընթացքում նրանց բացարձակ թվաքանակի և տեսակար կշիռների նվազումը պայմանավորված է համապատասխան մասնագիտություններով և պաշտոններում աշխատողների թվաքանակի կրճատմամբ:

1990 թվականից ի վեր ՀՀ բնակչության տարիքային կազմում տեղի են ունեցել հասարակության ծերացման մասին վկայող էական փոփոխություններ. **65 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում 2014 թվականին 1990թ. համեմատ գրեթե կրկնապատկվել է՝ 5.6%-ից հասնելով 10.6%-ի:** Բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխությունը բերել է բնակչության խնամառության գործակցի (65+/15-64 տարեկան բնակչության թվաքանակի հարաբերակցության) փոփոխման՝ այս գործակիցը 1990թ. համեմատ նույնպես ավելացել է մոտ 2 անգամ՝ 8.7% -ից հասցնելով 15.1%-ի:

Կենսաթոշակային համակարգի խնամառության գործակիցը (ընդամենը կենսաթոշակառուների թվաքանակ/ընդամենը հատկացում կատարողների թվաքանակ հարաբերակցություն)[1], 2012-2015թթ. ընթացքում եղել է հարաբերականորեն կայուն (ըստ տարիների այն տատանվում է 0.78-ից 0.83-ի սահմաններում) և վկայում է այն մասին, որ մեկ

[1] Խնառության գործակցի միջազգայնորեն ընդունված սահմանման համաձայն, համակարգի խնամառության գործակիցը կենսաթոշակառուների և համակարգին հատկացումներ կատարողների (ովքեր հատկացումներ կատարելու արդյունքում ձեռք են բերում կենսաթոշակ ստանալու իրավունք) թվաքանակների հարաբեռրակցությունն է (OECD, Glossary of Statistical Terms, https://stats.oecd.org/glossary/detail.asp?ID=5303):

կենսաթոշակառուի կենսաթոշակը ֆինանսավորում է համակարգին հատկացում կատարող մոտավորապես մեկ քաղաքացի[2], մինչդեռ համակարգի ֆինանսական կայունության ապահովման համար, միջազգային փորձի համաձայն, մեկ կենսաթոշակառուի հաշվով անհրաժեշտ է առնվազն 3 հատկացում կատարող (ինչի դեպքում խնամառության գործակիցը կկազմեր 0.33%)։ Իրավիճակն ավելի վատ է **սահմանային խնամառության գործակցի** (նոր կենսաթոշակառուներ/նոր հարկատուներ թվաքանակների հարաբերակցության) դեպքում՝ 2012-2015թթ. այն տատանվել է 1.52-1.76-ի սահմաններում։ Սա վկայում է այն մասին, որ յուրաքանչյուր տարի կենսաթոշակառուների շարքերը համալրող նոր կենսաթոշակառուների թվաքանակն ավելի մեծ է, քան աշխատանքի շուկա նոր մուտք գործողները։

Հետևաբար, եթե հայաստանյան կենսաթոշակային համակարգը ֆինանսավորվեր միայն եկամտային հարկից ստացվող մուտքերի հաշվին, ապա կունենար ֆինանսական կայունության լուրջ խնդիր։ Սակայն նույնիսկ պետական բյուջեի ընդհանուր մուտքերի հաշվին ֆինանսավորվելու դեպքում էլ խնդիր է մնում կենսաթոշակների համարժեք մակարդակի ապահովումը։

Տարեցտարի կենսաթոշակ տրամադրելը դառնում է ավելի «թանկ» ինչպես 63 տարեկանում կյանքի սպասվող տևողության մասնակի բարելավման, այնպես էլ տարիքային կենսաթոշակի անցնելու՝ օրենքով սահմանված տարիքի (63 տարեկան) և կենսաթոշակի անցնելու փաստացի տարիքների (պայմանավորված վաղաժամկետ կենսաթոշակի անցնելու հնարավորությամբ) խզման պատճառով. տարիքային աշխատանքային կենսաթոշակի օրենքով սահմանված տարիքը աշխատանքային կենսաթոշակի անցնելու փաստացի տարիքից բարձր է՝ տղամարդկանց մոտ 0.6, իսկ կանանց մոտ 1.3 տարով։ Կենսաթոշակառուների ամենամեծ խմբի՝ տարիքային աշխատանքային կենսաթոշակառուների (կենսաթոշակառուների 66%-ը) կենսաթոշակ ստանալու միջին տևողությունը 2012-2015թթ.նշանակալիորեն բարելավվել է. կանանց մոտ 2012թ. 18.6-ից՝ 2015թ. հասել է 24.5 տարվա, իսկ տղամարդկանց մոտ՝ 12.6-ից 17.1 տարվա համապատասխանաբար։

Կենսաթոշակային ցանկացած, և հատկապես սերունդների համերաշխության սկզբունքի վրա հիմնված համակարգի ֆինանսական կայունության հիմքը համակարգին հատկացումներ կատարող զբաղված քաղաքացիներն են։ Եթե չեն ապահովվում անհրաժեշտ ծավալի հարկային մուտքեր, ապա պետության համար դժվարանում, երբեմն էլ անհնար է դառնում իր կողմից արդեն տրված (կենսաթոշակի հաշվարկման բանաձևի միջոցով) կենսաթոշակային խոստումների բավարարումը։ 2015թ, ըստ նախնական տվյալների, ՀՀ տնտեսության մեջ զբաղված է եղել տնտեսապես ակտիվ բնակչության 80.2%-ը, որից միայն 55.3%-ն է կատարել կենսաթոշակային հատկացումներ՝ վճարել եկամտային հարկ[3]։

---

[2] Համակարգին հատկացում կատարողների թվաքանակ/կենսաթոշակառուների թվաքանակ հարաբերակցությունը նույն երևույթը դիտարկում է հակառակ ծայրից՝ համակարգին հատկացում կատարող 1.2-ից 1.3 քաղաքացի, ըստ առանձին տարիների, ֆինանսավորում է մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակը։

[3] Փաստարկը, թե հատկացումներ կատարողները չեն ձևավորում կենսաթոշակային իրավունք, հետևաբար ապագայում էլ համակարգից չեն ստանալու կենսաթոշակ ուստի կնվազի համակարգի ֆինանսական բեռը, թույլ է երկու պատճառով. նախ որ եկամտային հարկ չվճարող քաղաքացիների հանդեպ պետությունը նույնպես ունի

Թեև 2012-2015թթ ընթացքում համակարգին հատկացումներ կատարողների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում ավելացել է 8.5 տոկոսային կետով, այդուհանդերձ կենսաթոշակային համակարգում ընդգրկվածության մակարդակն ունի բարելավման պոտենցիալ. զբաղված բնակչության 44.7%-ը դուրս է մնացել կենսաթոշակային համակարգից (գյուղացիական տնտեսությունում և/կամ ոչ ֆորմալ այլ զբաղված լինելու պատճառով) և չի ձևավորում կենսաթոշակային իրավունք: **Մինչդեռ կենսաթոշակային ցանկացած համակարգ պետք է տրամադրի իրավական կարգավորման այնպիսի շրջանակ, որը բոլոր քաղաքացիներին հավասարաչափ հնարավորություն կընձեռի ակտիվ աշխատանքային կյանքի ընթացքում կուտակել բավարար կենսաթոշակային իրավունք**: Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրումը մասամբ է միայն լուծում քաղաքականության այս բացը: Կուտակային կենսաթոշակային 3-րդ բաղադրիչը թեև հնարավորություն է տալիս ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող կամ գյուղացիական տնտեսության մեջ զբաղված քաղաքացիներին իրականացնելու կամավոր կուտակային կենսաթոշակային խնայողություններ, սակայն արդեն մոտ 4 տարի գործող կամավոր կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների թվաքանակը 2016թ. մարտի վերջի դրությամբ կազմել է ընդամենը 816 մարդ: Վերջիններիս մասնակցությունը հիմնականում կամ համաֆինանսավորվում կամ ամբողջությամբ կատարվում է գործատուների կողմից: Սա նշանակում է, որ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակում տրամադրվող հարկային արտոնությունները բավարար չեն կամավոր կենսաթոշակային խնայողությունները խրախուսելու համար: Ցածր է նաև բնակչության իրազեկվածության և որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ գիտելիքի մակարդակը[4]:

Աշխատանքային կենսաթոշակների ֆինանսավուրումը Հայաստանում իրականացվում է պետական բյուջեի ընդհանուր մուտքերի հաշվին: Կենսաթոշակների ֆինանսավորմանն են ուղղվում սոցիալական ոլորտի համար հատկացվող ֆինանսական միջոցների ավելի քան 30%-ը, բյուջեի ընդամենը ծախսերի 16%-17%-ը և ՀՆԱ-ի մինչև 4.4%-ը:

Տնտեսության վրա կենսաթոշակների ֆինանսավորման բեռն ունի աճի միտում՝ պայմանավորված հասարակության ծերացմամբ: Միջազգային առանձին փորձագիտական գնահատականների համաձայն, հանրային ծախսերը կենսաթոշակների վրա՝ պայմանավորված կյանքի սպասվող տևողության բարելավմամբ, մոտակա հիսուն տարիների ընթացքում կավելանան ՀՆԱ-ի 1.5%-ից 2%-ով, նույնիսկ այն դեպքում, եթե հաշվի առնվեն հասարակության ծերացման ազդեցությունը մեղմող այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշխատուժի տնտեսական ակտիվության (ի հաշիվ զբաղվածության աճի) և կենսաթոշակային համակարգում ընդգրկվածության մակարդակների բարելավումը:

պարտավորություն և նրանց տրամադրելու է համապատասխան նպաստ, և երկրորդ՝ կենսաթոշակային համակարգի այդ թվացյալ բեռի թեթևացումը բեռ է ավելացնում սոցիալական պաշտպանության մեկ այլ ոլորտի՝ նպաստների համակարգի վրա:

[4] 2013թ.-ին ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) կողմից ֆինանսավորվող Կենսաթոշակային Բարեփոխումների Իրականացման Ծրագրի (PRIP) շրջանակներում իրականացված Կենսաթոշակային և սոցիալական ծառայությունների համակարգերի բարեփոխումների վերաբերյալ հանրային տեղեկացվածության, ընկալման եւ վերաբերմունքի ելակետային հետազոտություն:

ՀՀ աշխատանքային ռեսուրսների մոտ 28%-ը, իսկ զբաղված բնակչության 55%-ն է միայն ընդգրկված համակարգում, այսինքն՝ կատարում հատկացումներ համակարգին: **Կենսաթոշակային համակարգում բնակչության համարժեք ընդգրկվածության ապահովումը Հայաստանում կենսաթոշակային քաղաքականության լրջագույն մարտահրավերներից է:** Կենսաթոշակային համակարգում բնակչության ընդգրկվածության համարժեք մակարդակի ապահովումը համակարգի վարչարարության արդյունավետության ներկայիս բարձր մակարդակի պայմաններում կարող էր ապահովել հանրային ֆինանսների առավել արդյունավետ օգտագործում:

Եկամտային հարկ վճարողների թվաքանակի վերաբերյալ անհրաժեշտ ձևաչափով տեղեկատվության ստացումը թույլ կտա կատարել առավել համակողմանի վերլուծություն և իրատեսական կանխատեսումներ ինչպես հարկ վճարողների, այնպես էլ հարկային մուտքերի վերաբերյալ: Կարևորվում է նշված տեղեկատվությունը տրամադրող կառույցի/կառույցների հետ գործընկերային հարաբերությունների կառուցումը և անհրաժեշտ պարբերականությամբ ու ձևաչափով տեղեկատվության ստացումը:

Կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման համար հատկացված միջոցների 99%-ն ուղղվում է աշխատանքային կենսաթոշակների վճարմանը, մնացած 1%-ի հաշվին ֆինանսավորվում են համակարգի աշխատողների աշխատավարձի, իրազեկման և այլ վարչական ծախսերը:

Վարչական ծախսերի գերակշռող մասն ուղղվում է համակարգի աշխատողների աշխատավարձի ֆինանսավորմանը: Ընդ որում, աշխատավարձի ֆինանսավորման ծախսերի բաժինը 2012-2015թթ. դրսևորել է անընդհատ աճի միտում. 2012թ. 74%-ից 2015թ. այն հասել է 85%-ի: **Համակարգի իրազեկման աշխատանքների ֆինանսավորմանն ուղղվող առանց այն էլ աննշան միջոցները (0.1-0.6% 2012-2014թթ.) 2015թ. ընդհանրապես զրոյացվել են:**

Աշխատանքային կենսաթոշակների վճարման ծախսերի գերակշռող մասը՝ 69.2%-ը 2014թ. բաժին է ընկել կենսաթոշակառուների ամենամեծ խմբի՝ տարիքային կենսաթոշակառուների կենսաթոշակների ֆինանսավորմանը, ծախսերի մյուս խոշոր հոդվածը հաշմանդամության կենսաթոշակների ֆինանսավորման ծախսերն են՝ 25.7%, մնացած 5.1%-ը բաժին է ընկնում այլ տեսակի կենսաթոշակների ֆինանսավորմանը: **Մեկ կենսաթոշակառուի հաշվով կենսաթոշակային ծախսերն ամենաբարձրն են երկարամյա ծառայության կենսաթոշակառուների համար, իսկ ամենացածրը՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակառուների համար:**

Կենսաթոշակային համակարգի ծախսը մեկ կենսաթոշակառուի հաշվով 2012թ. -ից ի վեր աճի միտում է դրսևորել՝ 377.7 հազար դրամից 2015թ. հասնելով 482.4 հազար դրամի կամ ավելանալով 27.7%-ով: Աճի միտում են դրսևորել նաև մեկ հարկատուի հաշվով համակարգի մուտքերը՝ համապատասխանաբար 402.6 և 515.7 հազար դրամ կամ 28.1%-ով:

2012թ. համեմատ 2015թ.-ին մեկ կենսաթոշակառուի հաշվով ծախսերի և մեկ հարակատուի հաշվով մուտքերի աճի տեմպերը բավական մոտ են եղել, սակայն պատկերն այլ էր 2013 և 2014 թվականներին. **2012թ. համեմատ, 2013թ. և 2014թ. մեկ հարկատուի հաշվով հարկային մուտքերի աճի տարեկան տեմպերն ավելի բարձ են եղել (11.6% և 22.6% համապատասխանաբար), քան մեկ կենսաթոշակառուի հաշվով**

կենսաթոշակային ծախսերի աճի տարեկան տեմպերը (-0.5% և 14.7% համապատասխանաբար): Դա էլ նպաստել է, որ 2012-2015թթ. ընթացքում կենսաթոշակային համակարգի խնամառության համեմատաբար կայուն մակարդակի պայմաններում, կենսաթոշակային համակարգի հաշվեկշիռը՝ եկամտային հարկից ստացվող մուտքերի և կենսաթոշակային համակարգի ծախսերի տարբերությունը, լինի դրական:

Կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության և տրամադրվող կենսաթոշակների համարժեքության տեսանկյունից հետաքրքրություն է ներկայացնում մեկ կենսաթոշակառուի հաշվով ծախսեր/մեկ հարկատուի հաշվով մուտքեր հարաբերակցությունը: **Ըստ առանձին տարիների մեկ հարկատուի կողմից կատարված եկամտահարկի հատկացումների 84%-ից 95%-ն ուղղվել է մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակային ծախսը ֆինանսավորելուն:** Հետևաբար, կարելի է պնդել, որ կենսաթոշակային համակարգի «ֆինանսական կայունությունը» վտանգված է նույնիսկ տրամադրվող ոչ բարձր կենսաթոշակների պարագայում:

Այսպիսով կենսաթոշակային համակարգի «վճարունակության» ընդլայնման և ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից կարևորվում է համակարգի ֆինանսական մուտքերի վրա ազդող երեք հիմնական գործոններից յուրաքանչյուրի՝ 1) **հատկացումներ կատարողների թվաքանակ, 2) աշխատավարձերի մակարդակ և 3) հատկացումների դրույքաչափ**, դերի բարձրացմանը նպաստող խթանիչ մեխանիզմների հստակեցումն ու կիրառումը (խոսքը ֆորմալ զբաղվածության դերի և փաստացի վճարվող աշխատավարձերի թափանցիկության, ինչպես նաև համակարգին հատկացումներ կատարողների թվաքանակի ավելացման մասին է):

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի հեռահար նպատակն է ապահովել կենսապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի պետական կենսաթոշակ, միաժամանակ ապահովելով համակարգի ֆինանսական կայունությունը:

Կենսաթոշակային եկամտի չափի համեմատումը նվազագույն սպառողական զամբյուղի, աղքատության գծի ու ծայրահեղ աղքատության գծի հետ (կենսաթոշակի չափի համարժեքություն նեղ իմաստով) թույլ է տալիս հասկանալ, թե որքանով է կենսաթոշակային եկամուտը թույլ տալիս բավարարել անձի հիմնական կարիքները, որքանով է այն կանխարգելում կամ մեղմում աղքատությունը: **Արդեն 2012թ.-ին տրամադրվող աշխատանքային կենսաթոշակները 23.1%-ով գերազանցել են ծայրահեղ կամ պարենային աղքատության գիծը և կենսաթոշակների անընդհատ ավելացման արդյունքում կենսաթոշակ/ծայրահեղ աղքատության գիծ հարաբերակցությունը 2015թ. կազմել է 150.7%:** Սակայն հիմնական կարիքների բավարարման և տարեցների շրջանում աղքատության կանխարգելման իմաստով աշխատանքային միջին կենսաթոշակը հեռու է համարժեք լինելուց. միջին կենսաթոշակ/աղքատության գիծ հարաբերակցությունը 2012թ-ի 69.5%-ից 2015թ. հասել է 85.2%-ի, իսկ միջին կենսաթոշակ/ՆՍԶ հարաբերակցությունը կազմել է 60% և 75.8% համապատասխանաբար:

Սերունդների համերաշխության սկզբունքի վրա հիմնված կենսաթոշակային համակարգը Հայաստանում չի երաշխավորում անհատի անձնական եկամտին/ կատարած հատկացումներին համարժեք փոխհատուցում (համարժեքություն լայն իմաստով), այն ուղղված է նվազագույն կարիքների բավարարմանը, թեև կենսաթոշակների փաստացի

մակարդակն այսօր չի ապահովում նաև նեղ իմաստով այդ համարժեքությունը: Կենսաթոշակային ծախսերը, կազմելով սոցիալական ապահովության համակարգի ծախսերի ամենամեծ հոդվածը, չեն կարողանում մեղմել սպառման կտրուկ անկումը կենսաթոշակի անցնելիս:

Նախքան կենսաթոշակի անցնելն ունեցած կենսամակարդի ապահովման և սպառման կրճատումը մեղմելու տեսանկյունից տրամադրվող կենսաթոշակները շարունակում են մնալ ցածր և հեռու համարժեք լինելուց: Փոխհատուցման գործակիցը, հաշվարկած որպես միջին կենսաթոշակ/միջին անվանական աշխատավարձ հարաբերակցություն (ՓԳաս), 2012թ. 27.6%-ից 2015թ. իջել է մինչև 22.3%: Քանի որ աշխատանքային կենսաթոշակը չհարկվող՝ տնօրինվող եկամուտ է, ուստի ավելի նպատակահարմար է դիտարկել փոխհատուցման գործակիցը, հաշվարկած որպես միջին կենսաթոշակ/միջին տնօրինվող աշխատավարձ հարաբերակցություն (ՓԳտս): **Թեև ՓԳտս-ն մի փոքր ավելի բարձր է, քան ՓԳաս-ն (2012թ. այն կազմել է 36.5%, իսկ 2015թ.՝ 29.8%), այնուամենայնիվ կենսաթոշակի անցնելուց հետո կենսաթոշակառուն ստիպված է, այնուամենայնիվ, իր սպառումը կրճատել 70-75%-ով:**

Աշխատանքային կենսաթոշակի բաղադրիչներից է հիմնական կենսաթոշակը (ՀԿ): **Ընդհանրապես, ՀԿ-ի նպատակը նվազագույն կենսամակարդակի ապահովումն է** և աղքատության հաղթահարումը տարեցների շրջանում: **Հիմնական կենսաթոշակի ներկա մակարդակն ակնհայտորեն հեռու է նվազագույն կենսամակարդակի ապահովման համար բավարար լինելուց՝ թեև 2015թ.-ին այն 2014թ. համեմատ աճել է այնուամենայնիվ կազմում է ընդամենը ՆՍԶ 58.5%-ը:**

Կենսաթոշակային համակարգի ֆինանսավորմանն ուղղվող միջոցների ներկա մակարդակի պայմաններում տրամադրվող աշխատանքային կենսաթոշակները թե՛ նեղ (ՆՍԶ հետ համեմատելու դեպքում՝ հիմնական կարիքների բավարարում) և թե՛ լայն (տնօրինվող աշխատավարձի հետ համեմատելու դեպքում՝ անհատական սպառման կրճատման մեղմում կենսաթոշակի անցնելուց հետո) իմաստով չի կարելի համարել համարժեք:

Կենսաթոշակային համակարգը հավասարակշռված է, եթե համակարգի մուտքերն ու ծախսերը հավասար են: Հաշվարկները ցույց են տալիս, որ այսօր ՀՀ կենսաթոշակային համակարգի մուտքերը (եթե պայմանականորեն ընդունենք, որ դա եկամտային հարկի հավաքագրումից ստացված մուտքերն են) և ծախսերը հնարավոր կլիներ հավասարակշռել (2014թ. կենսաթոշակի միջին չափը անփոփոխ պահելու դեպքում) եկամտային հարկի 17% միջին դրույքաչափի (հաշվարկած միջին աշխատավարձի համար[5]) պարագայում: Հետևաբար, կարելի է ասել, որ եկամտային հարկի այսօր գործող փաստացի միջին 25.9% դրույքաչափի 17%-ն ուղղվում է կենսաթոշակների ֆինանսավորմանը, իսկ մնացած 8.9%-ն ուղղվում է սոցիալական կամ ոչ սոցիալական այլ ծրագրերի ֆինանսավորմանը:

---

[5] Եկամտային հարկի միջին դրույքաչափերը հաշվարկվել են միջին աշխատավարձի համար: Հաշվարկներն առավել ճշգրիտ կլինեին, եթե մեր տրամադրության տակ ունենայինք եկամտային հարկ վճարողների՝ ըստ աշխատավաձի չափի, թվաքանակի վերաբեյալ տեղեկատվությունը:

Ընդհանրապես, կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության խնդրի լուծումը հակազդում է կենսաթոշակների համարժեքության ապահովմանը։ Հաշվարկների համաձայն, **եթե նույնիսկ հավաքագրված ամբողջ եկամտային հարկն այսօր Հայաստանում ուղղվեր աշխատանքային կենսաթոշակների վճարմանը, միևնույնն է հաղթահարելի առավելագույն փոխահատուցման գործակիցը միջին աշխատավարձ ստացողների համար չէր գերազանցի 35%-ը**, իսկ միջին աշխատավարձից բարձր աշխատավարձ ստացող մասնակիցների համար ՓԳ-ը կլիներ անհամեմատ ավելի ցածր։

Կատարված մեկ այլ հաշվարկի համաձայն աշխատանքային միջին կենսաթոշակը բարձրացնելու և անվանական աշխատավարձի նկատմամբ 40% ՓԳ ապահովելու համար, աշխատավարձի 2014թ. մակարդակը հաստատուն պահելու դեպքում, կարիք կլինի.

- կամ եկամտային հարկ վճարողների թվաքանակը պահել հաստատուն և եկամտային հարկի միջին դրույքաչափը բարձրացնել մինչև 30%, ինչն անընդունելի է, քանի որ հարկերի դրույքաչափի բարձրացումը կարող է ճիշտ հակառակ ազդեցությունն ունենալ համակարգի մուտքերի վրա՝ բերել դրանց կրճատման և ստվերի ավելացման,
- կամ եկամտային հարկի միջին դրույքաչափը պահել հաստատուն, իսկ եկամտային հարկ վճարողների թվաքանակը՝ 2014թ. 611.1 հազարից ավելացնել մինչև 707.3 հազարի՝ բարձրացնելով համակարգում մասնակցության մակարդակը։

Հետևաբար, աշխատանքային կենսաթոշակների բարձրացման և համարժեքության տեսանկյունից ընդունելի ՓԳ ապահովելու նպատակով կարևորվում է համակարգում ընդգրկվածության մակարդակի բարձրացումը՝ եկամտային հարկ վճարողների թվաքանակի ավելացումը(տես նաև ներդիր 8)։

«ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ» ԾՐԱԳԻՐ.

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ ՄԳ ՀԻՄՆԱԿԱՄՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

ՑՈՒՑԱՆԻՇ	*ԴԻՆԱՄԻԿԱ* (*-ով նշված են ցուցանիշի՝ կանխատեսմամբ/գնահատմաբ ստացված արժեքները)
	I. ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Բնակչության խնամառության գործակից (63+ բնակչություն/16-62 տարեկան բնակչություն հարաբերակցությունը)	*2012թ.* / *2013թ.* / *2014թ.* / *2015թ.** *17.8%* / *18.3%* / *18.8%* / *18.9%*
Կենսաթոշակային համակարգի խնամառության գործակից (կենսաթոշակառուներ/եկամտային հարկ վճարողներ հարաբերակցություն)	*2012թ.* / *2013թ.* / *2014թ.* / *2015թ.** 82.5% / 74.3% / 75.0% / 74.4%
Կյանքի սպասվող տևողությունը ծննդից, տարի	

	2012թ.	*2013թ.*	*2014թ.*	*2015թ.**
Կին	77.5	77.9	78.1	77.8
Տղամարդ	70.9	71.5	71.8	71.3

Կյանքի սպասվող տևողությունը 63 տարեկանում, տարի

	2012թ.	*2013թ.*	*2014թ.*	*2015թ.**
Կին	18.4	18.5	18.9	19.01
Տղամարդ	15.2	15.6	14.9	14.98

Կենսաթոշակ ստանալու միջին տևողությունը



Օրենքով սահմանված և փաստացի կենսաթոշակային տարիք

Աշխատանքային կենսաթոշակ վճարելը դառնում է ավելի «թանկ» ինչպես կյանքի սպասվող միջին տևողության բարելավման արդյունքում, այնպես էլ վաղաժամկետ կենսաթոշակի իրավունք տվող կենսաթոշակի տեսակների առակայությամբ, ինչը բերել է կենսաթոշակի անցնելու օրենքով սահմանված և փաստացի տարիքների խզման. կենսաթոշակի անցնելու փաստացի տարիքն օրենքով սահմանված տարիքից ցածր է՝ տղամարդկանց մոտ 0.6, իսկ կանանց մոտ 1.3 տարով:

<table>
<tr><th>ՑՈՒՑԱՆԻՇ</th><th>ԴԻՆԱՄԻԿԱ</th><th>ԳՆԱՀԱՏՈՒՄ</th></tr>
<tr><td colspan="3">II. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ</td></tr>
<tr><td>Կենսաթոշակառուների թվաքանակը</td><td> 
</td><td></td></tr>
<tr><td>Համակարգում ընդգրկվածության մակարդակը</td><td><table>
<tr><th></th><th>2012թ.</th><th>2013թ.</th><th>2014թ.</th><th>2015թ.*</th></tr>
<tr><td>Եկամտային հարկ վճարողներ/զբաղվածներ</td><td>46.8%</td><td>52.5%</td><td>53.9%</td><td>55.3%</td></tr>
<tr><td>Եկամտային հարկ վճարողներ/վարձու աշխատողներ</td><td>82.7%</td><td>91.8%</td><td>99.6%</td><td>96.5%</td></tr>
<tr><td>Եկամտային հարկ վճարողներ/ ոչ գյուղատնտեսական գործունեությամբ զբաղվածներ</td><td>74.5%</td><td>82.4%</td><td>82.7%</td><td>84.8%</td></tr>
</table></td><td>Կենսաթոշակային համակարգում բնակչության համարժեք ընդգրկվածության ապահովումը Հայաստանում կենսաթոշակային քաղաքականության լրջագույն մարտահրավերներից է:</td></tr>
<tr><td>Աշխատանքային միջին կենսաթոշակ</td><td><table>
<tr><th></th><th>2012թ.</th><th>2013թ.</th><th>2014թ.</th><th>2015թ.*</th></tr>
<tr><td>Դրամ</td><td>31,248</td><td>30,962</td><td>35,996</td><td>41,254</td></tr>
<tr><td>%-ով նախորդ տարվա նկատմամբ</td><td>108.9%</td><td>99.1%</td><td>116.3%</td><td>114.6%</td></tr>
<tr><td>%-ով 2012թ. նկատմամբ</td><td>100.0%</td><td>99.1%</td><td>115.2%</td><td>132.0%</td></tr>
</table></td><td>Ապահովում է աշխատանքային կենսաթոշակների շարունակական աճը, որը նպատակ ունի լուծելու համակարգի կարևորագույն խնդիրներից մեկը՝ աշխատանքային կենսաթոշակի ցածր մակարդակի հաղթահարում:</td></tr>
</table>

<table>
<tr><th>ՑՈՒՑԱՆԻՇ</th><th>ԴԻՆԱՄԻԿԱ</th><th>ԳՆԱՀԱՏՈՒՄ</th></tr>
<tr><td rowspan="2">Աշխատանքային միջին կենսաթոշակի համարժեքություն</td><td>
Հիմնական կարիքների բավարարման տեսանկյունից
<table>
<tr><th></th><th>2012թ</th><th>2013թ</th><th>2014թ.</th><th>2015թ.*</th></tr>
<tr><td>Միջին կենսաթոշակ/ՆՍԶ</td><td>60.0%</td><td>55.1%</td><td>62.1%</td><td>75.8%</td></tr>
<tr><td>Միջին կենսաթոշակ/աղքատության գիծ</td><td>69.5%</td><td>64.7%</td><td>73.4%</td><td>85.2%</td></tr>
<tr><td>Միջին կենսաթոշակ/ծայրահեղ աղքատության գիծ</td><td>123.1 %</td><td>114.6 %</td><td>129.9%</td><td>150.7%</td></tr>
</table>
<table>
<tr><th></th><th>2012թ.</th><th>2013թ.</th><th>2014թ</th><th>2015թ.*</th></tr>
<tr><td>Հիմնական կենսաթոշակ (ՀԿ)/ՆՍԶ</td><td>25.0%</td><td>23.1%</td><td>24.2%</td><td>29.4%</td></tr>
<tr><td>ՀԿ/աղքատության գիծ</td><td>28.9%</td><td>27.2%</td><td>28.5%</td><td>33.0%</td></tr>
<tr><td>ՀԿ/ծայրահեղ աղքատության գիծ</td><td>51.2%</td><td>48.1%</td><td>50.5%</td><td>58.5%</td></tr>
</table>
</td><td>1. Աշխատանքային միջին կենսաթոշակի չափը գերազանցում է ծայրահեղ կամ պարենային աղքատության գիծը, սակայն հիմնական կարիքների բավարարման և տարեցների շրջանում աղքատության կանխարգելման իմաստով այն հեռու է համարժեք լինելուց։
2. ՀԿ նպատակը նվազագույն կենսամակարդակի ապահովումն է և աղքատության հաղթահարումը տարեցների շրջանում։ ՀԿ ներկայիս մակարդակը հեռու է նվազագույն կենսամակարդակի ապահովման համար բավարար լինելուց։</td></tr>
<tr><td>Սպառման կրճատումը մեղմելու տեսանկյունից
<table>
<tr><th></th><th>2012թ.</th><th>2013թ.</th><th>2014թ</th><th>2015թ*</th></tr>
<tr><td>Միջին կենսաթոշակ/անվանական աշխատավարձ</td><td>27.6%</td><td>21.1%</td><td>22.7%</td><td>22.3%</td></tr>
<tr><td>Միջին կենսաթոշակ/տնօրինվող աշխատավարձ</td><td>36.5%</td><td>28.0%</td><td>30.2%</td><td>29.8%</td></tr>
</table>
</td><td>Նախքան կենսաթոշակի անցնելն ունեցած կենսամակարդի անկումը և սպառման կրճատումը մեղմելու տեսանկյունից տրամադրվող կենսաթոշակները շարունակում են մնալ ցածր։</td></tr>
<tr><td colspan="3">Կենսաթոշակային քաղաքականությունն Հայաստանում կրում է ըղգծված վերաբաշխողական բնույթ՝ եկամուտների վերաբաշխումն ուղղված է աղքատության հաղթահարմանը։ 2014թ. աշխատանքային կենսաթոշակի հաշվարկման բանաձևի փոփոխության արդյունքում երկու անգամ կրճատվել է ծայրահեղ աղքատության գծից ցածր կենսաթոշակ ստացող շահառուների թվաքանակը, բայց աղքատության գծից ցածր կենսաթոշակ ստացողների թվաքանակն, ընդհակառակը, ավելացել է 26.1%-ով։</td></tr>
</table>

ՑՈՒՑԱՆԻՇ	ԴԻՆԱՄԻԿԱ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
	III. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ	
Աշխատանքային կենսաթոշակների ֆինանսավորման ծախսեր, %	 ՀՀ 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում նախանշած թիրախներ 	2015թ և 2016թ կենսաթոշակային համակարգին փաստացի տրամադրված ֆինանսական միջոցները նախանշված մակարդակից ցածր են եղել. - 2015թ -5.3%-ով, - 2016թ - 19.5%-ով: Հետևանքն այն է, որ համակարգը չի կարողացել ապահովել նաև նույն 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրում աշխատանքային միջին կենսաթոշակի թիրախավորված մակարդակին համարժեք կենսաթոշակի տրամադրում շահառուներին:

ՑՈՒՑԱՆԻՇ	ԴԻՆԱՄԻԿԱ	ԳՆԱՀԱՏՈՒՄ
	Տնտեսության վրա կենսաթոշակների ֆինանսավորման բեռն ունի աճի միտում: Վտանգված է կենսաթոշակային համակարգի «ֆինանսական կայունությունը». մեկ հարկատուի կողմից կատարված հատկացումների 88%-ը 2014թ և 95%-ը 2015թ ուղղվել է մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակի ֆինանսավորմանը:	
Ծախսերի կառուցվածքը		Վարչական ծախսերի գերակշռող մասն ուղղվում է համակարգի աշխատողների աշխատավարձի ֆինանսավորմանը: Իրազեկման ծախսերն աննշանից դարձել են զրո:

Եզրահանգում. Ժողովրդագրական իրավիճակի վատթարացումը՝ ծնունդների ցածր մակարդակը, կյանքի սպասվող միջին տևողության բարելավումն ու միգրացիոն տեղաշարժերը հանգեցնում են ՀՀ բնակչության ծերացման: Սա սպառնում է կենսաթոշակային համակարգի «ֆինանսական կայունությանը»:

Կենսաթոշակային գործող համակարգի «ֆինանսական կայունության» խնդրի լուծումը հակազդում է կենսաթոշակների համարժեքության ապահովման վրա: Նույնիսկ եթե հավաքագրված ամբողջ եկամտային հարկն ուղղվի աշխատանքային կենսաթոշակների վճարմանը, ապա հաղթահարելի առավելագույն փոխահատուցման գործակիցը չի կարող գերազանցել 35%-ը (կամ ՆՍԶ ընդամենը 92%-ը), ընդ որում միջին աշխատավարձից բարձր աշխատավարձ ստացող մասնակիցների համար ՓԳ-ը կլինի անհամեմատ ավելի ցածր, քանի որ սերունդների համերաշխության սկզբունքի վրա հիմնված կենսաթոշակային համակարգը չի երաշխավորում անհատի անձնական եկամտին համարժեք փոխհատուցում, այն ուղղված է նվազագույն կարիքների բավարարմանը:

Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքները

Ծրագրի ՄԳ անձնագրում ծրագրի արդյուքների գնահատման համար որպես որակական արդյունքներ առանձնացվել են՝

1. Աշխատանքային կենսաթոշակների նշանակման, վերահաշվարկման, դադարեցման և վերականգնման դեպքերում ծառայությունների մատչելիությունը աշխատանքային կենսաթոշակներ ստացող քաղաքացիների համար,
2. Իրենց կենսաթոշակի իրավունքի իրացման վերաբերյալ կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց իրազեկվածության բավարար մակարդակը,
3. Ծրագրի շահառուների բավարարվածության աստիճանը մատուցվող ծառայության որակից:

Այս բոլոր արդյուքների գնահատականը ստացվել է շահառուների շրջանում 2015թ.-ի հունիսին իրականացված ընտրանքային հետազոտության միջոցով[6]: Շահառուների գոհունակության աստիճանը մեծապես կախված է նաև ծրագրի շրջանակներում իրականացվող գործընթացների արդյունավետությունից: Հետևաբար այս երեք արդյունքերի գնահատումը փոխկապակցվել է ծրագրի վարչարարության ընթացիկ մշտադիտարկման ցուցանիշների վերլուծության և ծառայությունները ՀՀ քաղաքացիներին մատուցող անձնակազմի կողմից՝ ծառայությունների մատուցման համար ռեսուրսների առկայությանը տրված գնահատականների հետ:

Շահառուների գոհունակությունը բարձր է կենսաթոշակի նշանակման, վերահաշվարկման գործընթացներից, կենսաթոշակի իրավունքի վերականգման գործընթացից, ինչպես նաև կենսաթոշակի վճարման ժամկետներից, և ՀՀ ՍԱՊԾ տարածքային և կենտրոնական գրանսենյակներում ստացված խորհրդատվություններից ու ծառայությունների մատչելիությունից (գծապատկեր 1): Կենսաթոշակառուների դժգոհության հիմնական պատճառը կենսաթոշակի ցածր մակարդակն է:

Գծապատկեր 1: Շահառուների գոհունակությունը մատուցվող ծառայություններից, 2015թ. %



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ, կենսաթոշակառուների կարծիքի հետազոտություն, USAID/PRIP 2015թ.-ի հունիս

[6] Հետազոտությունն իրականացվել է 2015թ.-ի հունիսին՝ ԱՄ Փարթներս ընկերության կողմից՝ USAID/PRIP ծրագրի ֆինանսավորմամբ: Հարցումներին մասնակցել են 1000 կենսաթոշակառուներ:

2014-2015թթ.-ին կենսաթոշակի համար առաջին անգամ դիմած և առաջին անգամ կենսաթոշակ ստացող շահառուների տվյալները վկայում են, որ ավելի քան 90 տոկոսով բավարարվում են նրանց դիմումները: Գրեթե 96 տոկոս է կազմում նաև կենսաթոշակների վերահաշվարկման համար ստացված դիմումների նկատմամբ տվյալ տարում վերահաշվարկված կենսաթոշակների թիվը: ՀՀ ՍԱՊԾ կողմից ստացվող բողոք դիմումների նվազող վիճակագրությունը նույնպես վկայում է գործընթացների և շահառուների սպասարկման որակի բարելավման մասին: Աշխատանքային կենսաթոշակների նշանակման համար օրենքով սահմանված 10 օրյա ժամկետի փոխարեն, դիմումների մշակումը փաստացի տևում է շատ կարճ՝ ոչ աշխատանքային օրերը ներառյալ միջինում 4.6 օր:

Կենսաթոշակի իրավունքի դադարեցման դեպքերի վիճակագրությունը ակնհայտ ցույց է տալիս վերջին երեք տարիների ընթացքում համակարգում կատարված բարեփոխումների արդյունքը: Այսպես, 2013թ.-ի համեմատ 2015թ.-ին կենսաթոշակի իրավունքի դադարեցման դեպքերը նվազել են մոտ 12 տոկոսով: Եթե դիտարկման դաշտից հանենք կենսաթոշակառուի մահվան դեպքում կենսաթոշակի իրավունքի դադարեցման դեպքերը, որոնք գրեթե 79 տոկոսն են, և 12 տոկոս դեպքերը, որոնք օրենքով նախատեսված իրավասություններով են պայմանավորված, ապա մնացած 8 տոկոս դեպքերը հիմնականում վարչարարության հետ կապված պայմաններով են: Վերջիններիս մեջ **գրեթե 96 տոկոսով նվազել են «կենսաթոշակի իրավունքը կորցնելու կամ կենսաթոշակի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում.» կենսաթոշակի իրավունքի դադարեցման դեպքերը, ինչը վարչարարության բարելավման հիանալի օրինակ է**: Նոր ՏՏ համակարգը հնարավություն է տվել նաև բացահայտելու և կանխելու «աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձին հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում» չդադարեցված կենսաթոշակի վճարման դեպքերը, ինչպես նաև բացահայտել «անձին սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) կենսաթոշակ նշանակված լինելու դեպքերը»:

Միևնույն ժամանակ, կենսաթոշակի վճարման դադարեցման և վճարման վերսկսման դեպքերի վիճակագրության դիտարկումը ցույց է տալիս կենսաթոշակառուների շրջանում իրենց իրավունքների և պարտավորությունների մասին իրազեկվածության ցածր մակարդակը: **Կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքերի մեջ ավելի քան 47 տոկոսը կազմում են «սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու) դեպքում» կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքերը, որոնք 2014թ.-ի համեմատ ավելացել են 33 տոկոսով**: Այս խնդրի մասին բարձրաձայնել են նաև ՀՀ ՍԱՊԾ հետ վճարման ծառայություններ մատուցելու համար պայմանագիր ունեցող բանկերը՝ 2015թ.-ի դեկտեմբերին նրանց հետ ֆոկուս խումբ քննարկման ժամանակ, ինչպես նաև շահառուների շրջանում իրականացված հետազոտության արդյուքները: Բանկային քարտով կենսաթոշակ ստացողների 19 տոկոսը նշել են, որ սահմանված ժամկետում բանկ չներկայանալու պատճառով կասեցվել է իրենց կենսաթոշակի ստացումը:

ՄԳ արդյունքները ցույց են տալիս, որ Ծրագրի առավել թույլ կողմը դա իրազեկման աշխատանքներն են **«Իրենց կենսաթոշակի իրավունքի իրացման վերաբերյալ կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց իրազեկվածության մակարդակը»** բավական ցածր է. կենսաթոշակառուների 58 տոկոսը տեղյակ չէ, թե ինչպես է ձևավորվում իրենց կենսաթոշակը, ինչ բաղադրիչներ ունի, կենսաթոշակի չափի հաշվարկման սկզբունքերի մասին իրազեկվածությունը կազմում է 6 տոկոս, կենսաթոշակառուների 70 տոկոսը տեղյակ չէ կենսաթոշակի բաղադրիչների չափից: Կենսաթոշակի իրավունքի ձևավորման պայմանների մասին, այն է ֆորմալ աշխատանքի անհրաժեշտության մասին տեղյակ է ոչ կենսաթոշակառու հասարակության 70 տոկոսը, ընդ որում նրանց միայն 5 տոկոսն է տեղյակ ինչ բաղադրիչներով է հաշվարկվում կենսաթոշակը:

Միևնույն ժամանակ ուրախալի է, որ հարցման մասնակիցների **91 տոկոսը տեղյակ է թե որտեղից կարող է անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ կենսաթոշակի վերաբերյալ հարցերի դեպքում**. 45 տոկոսը նշել է ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինները, իսկ 20 տոկոսը համացանցը: Ծանոթ/բարեկամներից տեղեկատվություն ստանում է միայն 19 տոկոսը: Թեժ գծի մասին 2015թ.-ի հունիսի դրությամբ տեղյակ էր հարցման մասնակիցների միայն 13 տոկոսը, որը բավական բարձր է վարչական կառույցի թեժ գծի ծառայության մասին իրազեկվածության տեսակետից, հաշվի առնելով, որ թեժ գիծ ծառայությունը սոցիալական հարցերով սկսել էր ծառայություններ մատուցել միայն 2014թ-ից:

Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ, կենսաթոշակառուների կարծիքի հետազոտություն, USAID/PRIP 2015թ.-ի հունիս



Շահառուների գնահատականը կենսաթոշակների մասին հեռուստատեսությամբ ներկայացվող տեղեկատվությանը փաստում է, որ անգամ այդ աղբյուրով տեղեկատվությունը մատչելի չի տրամադրվում: Հեռուստատեսությամբ կենսաթոշակների մասին տեղեկությունները ներկայացվում են համառոտ և մակերեսային, շահառուները չեն կարողանում հասկանալ որ կենսաթոշակառուներին է վերաբերում տեղեկատվությունը կամ իրականում ինչպես է փոփոխվում օրինակ կենսթոշակի չափը և այլն: Հարցման մասնակիցներից և ոչ մեկը չէր նշել, որ տեղեկատվական նյութեր են վերցրել կամ տեսել ՀՀ

ՍԱՊԾ տարածքային բաժիններում՝ պատերին փակցված պաստառներ կամ այնտեղ առկա բրոշյուրներ կամ տեղեկատվական թերթիկներ:

Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի շրջանակում **«Ծրագրի շահառուների բավարարվածության աստիճանը մատուցվող ծառայության որակից»** բավական բարձր է.

ՍԱՊԾ տարածքային բաժիններում կենսաթոշակառուների նկատմամբ վերաբերմունքն արժանացել է շահառուների բարձր գնահատականին: Նրանք հատկապես նշել են ՍԱՊԾ աշխատողների բարեհամբույր սպասարկումը, մասնագիտական հմտությունների բարձր մակարդակը, աշխատանքի արագությունը: Սակայն դեռևս կան աշխատողներ, որոնց աշխատանքից և իրենց նկատմամբ վերաբերմունքից կենսաթոշակառուները դժգոհ են՝ հղում անելով նրանց կոպիտ և անտարբեր պահվածքին:



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ, կենսաթոշակառուների կարծիքի հետազոտություն, USAID/PRIP 2015թ.-ի հունիս

Ծրագրի շրջանակում վերջին տարիներին իրականացրած բարեփոխումների արդյունքում ՀՀ ՍԱՊԾ-ն կենսաթոշակի նշանակման գործընթացը մեծապես հեշտացրել և պարզեցրել է: Սակայն, երբ կարիք է լինում ներկայացնել ստաժը հաստատող փաստաթղթեր, որոնք դժվար է հավաքել, նախկին գործատուից կամ արխիվից, կենսաթոշակառուները երբեմն այդ փաստաթղթերի վրա ծախսում են բավականին երկար ժամանակ, իսկ ոմանք ընդհանրապես արդյունքի չեն հասնում: Այդ ամենը կենսաթոշակառուների մոտ առաջացնում է դժգոհություն՝ ուղղված դեպի ՍԱՊԾ-ի աշխատանքը: Սակայն, հարկ է նշել, որ ՀՀ ՍԱՊԾ աշխատողները կարողանում են արդյունավետ աջակցել քաղաքացիներին փաստաթղթերի ստացման գործում, քանի որ շահառուների 73 տոկոսը գոհ է նրանց ուղղորդման աշխատանքից: Այս խնդիրն իր լուծումը ստացել է նաև 2016թ.-ին Պետական կենսաթոշակների մասին օրենքում՝ հոդված 32-ի 3-րդ մասի 2-րդ պարբերություն կատարված փոփոխությամբ և ՀՀ Կառավարության թիվ 665 որոշման միջոցով, որով կարգավորել է ՀՀ քաղաքացիներից աշխատանքային ստաժի մասին արխիվային տեղեկատվության ստացման կարգը, քաղաքացին այլևս ստիպված չի լինի անձամբ հայթայթել ստաժը հաստատող տեղեկատվությունը:

Ծրագրի շրջանակում մատուցվող ծառայությունների որակի բարելավման համար կարևոր է նաև ՀՀ ՍԱՊԾ աշխատողների համար ռեսուրսների և հնարավորությունների առկայությունը, նրանց համար կազմակերպվող վերապատրաստումները, տեղեկատվության տրամադրման միջոցներն ու արագությունը:

ՀՀ ՍԱՊԾ աշխատողների շրջանում իրականացված հետազոտության արդյունքերը վկայում են, որ վերջին տարիներին բավական բարելավվել են նաև այդ պայմանները: Հետազոտության միջոցով հնարավոր է եղել գնահատել աշխատողների կարծիքը՝ SS համակարգի ընձեռած հնարավորություններից: Գնահատվել է աշխատանքային գործընթացում SS համակարգի բաղադրիչների գործածման հարմարավետությունը, ինչպես նաև որոշակի ծառայությունների բարելավվման վրա վերջինիս ունեցած ազդեցությունը: **ՀՀ ՍԱՊԾ աշխատողների 82%-ը լիովին բավարարված է SS համակարգի ընձեռած հնարավորություններից**: Հարցման մասնակիցների 89%-ի հավաստմամբ SS համակարգում կատարված փոփոխությունների մասին նրանք հրահանգները ստանում են ժամանակին: Այս հարցում զգալի ուշացումներ բացարձակ չեն լինում: Ուստի հրահանգների՝ ժամանակին ստանալու բավարարվածության աստիճանը աշխատողների 91%-ի մոտ ամենաբարձր սանդղակի վրա է՝ լիովին բավարարված են ՀՀ ՍԱՊԾ աշխատողների գերակշիռ մասը գտնում է, որ նոր SS համակարգը բարելավել է նաև շահառուներին մատուցվող ծառայությունների որակը:



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ, ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների աշխատողների կարծիքի հետազոտություն, USAID/PRIP 2015թ.-ի հուլիս

Միևնույն ժամանակ, ՀՀ ՍԱՊԾ աշխատողները ներկայացրել են մի շարք առաջարկություններ համակարգի բարելավման համար, որոնք էլ ավելի կհեշտացնեն նրանց աշխատանքը: Այդ առաջարկությունները մանրամասն ներկայացված են Հետազոտության զեկույցում առդիր 4: **ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների աշխատողների 60%-ը նշել է նաև, որ կարիք ունի վերջին փոփոխությունների մասին խորը վերապատրաստման:**

Ծրագրի ՄԳ անձնագրում Ծրագրի իրականացումից ակնկալվող **քանակական արդյունքներն են՝**

1. Միջին աշխատանքային կենսաթոշակ/ՆՍԶ հարաբերակցության աճը, ՀՀ Կառավարության 2014-25թթ.-ի Հեռանկարային զարգացման ծրագով նախատեսված թիրախներին համապատասխան:
2. Միջին աշխատանքային կենսաթոշակ/միջին աշխատավարձ հարաբերակցության տարեկան աճը՝ ՀՀ Կառավարության 2014-25թթ.-ի Հեռանկարային զարգացման ծրագրով նախատեսված թիրախներին համապատասխան:
3. Դիմումների թիվ/փաստացի շահառուների թվի հարաբերակցության աճը;
4. Բավարարված դիմումների թվի /դիմումների ընդհանուր թիվ հարաբերակցության աճը:
5. Կենսաթոշակառուների շրջանում աղքատության մակարդակի, հատկապես ծայրահեղ աղքատության մակարդակի կրճատումը:

Քանակական արդյունքներից 1-ին ու 2-րդն արդեն դիտարկվել են սույն բաժնի առաջին մասում, իսկ 3-րդի և 4-րդի մասին խոսվել է Ծրագրի վարչարարության արդյունավետության գնահատման որակական արդյունքերը դիտարկելիս:

Հարկ է նշել, որ վերջին երկու ցուցանիշն այնքան էլ մեծ կարևորություն չունեն Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի արդյունավետության գնահատման համար: Ծրագրի արդյունավետության և իրականացման արդյունքի առավել կարևոր քանակական ցուցանիշներ են շահառուներից ստացված բողոք-դիմումների թվի նվազումը, սխալ հիմքով նշանակված/վերահաշվարկված կենսաթոշակների թիվը և հետգանձված գումարների չափը: ՄԳ ցուցանիշների շրջանակում այս երեք ցուցանիշներն ունեն նվազման միտում, ինչը վկայում է ծրագրի արդյունավետ իրականացման մասին:



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ

Կենսաթոշակառուների շրջանում աղքատության մակարդակի, հատկապես ծայրահեղ աղքատության մակարդակի կրճատումը

Կենսաթոշակային քաղաքականությունը Հայաստանում այնպիսին է, որ պետական կենսաթոշակները կրում են ընդգծված վերաբաշխողական բնույթ՝ եկամուտների վերաբաշխումն ուղղված է աղքատության հաղթահարմանը, միաժամանակ համակարգում ներդրվել են նաև կամավոր և պարտադիր կենսաթոշակային խնայողություններ իրականացնելու մեխանիզմներ:

2014թ. աշխատանքային կենսաթոշակի հաշվարկման բանաձևի փոփոխության արդյունքում երկու անգամ կրճատվել է ծայրահեղ աղքատության գծից ցածր կենսաթոշակ ստացող շահառուների թվաքանակը, մինչդեռ աղքատության գծից ցածր կենսաթոշակ ստացողների թվաքանակն, ընդհակառակը, ավելացել է 26.1%-ով: Կենսաթոշակառու անդամ ունեցող ընտանիքներում աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակներն ավելի բարձր են, քան երկրում աղքատության և ծայրահեղ աղքատության միջին մակարդակները (համապատասխանաբար 33.3%՝ 30.0%-ի համեմատ և 2.8%՝ 2.5%-ի համեմատ 2014թ.-ին):

Այդուհանդերձ, կենսաթոշակները շարունակում են կարևոր եկամտի աղբյուր լինել բնակչության համար: Տնային տնտեսությունների 55,2 տոկոսը կենսաթոշակից եկամուտ ունի իսկ տնային տնտեսություններից 34 տոկոսի համար կենսաթոշակներն ու սոցիալական տրանսֆերտները նշվել են, որպես երամտի առաջին կարևոր աղբյուրը: Եթե կենսաթոշակները չվճարվեն, ապա աղքատության մակարդակը երկրում 30 տոկոսից կդառնա 42,7 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատությունը կավելանա 7,6 անգամ՝ 2,3 տոկոսից դառնալով 17,5 տոկոս: Կենսաթոշակները զգալի մեղմում են աղքատության խորությունը և սրությունը, ինչպես նաև եկամուտների բևեռացման Ջինիի գործակիցը:



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2012-2014թթ. և հեղինակների հաշվարկները

2012-2014թթ.-ի ՏՏԿԱՀ –ի ցույց են տալիս, որ կենսաթոշակների ազդեցությունը աղքատության մեղմացման վրա պահպանել է իր կարևորությունը՝ կրճատելով աղքատության մակարդակը կենսաթոշակառու ունեցող ընտանիքներում գրեթե 40 տոկոսով, իսկ ծայրահեղ աղքատությունը ավելի քան 80 տոկոսով՝ գծապատկեր 8:

Այսպիսով, կենսաթոշակները կարևոր եկամտի աղբյուր են Հայաստանի բնակչության համար: Եթե կենսաթոշակները չվճարվեն, ապա բնակչության կենսամակարդակը զգալի կնվազի՝ ծայրահեղ աղքատությունը կաճի առնվազն 9 անգամ, իսկ աղքատության ընդհանուր մակարդակը՝ 1.6 անգամ:



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2012-2014թթ. և հեղինակների հաշվարկները

Ծրագրի վարչարարությունը բավական արդյունավետ է և նոր SS համակարգի ներդրմամբ զգալի բարելավվել է ծրագրի արդյունավետությունն ու մատուցվող ծառայությունների որակը:

Ծրագրի ֆինանսական բեռը տնտեսության վրա շարունակում է ծանր լինել և ծրագրի առջև դրված քաղաքական թիրախներին հասնելու համար լրացուցիչ ֆինանսական ռեսուրսները կվտանգեն կենսաթոշակային համակարգի «ֆինանսական կայունությունը»: Ծրագրի քաղաքականության արդյունքում խաթարվել է նաև ծրագրի՝ սերունդների համերաշխության սկզբունքը: Իրավիճակի բարելավման մեխանիզմները որոշ չափով դուրս են ծրագրի իրավասությունների շրջանակից, այդուհանդերձ բնակչության զբաղվածության մակարդակի, և հատկապես ֆորմալ զբաղվածության մակարդակի խթանման համար մեծ լծակ կլինի կենսաթոշակների հաշվարկման բանաձևի փոփոխությունը և վերջինիս կապը վճարված հարկերի հետ: Այդ դեպքում կվերականգվի նաև ծրագրի սերունդների համերաշխության սկզբունքը:

Ծրագրի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է լրացուցիչ ռեսուրսներ հատկացնել շահառուների իրազեկվածության բարձրացման համար տեղեկատվական նյութերի, հատկապես պարզ և մատչելի տեղեկատվական բուկլետների պատրաստման համար:

Ծրագրի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է նաև մեծացնել աշխատողների վերապատրաստումների պարբերականությունը՝ նրանց կարիքներին

համապատասխան։ Տարածքային բաժինների համակարգիչների վերազինումը ևս արդիական է նոր SS համակարգի արդյունավետ շահագործման համար։

Ծրագրի տարբեր ոլորտների, քաղաքականության և վարչարարության վերաբերյալ առավել մանրամասն առաջարկությունները ներկայացված են Հաշվետվության հաջորդ բաժնում՝ յուրաքանչյուր ոլորտի վերլուծության վերջում, ինչպես նաև «Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի իրականացման վերաբերյալ առաջարկություններ» բաժնում։

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ արդյունքներն ըստ ոլորտների

Ոլորտ 1: Համակարգի մասնակիցներ և ժողովրդագրություն

Ժողովրդագրություն

Երկրի փոփոխվող կենսակերպը, ծնելիության մակարդակի անկումն ու կյանքի սպասվող տևողության բարելավումը որոշակի մարտահրավերներ են առաջադրում սոցիալական ոլորտի, և մասնավորապես կենսաթոշակային համակարգի համար: Այդ իսկ պատճառով Ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակում ներառված են ժողովրդագրական իրավիճակը բնութագրող մի շարք ցուցանիշներ. բնակչության թվաքանակը, սեռատարիքային կազմն ու կյանքի սպասվող տևողությունը:

ՀՀ մշտական բնակչությունը դեռ 1990-ական թվականներից դրսևորել է նվազման միտում՝ պայմանավորված բնակչության բնական շարժի և միգրացիոն տեղաշարժերի փոփոխություններով: Կենսաթոշակային համակարգի համար առավել կարևորվում են բնակչության ծերացման մասին վկայող տարիքային կառուցվածքի տեղաշարժերը: Այսպես, 1990թ. համեմատ 65 և բարձր տարիքի բնակչության տեսակարար կշիռը բնակչության ընդհանուր թվաքանակում 2014 թվականին գրեթե կրկնապատկվել է՝ 5.6%-ից հասնելով 10.6%-ի (տես Գծապատկեր 9-ը)[7]:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 9. ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ, 1990-2015ԹԹ., %



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, «ՀՀ ժողովրդագրական ժողովածու», մաս 2. «Բնակչություն», http://www.armstat.am/file/article/demog_2015_2.pdf

[7] ՄԳ ցուցանիկշների շրջանակը ներառում է փաստացի տվյալներ երեք տարվա համար և կանխատեսվող կամ թիրախային տվյալներ հեռանկարային ժամանակահատվածի երեք տարիների համար: Սակայն ժողովրդագրական միտումների մասին խոսելիս և հետևություններ անելիս անհրաժեշտ է վերլուծել տվյալների ավելի երկար դինամիկ շարք, քանի որ բնակչության թվաքանակի և սեռատարիքային կառուցվածքի վրա առանձին գործոնների ազդեցությունն ակնհայտ է դառնում ոչ թե անմիջապես, այլ երկարաժամկետ հեռանկարում: Ուստի ժողովրդագրությանն առնչվող ցուցանիշները վերլուծելիս վեր է հանվել վիճակագրություն 1990թ. սկսած:

Բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխությունը հիմնականում, հետևանք է հետևյալ երեք գործոնների.

- ***Կյանքի սպասվող միջին տևողության աճ***, այդ թվում նաև՝ սկսած կենսաթոշակային տարիքից: Այսպես, 1990թ-ից ի վեր, բացառությամբ առանձին տարիների, Հայաստանում գրանցվել է թե՛ տղամարդկանց և թե՛ կանանց ծննդի պահից կյանքի սպասվող տևողության անընդհատ աճ. 1990թ. համեմատ կանանց կյանքի սպասվող միջին տևողությունը 2014թ. բարելավվել է 4.7, իսկ տղամարդկանցը՝ 3.9 տարով (տես Գծապատկեր 10-ը): Իսկ 63 տարեկանից կյանքի սպասվող միջին տրևողությունը 2014թ. կազմել է 17.3 տարի և 2012թ. համեմատ բարելավվել է 0.3 տարով, այդ թվում այս ցուցանիշը բարելավվել է կանանց մոտ՝ 0.5 տարով, իսկ տղամարդկանց մոտ՝ ընդհակառակն, այն նվազել է 0.3 տարով: Կանխատեսում- հաշվարկների համաձայն 2015-2017թթ. կյանքի սպասվող տևողությունը կենսաթոշակային տարիքից՝ 63 տարեկանից կանանց մոտ կբարելավվի 0.26, իսկ տղամարդկանց մոտ՝ 0.19 տարով (տես գծապատկեր 11-ը):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 10. ԿՅԱՆՔԻ ՍՊԱՍՎՈՂ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՆԴԻՑ, ՏԱՐԻ



Աղբյուրը ՝ ՀՀ ԱՎԾ, «ՀՀ ժողովրդագրական ժողովածու», «Գծապատկերներ» բաժին, http://www.armstat.am/file/article/demog_2015_2.pdf

- ***Բնակչության ծերացման վրա ազդող մյուս գործոնը ծնելիության մակարդակի կտրուկ անկումն է:*** Այս ցուցանիշը ՄԳ ցուցանիշների շրջանակում ներառված չէ, սակայն երկարաժամկետ հեռանկարում այն էապես ազդում է բնակչության թվաքանակի, հետևաբար կենսաթոշակային համակարգի շահառուների թվաքանակի վրա: Նշենք, որ ծնելիության մակարդակը կամ ծնելիության գումարային գործակիցը 2014թ. հանրապետությունում կազմել է 1.65 երեխա 1992թ.2.62- դիմաց և չի ապահովել նույնիսկ բնակչության պարզ վերարտադրություն[8]:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 11 ԿՅԱՆՔԻ ՍՊԱՍՎՈՂ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՏԱՐԻՔԻՑ, ՏԱՐԻ



Աղբյուրը ՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ

[8] Բնակչության պարզ վերարտադրություն ապահովող ծնելիության մակարդակը 2.6 է:

- Բնակչության թվաքանակի և սեռա-տարիքային կազմի վրա ազդող երրորդ կարևորագույն գործոնը, որը նույնպես ներառվեած չէ ՄԳ ցուցանիշների շրջանակում, բայց որի մասին կարևոր է պատկերացում ունենալը, դա ***միգրացիան*** է: 1990-ական թվականներից ի վեր ՀՀ միջպետական միգրացիայի մնացորդը, բացառությամբ որոշ տարիների, բացասական է՝ արտագաղթը գերակշռում է ներգաղթին: Միգրացիայի վարչական հաշվառման գործող կարգը թույլ չի տալիս գնահատել արտագաղթի իրական չափն ու դրա սեռա-տարիքային կառուցվածքը, սակայն պաշտոնական վիճակագրության համաձայն, միգրացիայի մնացորդը 2014թ.-ին կազմել է (-21,800) մարդ, 2012թ.-ի (-9,400) մարդու համեմատ, կամ արտագաղթողների թվաքանակն ավելացել է 2.3 անգամ: Չնայած միգրացիոն տեղաշարժերի պետական հաշվառման կարգը հեռու է դրա իրական չափերն արձանագրելու հնարավորությունից, անգամ այդ տվյալների վերլուծությունը վկայում է այն մասին, որ միգրացիայի տարիքային կառուցվածքը նպաստում է բնակչության ծերացմանը (տես ներդիր 1-ը):

ՆԵՐԴԻՐ 1. ՄԻԳՐԱՑԻԱ

Ըստ 2014թ. ՏՏԿԱՀ արդյունքների, տնային տնտեսությունների 8.9%-ը 2011-2014թթ. ներգրավված են եղել արտաքին և ներքին միգրացիոն գործընթացներում: Արտաքին և ներքին միգրացիոն տեղաշարժերում ընդգրկված տնային տնտեսությունների 15 և բարձր տարիքի անդամների՝ 70.3%-ի տեղաշարժերը 2014թ. դրությամբ եղել են միջպետական:

Աղբյուրը՝ ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը»՝ ըստ 2014թ. տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքների, ՀՀ ԱՎԾ, Համաշխարհային Բանկ, 2015թ., գլուխ 1 «Ժողովրդագրություն և միգրացիա», էջ 22- 26, http://www.armstat.am/file/article/5.poverty_2015a_2.pdf

Բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխությունը բերել է նաև **բնակչության խնամառության գործակցի փոփոխության:** ՄԳ ցուցանիշների շրջանակում ԱԽ կողմից առաջարկվել է դիտարկել 63[9]+ տարիքի բնակչության խնամառության գործակիցը: Սակայն բնակչության ծերացման միտումը առավել վառ նկատելու համար գծապատկեր 12-ում բերված է ՀՀ ԱՎԾ կողմից հրապարակվող վիճակագրության հիման վրա 65 և բարձր տարիքի բնակչության խնամառության գործակցի և 15-64 տարեկան բնակչության թվաքանակի հարաբերակցության փոփոխման դինամիկան: Այս գործակիցը 1990թ. համեմատ ավելացել է մոտ 2 անգամ 8.7% -ից հացնելով 15.1%-ի (տես Գծապատկեր 12-ը):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 12: 65 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿՑԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ , 1990-2015ԹԹ., %



Աղբյուրը՝ Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ, «ՀՀ ժողովրդագրական ժողովածու», մաս 2. «Բնակչություն»,, http://www.armstat.am/en/?nid=81&id=1729

[9] Տարիքային աշխատանքային կենսաթոշակի օրենքով սահմանված տարիքը:

ՄԳ ցուցանիշների շրջանակում բնակչության խնամառության գործակիցը (63+ բնակչություն/16-62 տարեկան բնակչություն հարաբերակցությունը) 2012-2014թթ ընթացքում ևս դրսևորել է կայուն աճի միտում՝ տատանվելով 17.8%-ից 18.8%-ի միջակայքում (տես գծապատկեր 13-ը)։

Ամփոփ եզրակացություն. ծնունդների ցածր մակարդակը, կյանքի սպասվող միջին տևողության բարելավումն ու միգրացիոն տեղաշարժերը հանգեցնում են ՀՀ բնակչության ծերացման։ Սերունդների համերաշխության վրա հիմնված կենսաթոշակային համակարգում բնակչության ծերացումը ստեղծում է համակարգի ֆինանսական կայունության լուրջ խնդիրներ։

Միաժամանակ կենսաթոշակի սկսել է անցնել այսպես կոչված «baby-boom» - ի սերունդը, ինչն իր հերթին, այլ գործոնների հետ միասին, կհանգեցնի կենսաթոշակառուների թվաքանակի ավելացման։

ԳԾԱՊԱՏԿԵՐ 13։ 63 ԵՎ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԽՆԱՄԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑԸ



Աղբյուրը՝ ***Աղբյուրը՝*** ՀՀ ԱՎԾ, «ՀՀ ժողովրդագրական ժողովածու», մաս 2. «Բնակչություն»,, http://www.armstat.am/en/?nid=81&id=1729

Այսպիսով վերը նշված գործոնների ազդեցության արդյունքում կարող է առաջանալ խզում համակարգին հատկացումներ կատարողների թվաքանակի և վճարվող կենսաթոշակի չափի միջև, ինչպես նաև կենսաթոշակների վճարման ծախսերի ավելացում։

Կենսաթոշակային համակարգի մասնակիցներ

Աշխատանքային կենսաթոշակառուները 2014թ. կազմել են ՀՀ աշխատունակ և բարձր տարիքի բնակչության 18.8%-ը։ 2005-2014թթ. դինամիկ շարքը վկայում է այն մասին, որ կենսաթոշակառուների թվաքանակի տեսակարար կշիռը բնակչության աշխատունակ և բարձր տարիքի խմբում 2005-2010թթ. դրսևորել է նվազման միտում, իսկ սկսած 2011թ. անընդհատ աճել է (տես գծապատկեր 14-ը)։

Գծապատկեր 14։ Աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակի տեսակարար կշիռը աշխատունակ տարիքի և աշխատունակ տարիքից բարձր տարիքի բնակչության թվաքանակի մեջ



Աղբյուրը՝ «Աշխատանքային կենսաթոշակ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ, ՀՀ ԱՎԾ, «ՀՀ ժողովրդագրական ժողովածու», մաս 2. «Բնակչություն»,, http://www.armstat.am/en/?nid=81&id=1729

Աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակի տեսակարար կշռի նվազումը աշխատունակ տարիքի և աշխատունակ տարիքից բարձր տարիքի բնակչության ընդհանուր թվաքանակում պայմանավորված է.

- տարիքային նշված խմբի բնակչության թվաքանակի տատանումներով (տես ներդիր 2-ը՝ բնակչության տարիքային այս խմբի թվաքանակը մինչև 2011թ. անընդհատ աճել է, այնուհետև մարդահամարի տվյալների հիման վրա ճշգրտման արդյունքում այն 2011թ. կտրուկ նվազել է, այնուհետև կրկին դրսևորել է աճի միտում),

ՆԵՐԴԻՐ 2 ԱՇԽԱՏՈՒՆԱԿ ՏԱՐԻՔԻ ԵՎ ԱՇԽԱՏՈՒՆԱԿ ՏԱՐԻՔԻՑ ԲԱՐՁՐ ՏԱՐԻՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ 2005-20017ԹԹ., Հազ. ՄԱՐԴ



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ և ՀՀ ԱՎԾ, «ՀՀ ժողովրդագրական ժողովածու», մաս 2. «Բնակչություն»,, http://www.armstat.am/en/?nid=81&id=1729

2011թ. համար բերված են մարդահամարով ճշգրտված տվյալները:

- կենսաթոշակառուների՝ ըստ աշխատանքային կենսաթոշակի տեսակների, թվաքանակների տատանումներով: Մասնավորապես, տարիքային աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակը 2005-2012թթ. դրսևորել է նվազման միտում, այնուհետև, 2013թ. սկսած այն սկսել է ավելանալ (տես աղյուսակ 1-ը), ինչը մեր կարծիքով պայմանավորված է 1950-ական թվականներին ծնվածների կենսաթոշակի անցնելով (baby-boom-ի սերունդը՝ 1948-1949թ. մինչև 1960-ականների սկիզբ ծնվածներ):

2012-2014թթ. կենսաթոշակառուների ընդհանուր թվաքանակը աճել է 1.8%-ով: ՄԳ ցուցանիշների շրջանակում 2015-2017թթ. կանխատեսումներով նախատեսվել է թվաքանակի տարեկան 1% աճ: Կենսաթոշակառուների թվաքանակի՝ 2015թ. համար փաստացի և կանխատեսված արժեքների միջև էական շեղումներ չեն արձանագրվել, բացառությամբ երկարամյա ծառայության կենսաթոշակառուների թվաքանակի: Կանխատեսման սխալի էական չափը պայմանավորված է առավել ճշգրիտ հաշվարկների համար անհրաժեշտ տեղեկատվության բացակայությամբ (տես «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների հավաքագրումը և կանխատեսման մեթոդաբանությունը» բաժինը): Սա մեկ անգամ ևս վկայում է այն մասին, թե որքան կարևոր է կանխատեսումների հիմքում դրվող ենթադրությունների վերաբերյալ արժանահավատ և որակյալ տեղեկատվության առկայությունն ու հավաքագրումը, ինչպես նաև ցուցանիշի գնահատման վրա ազդող հնարավոր բոլոր գործոնների համակողմանի վերլուծությունը (տես աղյուսակ 1-ը):

Աղյուսակ 1. Կենսաթոշակառուների թվաքանակը տարեվերջին (հազար մարդ), ըստ կենսաթոշակի տեսակների, փաստացի և կանխատեսված

	Փաստացի			Կանխատեսված				2015թ. փաստացի արդյունքի շեղումը թիրախային ցուցանիշից (փաստացի /թիրախ -1)
	2012	2013	2014	2015	2016	2017	2015թ. փաս-տացի	
Կենսաթոշակառուների թվաքանակը, ընդամենը հազ. մարդ	452.5	453.9	458.6	462.5	466.6	470.7	463.5	0.2%
Տարիքային	298.6	299.4	301.6	304.6	307.5	310.5	305.6	0.3%
Արտոնյալ	3.6	3.3	3.1	2.9	2.7	2.5	2.8	-2.7%
Երկարամյա	3.5	2.7	1.9	1.4	1.0	0.8	1.1	-22.0%
Հաշմանդամության	121.4	121.4	125.6	127.5	129.5	131.4	128.3	0.6%
Կերակրողին կորցնելու	10.7	12.4	11.4	11.3	11.1	11.0	10.8	-4.5%
Մասնակի	14.7	14.8	15.0	14.9	14.7	14.6	14.9	0.3%

Աղբյուրը ՝ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ

Կենսաթոշակառուների գերակշռող մեծամասնությունը՝ 65.9%-ը 2015թ. ստացել է տարիքային աշխատանքային կենսաթոշակ, հաջորդ խոշոր խումբը կազմել են հաշմանդամության կենսաթոշակառուները՝ 27.7%, կերակրողին կորցնելու կենսաթոշակառուների բաժինը կազմել է 2.3%, վաղաժամկետ կենսաթոշակառուները (արտոնյալ, երկարամյա, մասնակի)՝ 4.1%: Կենսաթոշակառուների թվաքանակի՝ ըստ կենսաթոշակի տեսակների, տեսակարար կշիռները 2012-2015թթ. ընթացքում էական փոփոխությունների չի ենթարկվել, բացառությամբ երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակառուների (տես աղյուսակ 2-ը): Վերջիններիս բացարձակ թվաքանակի և տեսակար կշիռների նվազումը 2015-2015թթ. ընթացքում պայմանավորված է իրավունակության պայմանների խստացմամբ:

Աղյուսակ 4. Աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակի կառուցվածքն ըստ կենսաթոշակի տեսակների

	Տեսակարար կշիռը						
	2012	2013	2014	2015*	2015 փաս-տացի	2016*	2017*
Տարիքային	66.0%	66.0%	65.8%	65.8%	65.9%	65.9%	66.0%
Երկարամյա ծառայության	0.8%	0.6%	0.4%	0.6%	0.6%	0.6%	0.5%
Արտոնյալ պայմաններով	0.8%	0.7%	0.7%	0.3%	0.2%	0.2%	0.2%
Մասնակի	3.2%	3.3%	3.3%	27.6%	27.7%	27.8%	27.9%
Հաշմանդամության	26.8%	26.7%	27.4%	2.4%	2.3%	2.4%	2.3%
Կերակրողին կորցնելու դեպքում	2.4%	2.7%	2.5%	3.2%	3.2%	3.2%	3.1%
Ընդամենը	100%	100%	100%	100%	100%	100%	100%

Աղբյուրը ՝«Աշխատանքային կենսաթոշակ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ։ *-ով նշված են կանխատեսվող տարիները

Թե ինչ չափով են կենսաթոշակառուները կենտրոնացված առավել բարձր տարիքային խմբերում, պայմանավորված է մի շարք գործոններով. կենսաթոշակի տեսակի հարաբերական կարևորությունն ու բնութագրիչները (օրինակ, կերակրողին կորցնելու կենսաթոշակ, հաշմանդամության կենսաթոշակ, երկարամյա ծառայության կենսաթոշակ և այլն), օրենքով սահմանված կենսաթոշակային տարիքը (ինչը Հայաստանում կանանց և տղամարդկանց համար նույնն է), որքան է կենսաթոշակի չափը վաղաժամկետ կենսաթոշակի անցած շահառուների համար (Հայաստանում այս կենսաթոշակները հաշվարկվում են գործող մեկ ընդհանուր բանաձևի հիման վրա)։ 2014թ. աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակի բաշխումն ըստ տարիքային խմբերի և սեռի բերված է գծապատկեր 15-ում։

ԳԾԱՊԱՏԿԵՐ 15. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ԵՎ ՍԵՌԻ, 2014Թ.



Աղբյուրը «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ

Կենսաթոշակառուների 44.7%-ը կազմում են 71 և բարձր տարիքի շահառուները, 63-70 տարեկան խմբում են կենտրոնացված կենսաթոշակառուների 31.9%-ը։ Տարիքային բոլոր խմբերում տղամարդկանց բաժինը մի փոքր գերազանցում է կանանց, բացառությամբ 71 և բարձր տարեկանների խումբը։ Սա նույնպես հաստատում է այն փաստը, որ կանանց

կյանքի սպասվող տևողությունը և կենսաթոշակ ստանալու միջին տևողությունը գերազանցում է տղամարդկանց համար այդ նույն ցուցանիշներին:

Կենսաթոշակառուների բացարձակ թվաքանակի 2012-2014թթ. միտումը վկայում է, որ թեև արտոնյալ պայմաններով և երկարամյա ծառայության կենսաթոշակ ստացողների թվաքանակը նվազել է, սակայն տարիքային, մասնակի, կերակրողին կորցնելու և հաշմանդամության կենսաթոշակ ստացողների թվաքանակը շարունակաբար աճել է:

Աղյուսակ 3. Կենսաթոշակառուների թվաքանակը տարեվերջին (հազար), ըստ կենսաթոշակի տեսակների

	Հազար մարդ			*Տեսակարար կշիռը*			*2014թ. %-ով 2012թ. համեմատ*
	2012	*2013*	*2014*	*2012*	*2013*	*2014*	
Տարիքային	298.6	299.4	301.6	66.0%	66.0%	65.8%	101.0%
Երկարամյա ծառայության	3.5	2.7	1.9	0.8%	0.6%	0.4%	55.3%
Արտոնյալ պայմաններով	3.6	3.3	3.1	0.8%	0.7%	0.7%	85.3%
Մասնակի	14.7	14.8	15.0	3.2%	3.3%	3.3%	102.2%
Հաշմանդամության	121.4	121.4	125.6	26.8%	26.7%	27.4%	103.5%
Կերակրողին կոցնելու դեպքում	10.7	12.4	11.4	2.4%	2.7%	2.5%	106.1%
Ընդամենը	***452.5***	***453.9***	***458.6***	***100.0%***	***100.0%***	***100.0%***	***101.3%***

Աղբյուրը ՝ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ

Արտոնյալ պայմաններով և երկարամյա ծառայության կենսաթոշակ ստացողների թվաքանակի կրճատումը հիմնականում պայմանավորված է տնտեսության համապատասխան ոլորտներում ՀՀ կառավարության կողմից հաստատված ցուցակներում թվարկած մասնագիտություններով և պաշտոններում աշխատողների թվաքանակի կրճատմամբ (տես Ներդիր 3-ը):

ՆԵՐԴԻՐ 3. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ ԵՎ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակի տասնամյա դինամիկայի վերլուծությունը (տես ստորև բերված աղյուսակը) վկայում է, որ մինչև 2012թ. ներառյալ արձանագրվել է կենսաթոշակառուների ընդհանուր թվաքանակի նվազում, այնուհետև արձանագրվել է աճ:

Աղյուսակ 6. Կենսաթոշակառուների թվաքանակի դինամիկան 2005-2014թթ., հազ. մարդ

	2005	2006	2007	2008	2009	2010	2011	2012	2013	2014
Տարիքային	355.0	342.7	332.3	326.4	319.5	313.1	301.6	298.6	299.4	301.6
Երկարամյա ծառայության	13.8	11.9	9.3	6.9	6.0	5.2	4.5	3.5	2.7	1.9
Արտոնյալ պայմաններով	16.2	12.3	11.1	7.3	6.3	5.3	4.4	3.6	3.3	3.1
Մասնակի	2.4	4.1	6.7	9.2	11.3	12.9	14.2	14.7	14.8	15.0
Հաշմանդա-մության	77.8	88.1	96.1	106.1	111.2	116.1	118.2	121.4	121.4	125.6
Կերակրողին կորցնելու դեպքում	14.7	14.6	13.6	13.8	13.2	12.6	11.7	10.7	12.4	11.4
Ընդամենը	479.8	473.6	469.1	469.8	467.5	465.1	454.6	452.5	453.9	458.6

Աղբյուրը ՝ՀՀ ՍԱՊԾ և ՀՀ ԱՎԾ, «ՀՀ սոցիալական վիճակը» ժողովածու, http://www.armstat.am/am/?nid=81&id=1689

Ըստ կենսաթոշակի տեսակների վերլուծությունը ցույց է տալիս, որ կենսաթոշակառուների թվաքանակի նվազումը տեղի է ունեցել տարիքային, երկարամյա ծառայության և արտոնյալ պայմաններով կենսաթոշակառուների հաշվին, կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակառուների թվաքանակը հարաբերականորոն կայուն է եղել, մինչդեռ մասնակի և հաշմանդամության կենսաթոշակառուների թվաքանակը դրսևորել է անընդհատը աճի միտում: Վերջինս բացատրվում է կենսաթոշակային քաղաքականության որոշակի փոփոխություններով:

Այսպես, մասնակի կենսաթոշակը նշանակվում է 50 կամ 55 տարին լրացած և ՀՀ կառավարության սահմանած ցանկում նշված մասնագիտություններով և պաշտոններում մինչև 2003 թվականի օգոստոսի 1-ը առնվազն 12 տարի աշխատած քաղաքացիներին: Այդ իսկ պատճառով դեռ միառժամանակ սպասելի է մասնակի կենսաթոշակառուների թվաքանակի աճը:

Ինչ վերաբերում է հաշմանդամության կենսաթոշակառուներին, ապա հարկ է հիշել, որ մինչև 2006թ. հաշմանդամության հիմնական կենսաթոշակը կազմել է. ա) 1-ին կարգի հաշմանդամների համար՝ հիմնական կենսաթոշակի 120 տոկոսը, բ) 2-րդ կարգի հաշմանդամների համար՝ հիմնական կենսաթոշակի 100%-ը և գ) 3-րդ կարգի հաշմանդամների համար՝ հիմնական կենսաթոշակի 80%-ը: 2006թ. սկսած հաշմանդամության հիմնական կենսաթոշակը սահմանվել է. ա) 1-ին կարգի հաշմանդամների համար՝ հիմնական կենսաթոշակի 140%-ի չափով, բ) 2-րդ կարգի հաշմանդամների համար՝ հիմնական կենսաթոշակի 120%-ի չափով և գ) 3-րդ խմբի հաշմանդամների համար՝ հիմնական կենսաթոշակի 100%-ի չափով: Քանի որ հաշմանդամ կենսաթոշակառուներին տրվել է տարիքային և հաշմանդամության կենսաթոշակների միջև ընտրության հնարավորություն, ապա կարելի է ենթադրել, որ տարիքային կենսաթոշակ ստացողներն անցել են հաշմանդամության կենսաթոշակի և սա մասամբ կարող է լինել նաև տարիքային կենսաթոշակառուների թվաքանակի կրճատման պատճառներից մեկը (տարիքային կենսաթոշակառուների թվաքանակի նվազման վրա, շահառուների կողմից հաշմանդամության կենսաթոշակի ընտրության հանգամանքից զատ կարող են ազդած լինել ժողովրդագրական գործոնները, օրինակ՝ արտագաղթը կամ բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխությունը): **Հաշմանդամության կենսաթոշակառուների թվաքանակի աճի** հաջորդ պատճառը կարող է լինել գործող արտոնությունների համակարգը (մասնավորապես առողջապահության ոլորտում):

Համադրելով կենսաթոշակային համակարգին հատկացումներ կատարողների թվաքանակը աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակի հետ, կարելի է եզրակացնել, որ մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակը ֆինանսավորում է համակարգին հատկացում կատարող մոտավորապես մեկ քաղաքացի[10], մինչդեռ համակարգի ֆինանսական կայունության ապահովման համար, միջազգային փորձի համաձայն, մեկ կենսաթոշակառուի հաշվով անհրաժեշտ է առնվազն 3 հատկացում կատարող (ինչի դեպքում խնամառության գործակիցը կկազմեր 0.33%):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 16. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԽՆԱՄԱՌՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑԸ



Կենսաթոշակային համակարգի խնամառության գործակիցը՝ ընդամենը կենսաթոշակառուների թվաքանակ/ընդամենը հատկացում կատարողների թվաքանակ հարաբերակցությունը փոքր է 1-ից՝ ըստ տարիների այն տատանվում է 0.74-ից 0.83-ի սահմաններում (տես գծապատկեր 16-ը): Իրավիճակն այլ է **սահմանային խնամառության գործակցի**՝ նոր կենսաթոշակառուներ/նոր հարկատուներ հարաբերակցության դեպքում՝ 2012-2015թթ. այն տատանվել է 1.52-ից 1.76–ի սահմաններում: Սա վկայում է այն մասին, որ յուրաքանչյուր տարի կենսաթոշակառուների շարքերը համալրող նոր կենսաթոշակառուների թվաքանակն ավելի մեծ է, քան աշխատանքի շուկա նոր մուտք գործողներինը: **Ակնհայտորեն կենսաթոշակային համակարգն ունի ֆինանսական կայունության և կենսաթոշակների համարժեք մակարդակի ապահովման խնդիր:**

Կենսաթոշակային համակարգի առավել տեսանելի և կարևոր պարամետրերից է կյանքի սպասվող տևողությունը 63 տարեկանում՝ վիճակագրական միջին տարիների թիվը, որ 63 տարեկան անձն ակնկալում է ապրել: ՀՀ ԱՎԾ տրամադրած տեղեկատվության համաձայն, 63 տարեկան կինը 2014թ. կարող էր ակնկալել, որ լրացուցիչ կապրի ևս 18.9 տարի, իսկ տղամարդը՝ 14.9 տարի (տես գծապատկեր 17-ը): Կյանքի սպասվող տևողությունը 63 տարեկանում 2012-2014թթ. բարելավման միտում է դրսևորել կանանց համար, մինչդեռ տղամարդկանց համար այս ցուցանիշն,

ԳԾԱՊԱՏԿԵՐ 17 ԿՅԱՆՔԻ ՍՊԱՍՎՈՂ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ 63 ՏԱՐԵԿԱՆՈՒՄ, ՏԱՐԻ



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ (ՍԳ ցուցանիշների շրջանակ):

[10] Համակարգին հատկացում կատարողների թվաքանակ/կենսաթոշակառուների թվաքանակ հարաբերակցությունը նույն երևույթը դիտարկում է հակառակ ծայրից՝ համակարգին հատկացում կատարող 1.2-ից 1.3 քաղաքացի, ըստ առանձին տարիների, ֆինանսավորում է մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակը:

ընդհակառակն, վատթարացել է: Բայց ընդամենը կյանքի սպասվող միջին տևողության մասնակի բարելավումը (17.1-ից 2012թ.-ին 2014թ. դարձել է 17.3 տարի) նշանակում է ավելի երկար ժամանակահատվածի համար կենսաթոշակի վճարում, հետևաբար նաև՝ կենսաթոշակային ծախսերի ավելացում:

Ժամանակակից աշխարհում կենսաթոշակ տրամադրելը «թանկ» է դառնում նաև վաղաժամկետ կենսաթոշակի իրավունք տվող պայմանների առկայության արդյունքում: Հայաստանյան կենսաթոշակային համակարգը ևս տրամադրում է վաղաժամկետ կենսաթոշակի անցնելու հնարավորություն: Արդյունքում առաջանում է խզում տարիքային կենսաթոշակի անցնելու օրենքով սահմանված տարիքի (63 տարեկան) և կենսաթոշակի անցնելու փաստացի միջին տարիքի միջև. տարիքային աշխատանքային կենսաթոշակի օրենքով սահմանված տարիքը աշխատանքային կենսաթոշակի անցնելու փաստացի տարիքից բարձր է՝ տղամարդկանց մոտ 0.6, իսկ կանանց մոտ 1.3 տարով: Սա տեսականորեն նշանակում է, որ կանանց կենսաթոշակ պետք է տրամադրվի է ոչ թե 18.9 (կյանքի սպասվող միջին տևողությունը 63 տարեկանում), այլ 20.2 տարի, իսկ տղամարդկանց՝ համապատասխանաբար ոչ թե 14.9, այլ 15.5 տարի:

Ըստ ՀՀ ՍԱՊԾ տրամադրած տեղեկատվության, տարիքային և հաշմանդամության աշխատանքային կենսաթոշակ ստանալու փաստացի միջին տևողությունը 2015թ. կազմել է՝ կանանց համար 24.5, իսկ տղամարդկանց համար 17,1 տարի, հաշմանդամության կենսաթոշակ ստանալու միջին տևողությունը համապատասխանաբար կազմում է 11.6 և 10.0 տարի (տես Գծապատկեր 18-ը):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 18 ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋԻՆ ՏՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ, ՏԱՐԻ



Աղբյուրը՝ ՀՀ ՍԱՊԾ (ՄԳ ցուցանիշների շրջանակ)

Կենսաթոշակային ցանկացած, և մասնավորապես սերունդների համերաշխության սկզբունքի վրա հիմնված համակարգի ֆինանսական կայունության հիմքը համակարգին հատկացումներ կատարող զբաղված քաղաքացիներն են: Եթե չեն ապահովվում անհրաժեշտ ծավալի հարկային մուտքեր, ապա պետության համար դժվարանում, երբեմն էլ անհնար է դառնում իր կողմից արդեն տրված (կենսաթոշակի հաշվարկման բանաձևի միջոցով) կենսաթոշակային խոստումների բավարարումը:

2015թ, ըստ նախնական տվյալների, ՀՀ տնտեսության մեջ զբաղված է եղել տնտեսապես ակտիվ բնակչության 80.2%-ը կամ 1072.6 հազ. մարդ, որից մոտ 593 հազարը կամ 55.3%-ն է կատարել կենսաթոշակային հատկացումներ՝ վճարել եկամտային հարկ:

Պետք է նկատել, որ զբաղվածության ոլորտում 2014թ. համեմատ տեղի է ունեցել իրավիճակի վատթարացում՝ զբաղված բնակչության թվաքանակը կրճատվել է 5.4%-ով, իսկ եկամտային հարկ վճարողներինը՝ 3%-ով: Թեև 2012-2015թթ ընթացքում համակարգին հատկացումներ կատարողների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում ավելացել է 8.5 տոկոսային կետով, այդուհանդերձ կենսաթոշակային համակարգի ծածկույթը կամ համակարգում ընդգրկվածության մակարդակը ունի բարելավման պոտենցիալ (տես գծապատկեր 19-ը).զբաղված բնակչության 44.7%-ը դուրս է մնացել կենսաթոշակային համակարգից՝ գյուղացիական տնտեսությունում և/կամ ոչ ֆորմալ այլ զբաղվածության պատճառով :

ՆԵՐԴԻՐ 4. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐ

2013թ. հունվարի 1-ից, սոցիալական ապահովության վճարների և եկամտահարկի միավորման և միասնական եկամտային հարկի ներդրման արդյունքում այլևս կենսաթոշակային համակարգի մուտքերի մասին կարելի է խոսել պայմանականորեն: Քանի որ աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունակության պահանջներից մեկը եկամտային հարկ վճարելու փաստն է, ուստի կենսաթոշակային համակարգի ծածկույթի մասին խոսելիս նկատի ունենք եկամտային հարկ վճարողներին:

<u>Ամփոփ եզրակացություններ</u>.

1.Աշխատանքային կենսաթոշակառուները կազմում են աշխատունակ տարիքի և աշխատունակ տարիքից բարձր տարիքի բնակչության ընդհանուր թվաքանակի 18.8%-ը և համաձայն կանխատեսումների այն շարունակելու է դրսևորել թույլ, բայց աճի միտում:

2. Աշխատանքային կենսաթոշակ վճարելը դառնում է ավելի «թանկ» ինչպես կյանքի սպասվող միջին տևողության բարելավման արդյունքում, այնպես էլ վաղաժամկետ կենսաթոշակի իրավունք տվող կենսաթոշակի տեսակների առկայությամբ: Արդյունքում առաջանում է խզում տարիքային կենսաթոշակի անցնելու օրենքով սահմանված տարիքի (63 տարեկան) և կենսաթոշակի անցնելու փաստացի միջին տարիքի միջև. տարիքային աշխատանքային կենսաթոշակի օրենքով սահմանված տարիքը աշխատանքային կենսաթոշակի անցնելու փաստացի տարիքից բարձր է՝ տղամարդկանց մոտ 0.6, իսկ կանանց մոտ 1.3 տարով: Սա տեսականորեն նշանակում է, որ կանանց կենսաթոշակ պետք է տրամադրվի է ոչ թե 18.9 (կյանքի սպասվող միջին տևողությունը 63 տարեկանում), այլ 20.2 տարի, իսկ տղամարդկանց՝ համապատասխանաբար 14.9 և 15.5 տարի:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 19 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԾԱԾԿՈՒՅԹԸ



Աղբյուրը՝ ***Աղբյուրը՝*** ՀՀ ԱՎԾ, «Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում» ժողովածու (http://www.armstat.am/am/?nid=81&id=1732) և ՄԳ ցուցանիշների շրջանակ

3. Կենսաթոշակային համակարգում ընդգրկվածության մակարդակն ունի բարելավման կարիք՝ տնտեսության մեջ զբաղվածների 44.4%-ը դուրս է մնացել կենսաթոշակային համակարգից և չի ձևավորում կենսաթոշակային իրավունք: Մինչդեռ կենսաթոշակային ցանկացած համակարգ պետք է տրամադրի իրավական կարգավորման այնպիսի շրջանակ, որը բոլոր քաղաքացիներին հավասարաչափ կընձեռի հնարավորություն ակտիվ աշխատանքային կյանքի ընթացքում կուտակել բավարար կենսաթոշակային իրավունք: Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրումը մասսամբ է միայն լուծում քաղաքականության այս բացը:

Ոլորտ 2 Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի բեռը տնտեսության վրա

Աշխատանքային կենսաթոշակների ֆինանսավուրումը Հայաստանում իրականացվում է պետական բյուջեի ընդհանուր մուտքերի հաշվին (տես Ներդիր 5-ը): Բյուջեից կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման նպատակով հատկացված միջոցները կազմում են ՀՆԱ-ի մի փոքր ավելի քան 4.5%-ը և սոցիալական պաշտպանության համար կատարվող հատկացումների ավելի քան 50%-ը:

ՆԵՐԴԻՐ 5. ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Մինչև 2008թ-ը Հայաստանում կենսաթոշակային ծրագրերի վրա կատարվող ծախսերը ֆինանսավորվում էին երկու հիմնական աղբյուրից՝ պետական բյուջեի և կենսաթոշակային հիմնադրամի ապահովագրական միջոցների հաշվին: Վերջինս ձևավորվում էր պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներից:

2008թ. հունվարից վերացվեց Սոցիալական ապահովագրության հիմնադրամը, պարտադիր սոցիալական ապահովագրության վճարները ուղղորդվեցին պետական բյուջե, որի միջոցների հաշվին էլ առ այսօր ֆինանսավորվում են կենսաթոշակային համակարգի ծախսերը:

2013թ. հունվարի 1-ից միավորվեցին պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներն ու եկամտահարկը և ներդրվեց եկամտային հարկը: Հետևաբար, պայմանականորեն կարելի է համարել, որ կենսաթոշակային համակարգի ֆինանսավորումն իրականցվում է եկամտային հարկի վճարումից ստացվող մուտքերի հաշվին:

Համեմատության համար հարկ է նշել, որ 2014թ. սոցիալական ոլորտի (սոցիալական պաշտպանություն, առողջապահություն և կրթություն) ֆինանսավորմանն է ուղղվել ՀՆԱ-ի 11.4% և բյուջեի ընդամենը ծախսերի 43.7%-ը, որի մեջ կենսաթոշակային համակարգի ֆինանսավորմանն ուղղված միջոցները կազմել են համապատասխանաբար 4.1% և 15.7% (տես գծապատկեր 20-ը):

Պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների և եկամտահարկի միավորումը մեկ եկամտային հարկի մեջ ենթադրում է, որ կենսաթոշակային համակարգի

մուտքերի մասին կարելի է խոսել միայն պայմանականորեն՝ համարելով, որ կենսաթոշակները ֆինանսավորվում են եկամտային հարկից ստացվող մուտքերի հաշվին:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 20. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ



Աղբյուրը՝ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ և ՀՀ ԱՎԾ «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն» ժողովածու, «Պետական ֆինանսներ» բաժին (ըստ տարիների) (http://www.armstat.am/am/?nid=81&id=1703)
* - նշված են տարիները, որոնց համար բերված են կանխատեսված տվյալներ

ՀՀ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 2014Թ.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 21: ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԲԵՌԸ





Ուստի, կարելի է ասել, որ հավաքագրված եկամտային հարկի մոտ 65%-ն ուղղվում է աշխատանքային կենսաթոշակների ֆինանսավորմանը: Կենսաթոշակային ծախսերի բաժինը թե՛ ՀՆԱ-ի և թե՛ եկամտային հարկից ստացվող մուտքերի մեջ, բնականաբար, ըստ տարիների տատանվում է (տես գծապատկեր 21-ը): Եկամտային հարկից ստացվող մուտքերի չափը պայմանավորված է ինչպես հարկման բազայով[11], այնպես էլ հարկատուների թվաքանակով:

2015թ. ՀՀ տնտեսության մեջ զբաղված էր աշխատանքային ռեսուրսների 62.6%-ը (2014թ.63.1%): Եկամտային հարկ է վճարել տնտեսության մեջ զբաղված բնակչության 55.3%-ը (2014թ. 53.9%) և ոչ գյուղացիական տնտեսության մեջ զբաղվածների 84.8%-ը (2014թ. 82.7%) (տես գծապատկեր 22-ը): Փաստորեն տնտեսության մեջ 1072.6 հազար

ԳԾԱՊԱՏԿԵՐ 22. ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ 2015Թ., ՀԱԶ. ՄԱՐԴ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ	2136.0	ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ (ԱՌ)ՄԵՋ		
ՏՆՏԵՍԱՊԵՍ ԱԿՏԻՎ (ՏԱ)ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ	1336.7	62.6%		
ԶԲԱՂՎԱԾ ԲՆԱԿՉՈՒԹՅՈՒՆ	1072.6	50.2%	ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ԶԲԱՂՎԱԾՆԵՐԻ ՄԵՋ	
ՆՐԱՆՑԻՑ ԶԲԱՂՎԱԾ ԵՆ. ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ	373.6	17.5%	34.8%	
ՈՉ ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ	699.0	32.7%	65.2%	*ՏԵՍԱԿԱՐԱՐ ԿՇԻՌԸ ՈՉ ԳՅՈՒՂԱՅԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԶԲԱՂՎԱԾՆԵՐԻ*
ՎՃԱՐՈՒՄ ԵՆ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ	592.6	27.7%	55.3%	84.8%

Աղբյուրը ՝ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2015 թվականի հունվար-դեկտեմբերին», http://www.armstat.am/file/article/sv_12_15a_141.pdf և «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ:

զբաղվածների մոտ 35%-ը զբաղված է եղել գյուղացիական տնտեսության մեջ և գործող օրենսդրության համաձայն ազատված է եղել եկամտային հարկ վճարելու պարտավորությունից: Եթե կենսաթոշակային համակարգում ընդգրկվածությունը դիտարկենք որպես եկամտային հարկ վճարողներ/ոչ գյուղացիական տնտեսության մեջ զբաղվածներ հարաբերակցությունը, ապա 2015թ. այն կազմել է 88.4%, մինչդեռ, եկամտային հարկ վճարողներ/զբաղված բնակչություն հարաբերակցությունը կազմում է ընդամենը 55.3%: Ընդհանրապես, կենսաթոշակային համակարգում բնակչության համարժեք ընդգրկվածության ապահովումը կենսաթոշակային քաղաքականության լրջագույն մարտահրավերներից է (տես ներդիր 6-ը):

Թեև կենսաթոշակային 1-ին՝ սերունդների համերաշխության վրա հիմնված բաղադրիչը Հայաստանում պարտադիր է, այնուամենայնիվ աշխատանքային ռեսուրսների մոտ 28%, իսկ զբաղված բնակչության 55%-ն է միայն ընդգրկված համակարգում:

[11] Հարկման բազան եկամուտների այն հոսքն է, որը տվյալ դեպքում ենթակա է եկամտային հարկով հարկման:

ՆԵՐԴԻՐ 6,. ԲԱԶՄԱՍՏԻՃԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրումը հնարավորություն է տալիս զբաղված բակչության տարբեր տարիքային և զբաղվածության կարգավիճակ ունեցող խմբերին դիվերսիֆիկացնել իրենց կենսաթոշակային եկամուտները՝ կուտակային կենսաթոշակային պարտադիր (2-րդ բաղադրիչ) կամ կամավոր (3-րդ բաղադրիչ) բաղադրիչներին մասնակցելու միջոցով։

Կուտակային 2-րդ բաղադրիչի մասնակիցներ են հանդիսանում 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված վարձու աշխատողները, նոտարներն ու անհատ ձեռնարկատերերը։

1974թ. հունվարի 1-ից առաջ ծնված ցանկացած անհատ՝ անկախ զբաղվածության կարգավիճակից, ինչպես նաև 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված և ինքնազբաղված հանդիսացող կամ գյուղացիական տնտեսությունում զբաղված ցանկացած անհատ կարող է կամավոր միանալ կենսաթոշակային թե՛ 2-րդ պարտադիր և թե՛ 3-րդ կամավոր բաղադրիչներին։ Սակայն, փաստացի իրավիճակի վերլուծությունը վկայում է, որ մասնակցության պայմանները կամ տրամադրվող արտոնություններն այսօր բավարար չեն նշված խմբերի մասնակցությունը կուտակային բաղադրիչներից որևէ մեկին խրախուսելու համար։

Բացի այդ, միջազգային փորձը վկայում է, որ կուտակային կենսաթոշակային խնայողությունների խրախուսման նպատակով տրամադրվող արտոնությունները պետությունների վրա բավական թանկ են նստում, սակայն, մասնակցությունը կամավոր կենսաթոշակային սխեմաներին չի գերազանցում զբաղվածների 40-50%-ը։ Այդ է պատճառը, որ մի շարք երկրներ (օրինակ, Միացյալ Թագավորությունը, Ավստրալիան) վերջին մի քանի տարիների ընթացքում սկսել են ներդնել այսպես կոչված «ավտոմատ ընդգրկման» մոտեցումը։ Այս մոտեցման համաձայն գործատուները պարտադիր կերպով իրենց աշխատողներին առաջարկում և ավտոմատ ընդգրկում են կամավոր կուտակային կենսաթոշակային սխեմաներում՝ նրանց տալով սխեմայից դուրս գալու հնարավորություն։ Բայց որոշ ժամանակ անց այդ աշխատողները նորից «ավտոմատ ընդգրկման» սկզբունքով ընդգրկվում են կենսաթոշակային սխեմաներում։ Տրաբանությունն այն է, որ կենսաթոշակային սխեմայից դուրս եկած, բայց կրկին դրանում ընդգրկված անհատների մի որոշակի մասը՝ տեսնելով այդ սխեմայի առավելությունները, գերադասում է շարունակել կատարել կենսաթոշակային խնայողություններ։

<u>Ամփոփ եզրակացություն</u>.

1. Կենսաթոշակների ֆինանսավորմանն են ուղղվում սոցիալական ոլորտի համար հատկացվող ֆինանսական միջոցների ավելի քան 30%-ը, բյուջեի ընդամենը ծախսերի 16%-17%-ը և ՀՆԱ-ի մինչև 4.4%-ը։
2. Տնտեսության վրա կենսաթոշակների ֆինանսավորման բեռն ունի աճի միտում՝ պայմանավորված հասարակության ծերացմամբ։ Միջազգային առանձին փորձագիտական գնահատականների համաձայն հանրային ծախսերը կենսաթոշակների վրա՝ պայմանավորված կյանքի սպասվող տևողության բարելավմամբ, մոտակա հիսուն տարիների ընթացքում կավելանան ՀՆԱ-ի 1.5%-ից 2%-ով, նույնիսկ այն դեպքում, եթե հաշվի առնվեն հասարակության ծերացման ազդեցությունը մեղմացնող (offset) այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշխատուժի

տնտեսական ակտիվության (ի հաշիվ զբաղվածության աճի) և կենսաթոշակային համակարգում ընդգրկվածության մակարդակների բարելավումը։

3. Կենսաթոշակային համակարգում բնակչության համարժեք ընդգրկվածության ապահովումը ինչպես բազմաթիվ երկրներում, այնպես էլ Հայաստանում կենսաթոշակային քաղաքականության լրջագույն մարտահրավերներից է. կենսաթոշակային համակարգում ընդգրկվածության մակարդակը՝ հարկատուների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում 2014թ. կազմել է 53.9%, 2015թ.՝ 55.3% է և ունի բարելավվելու մեծ պոտենցիալ։
4. Կենսաթոշակային համակարգում բնակչության ընդգրկվածության համարժեք մակարդակի ապահովման դեպքում՝ համակարգի վարչարարության արդյունավետության ներկայիս բարձր մակարդակի պայմաններում, կարելի կլինի ապահովել հանրային ֆինանսների առավել արդյունավետ օգտագործում։
5. Եկամտային հարկ վճարողների թվաքանակի վերաբերյալ անհրաժեշտ ձևաչափով տեղեկատվության ստացումը թույլ կտա կատարել առավել համակողմանի վերլուծություն և իրատեսական կանխատեսումներ ինչպես հարկ վճարողների, այնպես էլ հարկային մուտքերի վերաբերյալ։ Կարևորվում է նշված տեղեկատվությունը տրամադրող կառույցի/կառույցների հետ գործընկերային հարաբերությունների կառուցումը և անհրաժեշտ պարբերականությամբ և ձևաչափով տեղեկատվության ստացումը։

Ոլորտ 3 Ծախսեր (աշխատանքային կենսաթոշակի վճարման համար հատկացվող գումարներ)

ՀՀ կենսաթոշակային համակարգի ծախսերը տարանջատվում են ըստ հետևյալ երկու հոդվածների.

- աշխատանքային կենսաթոշակների վճարման համար հատկացված միջոցներ
- վարչական ծախսեր:

Համակարգին հատկացված միջոցների 99%-ն ուղղվում է աշխատանքային կենսաթոշակների վճարմանը, մնացած 1%-ի հաշվին ֆինանսավորվում են համակարգի աշխատողների աշխատավարձի, իրազեկման և այլ վարչական ծախսեր:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 23. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ



Աղբյուրը ՝«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ

Վարչական ծախսերի գերակշռող մասն ուղղվում է համակարգի աշխատողների աշխատավարձի ֆինանսավորմանը: Ընդ որում, աշխատավարձի ֆինանսավորման ծախսերի բաժինը 2012-2015թթ. դրսևորել է անընդհատ աճի միտում. 2012թ. 74%-ից 2015թ. այն հասել է 85%-ի:

Վարչական այլ ծախսերի ֆինանսավորմանն ուղղված միջոցների բաժինը 2012-2014թթ. պահպանվել է հարաբերականորեն կայուն մակարդակի վրա, իսկ 2015թ. կրճատվել է մոտ 23%-ով, ընդամենը վարչական ծախսերի մեջ կազմելով է 15%: Համակարգի իրազեկման աշխատանքների ֆինանսավորմանն ուղղվող աննշան միջոցները 2015թ. ընդհանրապես զրոյացվել են (տես գծապատկեր 23-ը):

Աշխատանքային կենսաթոշակների վճարման ծախսերի գերակշռող մասը՝ 69.2%-ը 2014թ. բաժին է ընկել կենսաթոշակառուների ամենամեծ խմբի՝ տարիքային կենսաթոշակառուների կենսաթոշակների ֆինանսավորմանը, ծախսերի մյուս խոշոր հոդվածը հաշմանդության կենսաթոշակների ֆինանսավորման ծախսերն են՝ 25.7%, մնացած 5.1%-ը բաժին է ընկնում այլ տեսակի կենսաթոշակների ֆինանսավորմանը (տես գծապատկեր 24-ը):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 24 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱԽՍԵՐՆ ԸՍՏ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՏԵՍԱԿԻ,%-ՈՎ ԸՆԴԱՄԵՆԻ ՄԵՋ, 2014թ.



Աղբյուրը ՝«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ

Կենսաթոշակների վճարման ծախսերի նման բաշխվածքը բացատրվում է կենսաթոշակառուների՝ ըստ կենսաթոշակի տեսակի, թվաքանակի կառուցվածքով: Պատկերն այլ է **մեկ կենսաթոշակառուի հաշվով ծախսերի** դեպքում (տես գծապատկեր 25-ը): Մեկ կենսաթոշակառուի հաշվով կենսաթոշակային ծախսերն

ԳԾԱՊԱՏԿԵՐ 25 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԾԱԽՍԸ ՄԵԿ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒԻ ՀԱՇՎՈՎ, ԸՍՏ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ, 2014թ. ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

ՄԻՋԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ %-ՈՎ ԸՆԴԱՄԵՆԸ ՄԻՋԻՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ



Աղբյուրը ՝«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ

ամենաբարձրն են երկարամյա ծառայության կենսաթոշակառուների համար, իսկ ամենացածրը՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակառուների համար: Պատկերը համադրելի է ըստ կենսաթոշակի տեսակի միջին կենսաթոշակի չափի հետ. երկարամյա ծառայության միջին կենսաթոշակը ընդամենը միջին կենսաթոշակին գերազանցում է 34%-ով, մինչդեռ կերակրողին կոցնելու միջին կենսաթոշակը կազմում է ընդամենը միջինի 66.4%-ը:

Կենսաթոշակային համակարգի ծախսը մեկ կենսաթոշակառուի հաշվով 2012թ. -ից ի վեր աճի միտում է դրսևորել՝ 377.7 հազար դրամից 2015թ. հասնելով 482.4 հազար դրամի կամ ավելանալով 27.7%-ով: Աճի միտում են դրսևորել նաև մեկ հարկատուի հաշվով համակարգի մուտքերը՝ համապատասխանաբար 402.6 և 515.7 հազար դրամ կամ 28.1%-ով:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 24. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԵԿ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՌՈՒԻ ՀԱՇՎՈՎ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ՄԵԿ ՀԱՐԿԱՏՈՒԻ ՀԱՇՎՈՎ ՄՈՒՏՔԵՐԻ ԱՃԸ 2012Թ. ՀԱՄԵՄԱՏ



Աղբյուրը ՝«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ

2012թ. համեմատ 2015թ.-ին մեկ կենսաթոշակառուի հաշվով ծախսերի և մեկ հարակատուի հաշվով մուտքերի աճի տեմպերը բավական մոտ են եղել, սակայն պատկերն այլ էր 2013 և 2014 թվականներին. **2012թ. համեմատ, 2013թ. և 2014թ. մեկ հարկատուի հաշվով հարկային մուտքերի աճի տարեկան տեմպերն ավելի բարձ են եղել (11.6% և 22.6% համապատասխանաբար), քան մեկ կենսաթոշակառուի հաշվով կենսաթոշակային ծախսերի աճի տարեկան տեմպերը (-0.5% և 14.7% համապատասխանաբար):** Դա էլ նպաստել է, որ 2012-2015թթ. ընթացքում կենսաթոշակային համակարգի խնամառության համեմատաբար կայուն մակարդակի պայմաններում, կենսաթոշակային համակարգի հաշվեկշիռը՝ եկամտային հարկից ստացվող մուտքերի և կենսաթոշակային համակարգի ծախսերի տարբերությունը, լինի դրական (տես գծապատկեր 24-ը):

Հարկային մուտքերի ավելի բարձր աճի տեմպը մասամբ կարող է բացատրվել 2013թ. եկամտային հարկի ներդրման արդյունքում գործատուի կողմից նախկինում վճարվող պարտադիր սոցիալական ապահովագրության վճարը աշխատողի աշխատավարձին ավելացնելու հանգամանքով, ինչի արդյունքում անվանական աշխատավարձը բարձրացավ: Եկամտային հարկից համակարգի մուտքերն ավելացել են նաև ի հաշիվ 2014թ.-ի երկրորդ կեսից պետական հատվածի աշխատողների աշխատավարձերի կտրուկ աճի հաշվին:

Ոլորտ 4 Կենսաթոշակային համակարգի Ֆինանսական կայունություն

Կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության և տրամադրվող կենսաթոշակների համարժեքության տեսանկյունից (այս մասին ավելի մանրամասն անդրադարձ կկատարվի ոլորտ 5-ի՝ «Աշխատանքային կենսաթոշակի թիրախավորումը» բաժնի վերլուծության ընթացքում) հետաքրքրություն է ներկայացնում **մեկ կենսաթոշակառուի հաշվով ծախսեր/մեկ հարկատուի հաշվով մուտքեր հարաբերակցությունը՝** ըստ առանձին տարիների մեկ հարկատուի կողմից կատարված

եկամտահարկի հատկացումների 84%-ից 95%-ը ֆինանսավորում է մեկ

ՆԵՐԴԻՐ 7. ԿԵՆՍԱԹՈՇԱԿՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Մինչև եկամտային հարկի ներդրումը (2013թ. հունվարի 1-ից), եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներից պետական բյուջեից ընդամենը մուտքերում պարտադիր սոցապ վճարներից ստացված մուտքերի տեսակարար կշիռը 2011թ. և 2012թ. կազմել է 71.4% և 64.7% համապատասխանաբար (հաշվարկները կատարվել են միջին աշխատավարձի համար)։

Կատարած հաշվարկները ցույց են տալիս, որ եկամտահարկի և պարտադիր սոցապ վճարների՝ 2012թ. գործող դրույքաչափերը 2013-2015թթ. միջին աշխատավարձերի նկատմամբ կիրառելու դեպքում, սոցապ վճարների բաժինը «եկամտահարկ և սոցապ վճարներ ընդամենը մուտքերի» մեջ կազմում է. 66.8%՝ 2013թ.-ին, 66.7%՝ 2014թ.-ին և 63.6%՝ 2015թ.-ին (քանի որ սոցապ վճարումների դրույքաչափերը ռեգրեսիվ բնույթի էին, իսկ եկամտահարկինը՝ պրոգրեսիվ, աշխատավարձի աճին զուգընթաց սոցապ վճարների բաժինը ընդամենը մուտքերի մեջ ուներ նվազման միտում)։

Հետևաբար, կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության մասին խոսելիս կարելի է պայմանականորեն ընդունել, որ

ա) հավաքագրված ամբողջ եկամտային հարկն ուղղվում է կենսաթոշակների ֆինանսավորմանը. այս դեպքում կենսաթոշակային համակարգի հաշվեկշիռը դրական է՝ մուտքերը գերակշռում են համակարգի ծախսերը,

բ) հավաքագրված եկամտային հարկի միայն 65%-ն է, որ պետք է ուղղվի համակարգի ֆինանսավորմանը (ելնելով վերը բերված հաշվարկի արդյունքներից). այս դեպքում արդեն կստացվի բացասական հաշվեկշռով կենսաթոշակային համակարգ՝ ծախսերը կգերազանցեն համակարգի մուտքերը։

Կենսաթոշակային համակարգի հաշվեկշիռը՝ համաձայն վերը նկարագրածի, կլիներ այսպիսին.

	2012	*2013*	*2014*	*2015*
Պետական բյուջե վճարված եկամտային հարկ, (մլրդ դրամ)	220.7	274.5	301.6	320.2
Եկամտային հարկից ստացվող մուտքերի՝ նախկին սոցապ վճարներին համապատասխանող հաշվարկային մասը՝ 65%-ը	143.5	178.4	196.0	208.1
Պետական բյուջեի ծախսերը կենսաթոշակային համակարգի վրա (մլրդ դրամ)	169.4	169.0	196.9	223.6
Կենսաթոշակային համակարգի հաշվեկշիռը, մլրդ դրամ				
ա/ եկամտային հարկից մուտքերի և կենսաթոշակային ծախսերի տարբերությունը	51.4	105.5	104.7	96.6
բ/ եկամտային հարկից մուտքերի 65%-ի և կենսաթոշակային ծախսերի տարբերությունը	-25.9	9.4	-0.9	-15.5
Կենսաթոշակային համակարգի հաշվեկշիռը,%-ով ՀՆԱ-ի նկատմամբ				
ա/ եկամտային հարկից մուտքերի և կենսաթոշակային ծախսերի տարբերությունը	1.2%	2.3%	2.2%	1.9%
բ/ եկամտային հարկից մուտքերի 65%-ի և կենսաթոշակային ծախսերի տարբերությունը	-0.6%	0.2%	0.0%	-0.3%

կենսաթոշակառուի կենսաթոշակային ծախսը։ Սա, ինչպես և **համակարգի խնամառության 75% գործակիցը** խոսում են համակարգի՝ նույնիսկ տրամադրվող ոչ բարձր կենսաթոշակների պարագայում, ֆինանսական կայունության վտանգված լինելու մասին (տես ներդիր 7-ը)։

Այսպիսով, եթե համարենք, որ կենսաթոշակային համակարգի ծախսերը ֆինանսավորվում են միայն եկամտային հարկից ստացվող մուտքերի հաշվին, ապա կարելի է ասել, որ համակարգի հաշվեկշիռը դրական է. 2014թ. եկամտային հարկի միայն 65.9%-ն ուղղվել է կենսաթոշակային համակարգին, իսկ մնացած 34.1%-ն ուղղվել է այլ ծրագրերի (սոցիալական կամ ոչ սոցիալական) ֆինանսավորմանը:

Իրականում, **կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության** մասին խոսելիս անհրաժեշտ է զուգահեռաբար վերլուծել թե որքանով են տրամադրվող կենսաթոշակները ապահովում համարժեք եկամուտ կենսաթոշակառուների համար և նրանց պաշտպանում աղքատությունից: Կենսաթոշակների համարժեքության վերլուծությունն ավարտելուց հետո կրկին անդրադարձ կկատավի համակարգի ֆինանսական կայունությանը:

<u>Ամփոփ եզրակացություն</u>.

1. Կենսաթոշակային համակարգի ծախսերի 99%-ը, ինչը 2014թ. կազմել է ՀՆԱ-ի 4.1%-ը, բյուջեի ծախսերի 15.7%-ը, սոցիալական ոլորտին կատարված հատկացումների 33.1% և սոցիալական պաշտպանության ծախսերի 54.9%-ը, ուղղվում է բուն աշխատանքային կենսաթոշակների վճարմանը: Մի կողմ թողնելով տրամադրվող կենսաթոշակների համարժեքության հարցը, կենսաթոշակային քաղաքականություն իրականացման տեսանկյունից կարևոր է տալ հետևյալ հարցի պատասխանը. արդյո՞ք երկիրն ունի ուժեղ տնտեսություն, որպեսզի կարողանա դիմակայել/կլանել կենսաթոշակային ծախսերի ավելի բարձր մակարդակ: Ակնհայտ է, որ ՀՀ տնտեսության և պետական բյուջեի հնարավորությունները մոտ են սահմանագծին:
2. Կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունը վտանգված է. մեկ հարկատուի կողմից կատարված հատկացումների 88%-ը 2014թ. և 95%-ը 2015թ. ուղղվել է մեկ կենսաթոշակառուի կենսաթոշակի ֆինանսավորմանը:
3. **Մեկ կենսաթոշակառուի հաշվով համակարգի ծախսերն ունեն անընդհատ աճի միտում: 2012-2015թթ. ընթացքում կենսաթոշակային համակարգի խնամառության համեմատաբար կայուն մակարդակի պայմաններում կենսաթոշակային համակարգի հաշվեկշիռը դրական է եղել շնորհիվ այն բանի, որ մեկ հարկատուի հաշվով մուտքերի տարեկան աճի տեմպը գերազանցել է մեկ կենսաթոշակառուի հաշվով կենսաթոշակային ծախսերի աճի տեմպին (խոսքը ֆորմալ զբաղվածության դերի և փաստացի վճարվող աշխատավարձերի թափանցիկության մասին է):**

Այսպիսով կենսաթոշակային համակարգի «վճարունակության» ընդլայնման և ֆինանսական կայունության ապահովման տեսանկյունից կարևորվում է համակարգի ֆինանսական մուտքերի վրա ազդող երեք հիմնական գործոններից յուրաքանչյուրի՝ հատկացումներ կատարողների թվաքանակ, աշխատավարձերի մակարդակ և հատկացումների դրույքաչափ, դերի բարձրացմանը նպաստող խթանիչ մեխանիզմների հստակեցումն ու կիրառումը:

Ոլորտ 5: Աշխատանքային կենսաթոշակի թիրախավորումը

Կենսաթոշակային ցանկացած քաղաքականության հիմնական խնդիրը կենսաթոշակային եկամուտների համարժեքության և այդ եկամուտների հաղթահարելիության՝ ֆինանսական կայունության միջև հավասարակշռության ապահովումն է: «Աշխատանքային կենսաթոշակ» ծրագրի համար սահմանված հեռահար նպատակը նույնպես կարևորում է այս հանգամանքը.

Կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության պայմաններում ապահովել կենսապահովման նվազագույն բյուջեի չափի հետ համադրելի պետական կենսաթոշակի նվազագույն չափ:

Հարկ է նշել, որ ի սկզբանե գոյություն ունի ակնհայտ փոխզիջում կենսաթոշակային եկամտի համարժեքության և համակարգի ֆինանսական կայունության միջև: Մի կողմից, պետական բարձր կենսաթոշակները ապահովում են կենսաթոշակային բարձր եմակուտ, բայց և թանկ արժեն: Մյուս կողմից, եթե պետական կենսաթոշակները չեն ապահովում կենսաթոշակային համարժեք եկամուտ, ապա աղքատության հաղթահարման նպատակով մշտապես կենսաթոշակների միանգամյա բարձրացման կամ լրացուցիչ նպաստների տրամադրման կարիք է զգացվում:

Նախքան տրամադրվող կենսաթոշակների չափի և դրա համարժեքության վերլուծությանն անցնելը անհրաժեշտ է հստակեցնել, թե ի՞նչ ասել է «համարժեք կենսաթոշակ»:

Կենսաթոշակների համարժեքության սահմանումը բարդ խնդիր է և բանավաճերն այս տերմինը սահմանելու առնչությամբ շարունակական են՝ չկա միասնական սահմանում, թե որքա՞ն պետք է լինի համարժեք կենսաթոշակային եկամտի չափը և կամ ի՞նչ է նշանակում համարժեք կենսաթոշակային եկամուտ:

Նեղ իմաստով կենսաթոշակային եկամուտը համարժեք է, եթե կենսաթոշակային տարիքում ապահովում է որոշակի ռեսուրսների բացարձակ նվազագույն մակարդակի (ինչը տարբեր երկրներում տարբեր է) ձեռք բերումը:

Առավել լայն սահմանումը համարժեքությունը դիտարկում է կենսաթոշակառուի դրամական և ոչ-դրամական կարիքների բավարարման տեսանկյունից: Համարժեքության առավել լայն սահմանման համաձայն (որը երևի թե ամենամոտն է հենց անհատի ընկալմանը) կենսաթոշակային եկամուտը համարում է համարժեք, եթե այն փոխարինում է աշխատանքային եկամուտն այն չափով, որ թույլ է տալիս պահպանել նախքան կենսաթոշակի անցնելն ունեցած կենսամակարդակը:

Այսպիսով, ՄԳ ցուցանիշների սույն բաժնի վերլուծությունն իրականացվել է ելնելով կենսաթոշակի համարժեքությունը գնահատող հետևյալ երկու մոտեցումներից.

ա) Որքանո՞վ է կենսաթոշակային եկամուտը թույլ տալիս անձին բավարարել իր հիմնական կարիքները՝ համեմատությունն այս դեպքում տարվել է նվազագույն սպառողական զամբյուղի ու աղքատության գծի ու ծայրահեղ աղքատության գծի հետ: Սա թույլ է տալիս հասկանալ, թե որքանով է տրամադրվող կենսաթոշակը կանխարգելում աղքատությունը,

բ) Որքանո՞վ է կենսաթոշակային եկամուտը թույլ տալիս անձին պահպանել իր՝ նախքան կենսաթոշակի անցնելն ունեցած կենսամակարդակը՝ համեմատությունն այս դեպքում տարվել է ՀՀ տնտեսությանը բնորոշ միջին աշխատավարձի նկատմամբ: Փոխհատուցման գործակիցն (ՓԳ) այն ցուցանիշն է, որը լայնորեն կիրառվում է սահմանելու համար, թե որքանով է կենսաթոշակի անցնելիս պահպանվում կենսաթոշակառուի կենսամակարդակը:

Աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկվում է ՀՀ «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով սահմանված բանաձևի հիման վրա[12] և բաղկացած է երկու մասից՝ հիմնական կենսաթոշակ և կենսաթոշակի աշխատանքային մաս կամ աշխատանքային ստաժի տարիների դիմաց տրվող փոխհատուցում (Կենսաթոշակի հաշվարկման բանաձևը տես Հաշվետվության Մաս 1-ում ներդիր 3-ում): Հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքի չափը հաստատվում է ՀՀ կառավարության որոշմամբ: 2015թ. հունվարի 1-ից հիմնական կենսաթոշակը կազմում է 16000 դրամ, ապահովագրական ստաժի 1 տարվա արժեքը առաջին 10 տարվա (ներառյալ) աշխատանքային ստաժի համար սահմանվել է 800 դրամ, 11-ից ավել յուրաքանչյուր աշխատանքային ստաժի համար՝ 500 դրամ: 2014թ. միջին կենսաթոշակը 2012թ. համեմատ աճել է 15.8%-ով, իսկ հիմնական կենսաթոշակը՝ 8%-ով, 2015թ. այդ ցուցանիշները 2012թ. համեմատ ավելացել են 32%-ով և 23%-ով համապատասխանաբար:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 27 ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ և ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՍՏԱԺԻ ՄԵԿ ՏԱՐՎԱ ԱՐԺԵՔԻ ՉԱՓԸ 2012-2015ԹԹ., ԴՐԱՄ



Աղբյուրը ՝«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ

[12] Տես «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի Հոդված 15ը՝ «Աշխատանքային կենսաթոշակի չափը հաշվարկելու կարգը»:

2012-2015թթ. ընթացքում միջին կենսաթոշակի և դրա բաղադրիչների դինամիկան բերված է գծապատկեր 27-ում:

Կանայք կազմում են կենսաթոշակառուների մոտ 62%-ը և ստանում են կենսաթոշակ, որը 2015թ. 8%-ով ցածր է եղել տղամարդկանց կենսաթոշակից: Կանանց և տղանարդկանց կենսաթոշակների չափի միջև այս խզումը շատ էական չէ, եթե համադրվի օրինակ ԵՄ երկրների մակարդակի հետ, որտեղ այն կազմում է մոտ 39%: Հայաստանում կանանց և տղամարդկանց կենսաթոշակների միջև ոչ մեծ խզումը պայմանավորված է նրանով, որ կանայք իրենց աշխատանքային պատմության ընթացքում ավելի հաճախ են ունենում ընդհատումներ: Խզումը կարող էր անհամեմատ մեծ լինել, եթե կենսաթոշակի չափը պայմանավորված լիներ ոչ միայն աշխատանքային ստաժի տարիներով, այլ նաև կապված լիներ աշխատավարձի չափի հետ (կանայք միջին հաշվով վաստակում են ավելի քիչ, քան տղամարդիկ. կանանց միջին աշխատավարձը Հայաստանում կազմում է տղամարդկանց միջին աշխատավարձի մոտ 65%-ը):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 28. ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆ ՄԻՋԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ ԸՆԴԱՄՆԵԼ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ, 2014թ



ԳԾԱՊԱՏԿԵՐ 29. ԿԱՆԱՆՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԸ %-ՈՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ, 2014թ.



Աղբյուրը «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ և ՀՀ ԱՎԾ «ՀՀ սոցիալական վիճակը, 2014թ.» ժողովածու, էջ 400

Տրամադրվող աշխատանքային կենսաթոշակի նպատակն է ապահովել կենսաթոշակառուների հիմնական կարիքների բավարարումը և տարեցների շրջանում

աղքատության կանխարգելումը: Միջին կենսաթոշակի հարաբերակցությունը աղքատության և ծայրահեղ աղքատության գծերի, և ՆՍԶ նկատմամբ ցույց է տալիս, թե նեղ իմաստով որքան համարժեք է միջին աշխատանքային կենսաթոշակը, որքանով է այն ապահովում կենսամակարդակի ընդունելի նվազագույնը: Գծապատկեր 30-ում բերված տվյալները վկայում են, որ 2012թ. արդեն տրամադրվող աշխատանքային կենսաթոշակները 23.1%-ով գերազանցել են ծայրահեղ կամ պարենային աղքատության

ԳԾԱՊԱՏԿԵՐ 30 ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԵԿԱՄՏԻ ՀԱՄԱՐԺԵՔՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՂ ԻՄԱՍՏՈՎ



	2012	2013	2014	2015
Միջին կենսաթոշակ/աղքատության միջին գիծ	69.5%	64.7%	73.4%	85.2%
Միջին կենսաթոշակ/ՆՍԶ	60.0%	55.1%	62.1%	75.8%
Միջին կենսաթոշակ/ծայրահեղ աղքատության գիծ	123.1%	114.6%	129.9%	150.7%

Աղբյուրը ՝«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ

գիծը և կենսաթոշակների անընդհատ ավելացման արդյունքում կենսաթոշակ/ծայրահեղ աղքատություն հարաբերակցությունը կազմել է 150.7%: Սակայն հիմնական կարիքների բավարարման և տարեցների շրջանում աղքատության կանխարգելման իմաստով աշխատանքային միջին կենսաթոշակը հեռու է համարժեք լինելուց. միջին կենսաթոշակ/աղքատության գիծ հարաբերակցությունը 2012թ. 69.5%-ից 2015թ. հասել է 85.2%-ի, իսկ միջին կենսաթոշակ/ՆՍԶ հարաբերակցությունը կազմել է 60% և 75.8% համապատասխանաբար:

Նախքան կենսաթոշակի անցնելն ունեցած կենսամակարդի ապահովման և սպառման կրճատումը մեղմելու տեսանկյունից տրամադրվող կենսաթոշակները շարունակում են մնալ ցածր: Փոխհատուցման գործակցի (ՓԳ) դինամիկան 2012-2015թթ բերված է գծապատկեր 31-ում:

ՓԳաա գործակիցը հաշվարկած որպես միջին կենսաթոշակ/միջին անվանական աշխատավարձ հարաբերակցություն, 2012թ. 27.6%-ից իջել է մինչև 22.3% 2015թ-ին: Քանի որ աշխատանքային կենսաթոշակը չհարկվող կամ որ նույնն է՝ տնօրինվող եկամուտ է, ուստի ավելի նպատակահարմար է դիտարկել ՓԳտա հաշվարկած որպես միջին կենսաթոշակ/միջին տնօրինվող աշխատավարձ հարաբերակցություն: Թեև ՓԳտա-ն մի փոքր ավելի բարձր է, քան ՓԳաա-ն, այնուամենայնիվ կենսաթոշակի անցնելուց հետո կենսաթոշակառուն ստիպված է կրճատել իր սպառումը համարյա երեք քարորդով կամ 75%-ով:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 31. ՄԻՋԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋԻՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ (ՓԳաա) ԵՎ ՄԻՋԻՆ ՏՆՕՐԻՆՎՈՂ ԵԿԱՄՏԻ (ՓԳտա) ՆԿԱՏՄԱՄԲ



Աղբյուրը ՝«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ:
*-ով նշված են ցուցանիշի կանխատեսված արժեքները

Աշխատանքային կենսաթոշակի բաղադրիչներից է հիմնական կենսաթոշակը: Ընդհանրապես, հիմնական կենսաթոշակի (ՀԿ) նպատակը նվազագույն կենսամակարդակի ապահովումն է և աղքատության հաղթահարումը տարեցների շրջանում: Հիմնական կենսաթոշակի ներկա մակարդակն ակնհայտորեն հեռու է նվազագույն կենսամակարդակի ապահովման համար բավարար լինելուց՝ թեև 2015թ. այն աճել է 2014թ. համեմատ, բայց կազմում է ընդամենը ՆՍԶ 58.5%-ը (տես գծապատկեր 32-ը):

ԳԾԱՊԱՏԿԵՐ 32. ՀԻՄՆԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՎ ՄԻՋԻՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ



Աղբյուրը ՝«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի ՄԳ ցուցանիշների շրջանակ:

Կենսաթոշակային քաղաքականությունը Հայաստանում այնպիսին է, որ պետական կենսաթոշակները կրում են ըդգծված վերաբաշխողական բնույթ՝ եկամուտների վերաբաշխումն ուղղված է աղքատության հաղթահարմանը, միաժամանակ համակարգում ներդրվել են նաև կամավոր և պարտադիր կենսաթոշակային խնայողություններ իրականացնելու մեխանիզմներ: 2014թ. աշխատանքային կենսաթոշակի հաշվարկման բանաձևի փոփոխության արդյունքում երկու անգամ կրճատվել է ծայրահեղ աղքատության գծից ցածր կենսաթոշակ ստացող շահառուների թվաքանակը, մինչդեռ աղքատության գծից ցածր կենսաթոշակ ստացողների թվաքանակն, ընդհակառակը, ավելացել է 26.1%-ով:

Այսպիսով, կենսաթոշակային համակարգի ֆինանսավորմանն ուղղվող միջոցների ներկա մակարդակի պայմաններում տրամադրվող աշխատանքային կենսաթոշակները թե՛ նեղ (ՆՍԶ-ի հետ համեմատելու դեպքում՝ հիմնական կարիքների բավարարում) և թե՛ լայն (տնօրինվող աշխատավարձի հետ համեմատելու դեպքում՝ անհատական սպառման կրճատման մեղմում կենսաթոշակի անցնելուց հետո) իմաստով չի կարելի համարել համարժեք։

Սերունդների համերաշխության վրա հիմնված կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունության բազային թվաբանությունը հուշում է, որ կենսաթոշակային համակարգը հավասարակշռված է, եթե համակարգի մուտքերն ու ծախսերը հավասար են։ Ցույց տալու համար, թե ինչպես են կենսաթոշակային համակարգի ֆինանսական կայունությունն ու տրամադրվող կենսաթոշակների համարժեքությունը հակադարձորեն փոխկապակցված, կենսաթոշակի մակարդակի, համակարգին հատկացումներ կատարողների թվաքանակի և հատկացման դրույքաչափերի վերաբերյալ ենթադրությունների հիման վրա կատարվել են ներդիր 8-ում բերված հաշվարկները։ Ենթադրենք, 2014թ. եկամտային հարկից ստացվող մուտքերն ամբողջությամբ պետք է ուղղվեին աշխատանքային կենսաթոշակների վճարմանը։ Այս դեպքում ակնհայտ է, որ կենսաթոշակային համակարգի փաստացի մուտքերը 2014թ. գերազանցել են համակարգի ծախսերը։ Հաշվարկների համաձայն, կենսաթոշակային համակարգի մուտքերը և ծախսերը հնարավոր կլիներ հավասարակշռել (2014թ. կենսաթոշակի միջին չափը անփոփոխ պահելու դեպքում) եկամտային հարկի 17% միջին դրույքաչափի (հաշվարկած միջին աշխատավարձի համար) պարագայում։ Ուստի, կարելի է ասել, որ եկամտային հարկի գործող փաստացի միջին 25.9% դրույքաչափի 17%-ը 2014թ. ուղղվել է կենսաթոշակների ֆինանսավորմանը, իսկ մնացած 8.9%-ն ուղղվում է սոցիալական կամ ոչ սոցիալական այլ ծրագրերի ֆինանսավորմանը։

Եթե աշխատանքային միջին կենսաթոշակը բարձրացվի այնպես, որ փոխհատուցման գործակիցը (հաշվարկած անվանական աշխատավարձի նկատմամբ) կազմի 40%, ապա անվանական աշխատավարձի 2014թ. մակարդակը և եկամտային հարկ վճարողների թվաքանակը հաստատուն պահելու դեպքում եկամտային հարկի միջին դրույքաչափը կարիք կլինի բարձրացնել մինչև 30%։ Հասկանալի է, որ եկամտային հարկի դրույքաչափի բարձրացումն անընդունելի է և կարող է ունենալ ոչ-ֆորմալ զբաղվածության աճին նպաստող ազդեցություն։

Իսկ եթե ենթադրենք, որ միջին կենսաթոշակի փոխհատուցման գործակիցը պետք է բարձրացվի մինչև 40% եկամտային հարկի գործող փաստացի միջին դրույքաչափը անփոփոխ պահելու պայմանով, ապա, հաշվարկների համաձայն, եկամտային հարկ վճարողների թվաքանակը պետք 611.1 հազարից ավելացնել մինչև 707.3 հազարի։

Այսպիսով, աշխատանքային կենսաթոշակների բարձրացման և համարժեքության տեսանկյունից ընդունելի ՓԳ ապահովելու նպատակով կարևորվում է համակարգում ընդգրկվածության մակարդակի բարձրացումը՝ եկամտային հարկ վճարողների թվաքանակի ավելացումը։

<u>Ամփոփ եզրակացություն</u>.

1. Կենսաթոշակային գործող համակարգի ֆինանսական կայունության խնդրի լուծումը հակազդում է կենսաթոշակների համարժեքության ապահովման վրա։ Արդյունքում, եթե նույնիսկ հավաքագրված ամբողջ եկամտային հարկը ուղղվի աշխատանքային կենսաթոշակների վճարմանը, ապա հաղթահարելի առավելագույն փոխահատուցման գործակիցը չի կարող գերազանցել 35%-ը, ընդ որում միջին աշխատավարձից բարձր աշխատավարձ ստացող մասնակիցների համար ՓԳ-ը կլինի անհամեմատ ավելի ցածր։
2. Սերունդների համերաշխության սկզբունքի վրա հիմնված կենսաթոշակային համակարգը չի երաշխավորում անհատի անձնական եկամտին համարժեք փոխհատուցում, այն ուղղված է նվազագույն կարիքների բավարարմանը, թեև կենսաթոշակների փաստացի մակարդակն այսօր չի ապահովում նաև նեղ իմաստով այդ համարժեքությունը։ Կենսաթոշակային ծախսերը, կազմելով սոցիալական ապահովության համակարգի ծախսերի ամենամեծ հոդվածը, չեն կարողանում մեղմել սպառման կտրուկ անկումը կենսաթոշակի անցնելիս։
3. Աշխատանքային կենսաթոշակի հաշվարկման ներկայիս բանաձևը «լարվածություն» է առաջացնում կենսաթոշակային համակարգի վերաբաշխողական գործառույթի և կենսաթոշակային համակարգին հատկացումներ կատարելու խթանների տրամադրման մեջ՝ գործող համակարգը որևէ կապ չի ապահովում աշխատավարձի կամ վճարված եկամտային հարկի ու կենսաթոշակի չափի միջև, այն «հրապուրիչ» չէ եկամտային հարկ վճարողի տեսանկյունից։

ՆԵՐԴԻՐ 8. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

I. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱԶԱՆ ԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՄՈՒՏՔԵՐԸ, 2014թ.				
à = E x W x μ	E_{2014} - Եկամտային հարկ վճարողների թվաքանակը 2014թ, հազ. մարդ	611.1	**à = 611.1 x (158580x12) x 0.259**	
	W_n- Միջին անվանական աշխատավարձը 2014թ, դրամ	158580		
	W_d - Տնօրինվող միջին աշխատավարձը 2014թ, դրամ	119269		
	μ_{2014} - եկամտային հարկի միջին դրույքաչափը՝ հաշվարկած միջին անվանական աշխատավարձի համար, %	25.9%		
	$à_{2014}$ - Համակարգի մուտքերը եկամտային հարկի հավաքագրումից 2014թ., մլրդ դրամ		$à_{2014}$ =	301.6
II. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԾԱԽՍԵՐ				
â = P x N	P_{2014} - Աշխատանքային կենսաթոշակառուների թվաքանակը 2014թ, հազ. մարդ	458.6	**â = 458.6*35966*12**	
	N_{2014} - Աշխատանքային միջին կենսաթոշակը 2014թ, դրամ	35,996		
	RR_d (ՓԳՏՍ) - Միջին կենսաթոշակ/տնօրինվող միջին աշխատավարձ հարաբերակցությունը 2014թ, %	30.2%	â =	198.1
	RR_n (ՓԳԱԱ) - Միջին կենսաթոշակ/անվանական միջին աշխատավարձ հարաբերակցությունը 2014թ, %	22.7%		
III. ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ				
B = à - â	**B –** Համակարգի եկամուտների և ծախսերի տարբերությունը /հավելուրդ/, մլրդ. դրամ	**B = 301.6 - 198.1**	**B =**	103.5

/Շարունակություն/

IV. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ՝ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԱՆՓՈՓՈԽ ՊԱՀԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ				
μ' = DR x RR	**μ'** - Եկամտային հարկի այն դրույթաչափը, որի դեպքում կենսաթոշակի միջին չափը անփոփոխ պահելու դեպքում կենսաթոշակային համակարգի մուտքերը և ծախսերը կհավասարակշռվեին, այինքն՝ à - â = 0	**μ' = (458.6/611.1) x (35996/119269) = = 75% x 30.2%**		
	DR_{2014}- Կենսաթոշակային համակարգի խնամառության գործակիցը 2014թ --> **$DR_{2014} = P_{2014}/E_{2014}$**	75.0%	**μ' =**	17.0%
	RR_n - փոխհատուցման գործակիցը 2014թ --> **$RR_n = N_{2014}/W_n$**	22.7%		
V. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ՝ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿՆ ԱՆՓՈՓՈԽ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՓԳ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ				
μ'' = DR x RR	**μ''** - Եկամտային հարկի այն դրույքաչափը, որի դեպքում կենսաթոշակների փոխհատուցման գործակիցը՝ հաշվարկած անվանական աշխատավարձի նկատմամբ հասցվում է 40%, իսկ կենսաթոշակային համակարգի մուտքերը և ծախսերը հավասարակշռված են (à - â = 0)	**μ'' = (458.6/611.1) x (0.4*158580/158580)**		
	DR_{2014}- Կենսաթոշակային համակարգի խնամառության գործակիցը 2014թ--> **$DR_{2014} = P_{2014}/E_{2014}$**	75.0%	**μ'' =**	30.0%
	$RR_{n40\%}$ - փոխհատուցման ենթադրվող գործակիցը --> **$RR_{n40\%} = N_{40\%}/W_n$**	40.0%		
	$à_{40\%}$ - համակարգի անհրաժեշ մուտքերը 40%ՓԳ ապահովելու համար	349.1		
	$â_{40\%}$ - համակարգի ծախսերը	349.1		
	$N_{40\%}$ - Աշխատանքային միջին կենսաթոշակ, որն ապահովում է 40% ՓԳ, դրամ	63432		

/Շարունակություն/

VI. ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԵՐԸ ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԹՎԱՔԱՆԱԿԸ՝ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿԻ ԳՈՐԾՈՂ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ԱՆՓՈՓՈԽ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՓԳ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐԱՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ				
$E_{40\%} = (P_{2014} \times RR_{40\%})/\mu$	$DR_{40\%}$- Կենսաթոշակային համակարգի խնամառության գործակիցը --> $DR_{40\%} = P_{2014}/E_{40\%}$		$E_{40\%} = (P_{2014} \times RR_{40\%})/\mu$	
	$N_{40\%}$ - Աշխատանքային միջին կենսաթոշակ, որն ապահովում է 40% ՓԳ, դրամ	63432		
	$RR_{40\%}$ - փոխհատուցման ցանկալի գործակիցը --> $RR_{40\%} = N_{40\%}/W_n$	40.0%	$E_{40\%} =$	707.3
	$E_{40\%}$ - Եկամտային հարկ վճարողների այն թվաքանակը, որը կապահովի 40% ՓԳ, հազ. մարդ	707.3		
	$\grave{a}_{E40\%}$ - համակարգի մուտքերը	349.1		
	$\hat{a}_{40\%}$ - համակարգի ծախսերը	349.1		

Աղբյուրը՝ Հեղինակի հաշվարկները:

Ոլորտ 6: Կենսաթոշակային համակարգի գործունեության արդյունավետությունը

Այս ոլորտի ցուցանիշներն անհրաժեշտ են ծրագրի ընթացիկ մշտադիտարկման համար: Միևնույն ժամանակ, այս ցուցանիշների դիտարկումը որոշակի ժամանակահատվածի ընթացքում հնարավություն է տալիս վերհանելու համակարգի ներսում գործընթացների դրական կամ բացասական միտումները, առաջադրելով որոշ հարցադրումներ կամ պահանջներ քաղաքականության վերանայման համար: Օրինակ, «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու (բանկ չներկայանալու) դեպքում կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքերի բարձր թիվը 2015թ.-ին՝ մոտ 25,000 դեպք (կամ անկանխիկ եղանակով կենսաթոշակ ստացողների մոտ 20 տոկոսը կամ ամեն հինգերորդը), և հատկապես 33%-ով աճը 2014թ.-ի համեմատ, վկայում է, որ քաղաքացիների շրջանում շատ ցածր է իրազեկվածության աստիճանը նման պահանջի մասին: Այս բացահայտումը ՄԳ շրջանակում հաստատվել է մի քանի ուղղություններով. ՀՀ ՍԱՊԾ ծախսերը իրազեկման համար բավական ցածր են, իսկ 2015թ.-ի համար ՀՀ ՍԱՊԾ կողմից նշվել է 0 դրամ: Կենսաթոշակառուների շրջանում իրականացված հարցումները ցույց են տվել շահառուների հիմնական դժգոհությունների մեջ բանկ ներկայանալու պահանջը չիմանալու պատճառով կենսաթոշակի դադարեցումները: Իսկ բանկերի աշխատողների հետ ֆոկուս խումբ քննարկումները, որոնք իրականացվել են «Վճարման ծառայություններ» ծրագրի ՄԳ շրջանակում, նույնպես ցույց են տվել, որ քաղաքացիների դժգոհության հիմնական առիթը դա տարեկան մեկ անգամ բանկ ներկայանալու պահանջի չիմացությունն է: Հետաքրքիր է, որ ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հետ ֆոկուս խումբ քննարկման ժամանակ կարծիք էր իշխում, որ այդ իրազեկմամբ պետք է զբաղվեն բանկերը և ոչ թե ՀՀ ՍԱՊԾ-ն: Միևնույն ժամանակ, կենսաթոշակի վճարման դադարեցումն այս հիմքով կարող է ներառել նաև այն դեպքերը, երբ կենսաթոշակառուն հիվանդ է եղել կամ գտնվել է Հայաստանից դուրս և ժամանակին բանկ ներկայանալ չի կարողացել:

Այս բաժնում ցուցանիշները դասակարգված են համաձայն ՄԳ անձնագրում թվարկված ծրագրի հիմնական գործողությունների.

- **Աշխատանքային կենսաթոշակի նշանակում՝** աշխատանքային կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց համապատասխան կենսաթոշակի նշանակում ըստ կենսաթոշակի տեսակների;
- **Աշխատանքային կենսաթոշակի վերահաշվարկում՝** աշխատանքային ստաժի հաշվարկում ըստ սահմանված կարգի և առանձնահատկությունների; աշխատանքային կենսաթոշակի չափի հաշվարկում ըստ սահմանված կարգի;
- Աշխատանքային կենսաթոշակ **ստանալու իրավունքի դադարեցում և վերականգնում**, աշխատանքային կենսաթոշակի **վճարման դադարեցում և վերականգնում՝** աշխատանքային կենսաթոշակի վերահաշվարկում, ստացման իրավունքի կամ վճարման դադարեցում և վերականգնում կամ վերսկսում ըստ սահմանված կարգի;

- Ծրագրի շրջանակում իրականացվող այլ ծառայություններ՝ **տեղեկատվության և պարզաբանումների տրամադրում քաղաքացիներին**։

Բաժնի ցուցանիշների վերլուծության ժամանակ ի հայտ են եկել մի շարք դժվարություններ՝ կապված տվյալների առկայության հետ։ Ինչպես նշվել է մեթոդաբանության հատվածում, այս բաժնի ցուցանիշների մեծ մասի տվյալները ՀՀ ՍԱՊԾ կարողացել է տալ միայն 2014թ.-ի համար։ Հաշվետվությունը գրելու պահին 2015թ.-ի որոշ տվյալներ տրամադրվեցին, սակայն ոչ բոլորն էին ներկայացնում տարեկան միջին ցուցանիշը, այլ հնարավոր է եղել ստանալ միայն պահի դրությամբ։ Թիրախային ցուցանիշների մասին ենթադրություններ կատարվել են եթե առկա տվյալները նման հնարավորություն ընձեռել են։

Բացի այդ, վարչարարության արդյունավետության գնահատման համար հիմք հանդիսացող կարևորագույն ցուցանիշները՝ շահառուներից ստացված բողոք դիմումները կապված կենսաթոշակի նշանակման, վերահաշվարկման կամ կենսաթոշակի իրավունքի դադարեցման/վերականգնման հետ ՀՀ ՍԱՊԾ կողմից չեն դասակարգվում ըստ կենսաթոշակի տեսակների և հիմնականում նման հավաքական հաշվառում չի տարվում։ **Թերևս այս տեղեկատվության դասակարգման անհրաժեշտությունն այն հիմնական առաջարկությունն է, որ ՄԳ շրջանակում կատարվել է ԱԽ կողմից՝ ծրագրի վարչարարության արդյունավետության գնահատման համար։**

Հաջորդ խնդիրն այն է, որ բաժնի մի շարք ցուցանիշների համար տվյալները համատարած լինել չեն կարող, քանի որ խախտումները վեր են հանվում ստուգումների ժամանակ, իսկ բոլոր գործերը մեկ տարվա ընթացքում ստուգում չեն անցնում։ Հետևաբար, առաջարկվում է սխալ հիմքով հաշվարկված աշխատանքային ստաժի դեպքերի թիվը կամ սխալ հիմքով վերահաշվարկված կենսաթոշակների թիվը կամ սխալ հիմքով կենսաթոշակի իրավունքի/վճարման դադարեցման դեպքերի թիվը ներկայացնող ցուցանիշների անվանման մեջ նշել, որ դրանք բացահայտված են ստուգումների արդյունքում։ Այս ցուցանիշների վերաբերյալ թիրախներ կարելի կլինի սահմանել միայն մի քանի տարի մշտադիտարկման ցուցանիշներ ունենալու դեպքում։

Կենսաթոշակների նշանակման, վերահաշվարկման կամ իրավունքի/վճարման վերականգման ժամկետների հետ կապված ցուցանիշներն արդիական չեն, և կարելի է դրանք ընդհանրապես հանել ՄԳ շրջանակից, քանի որ օրենքով սահմանված ժամկետները երբեք չեն խախտվում, ավելին, այդ գործողությունները կատարվում են ավելի արագ՝ արդիականացված SS համակարգի հնարավորություններից ելնելով։ Որպես այլընտրանք, ժամկետների խախտման հնարավոր դեպքերի բացահայտման համար, կարելի է առաջարկել, որ ցուցանիշը ցույց տա ստուգումների արդյունքում բացահայտված նման դեպքերը կամ որպես ցուցանիշ դիտարկել այն դեպքերը, երբ կենսաթոշակը վճարվել է կենսաթոշակի դիմումը ներկայացնելուց առնվազն 2 ամիս հետո։

Այսպիսով, Կենսաթոշակային համակարգի գործունեության արդյունավետությունը գնահատվել է առկա տվյալների հիման վրա։ ՄԳ անձնագրում նշված գործողությունների

մասին ստացված բացարձակ թվերը դիտարկելուց բացի, առկա տվյալների որոշ փոխկապվածություն հաշվելով, փորձ է արվել գնահատել մշտադիտարկման տեսակետից առավել հետաքրքիր և արժեքավոր ասպեկտներ, ինչպես օրինակ Ծրագիրն իրականացնող անձնակազմի ծանրաբեռնվածությունը, կենսաթոշակի իրավունքի դադարեցման պատճառներից առավել խնդրահարույցը և պատճառային կապերը, կենսաթոշակի վճարման վերականգնման դեպքերը և այլն, որոնք նաև կօգնեն ՀՀ ԱՍՀՆ-ին ծրագրի ծախսերի պլանավորման ժամանակ:

Ընդհանուր առմամբ, եթե չկա դինամիկ շարք, բացարձակ թվերով տեղեկատվությունը վերլուծության ժամանակ այդքան էլ արժեքավոր չէ: Հարաբերական ցուցանիշներն այս դեպքում շատ ավելի օգտակար են որևէ պատկեր տեսնելու համար:

ՄԳ ցուցանիշների 8-րդ ոլորտում՝ կենսաթոշակառուների զոհունակությունը մատուցվող ծառայություններից, ցուցանիշների մի խումբ վերաբերում է ՀՀ ՍԱՊԾ աշխատողների զոհունակությանը ծառայություններ մատուցելու համար առկա ռեսուրսներից: USAID/PRIP ծրագրի մասնագետներն առաջարկում են ցուցանիշների այդ խումբը տեղափոխել 6-րդ ոլորտ, քանի որ ծրագրի արդյունավետ վարչարարությունը գնահատելու համար կարևոր է գնահատել նաև ծրագիրն իրականացնող անձնակազմի համար բավարար պայմաններն ու անհրաժեշտ տեղեկատվության/ռեսուրսների առկայությունը: Սույն ոլորտի վերջում ներկայացված է նաև այս ցուցանիշների վերլուծությունը:

Աշխատանքային կենսաթոշակի նշանակում

Տարվա ընթացքում առաջին անգամ կենսաթոշակ ստանալու համար դիմած շահառուների թվաքանակի և **տվյալ տարում առաջին անգամ կենսաթոշակ ստացողների**ի համադրումները ցույց են տալիս, որ մոտ 90 տոկոսով կենսաթոշակի համար դիմածներն

ԳԾԱՊԱՏԿԵՐ 33 Տվյալ տարում առաջին անգամ կենսաթոշակ ստացողների հարաբերությունը տարվա ընթացքում առաջին անգամ կենսաթոշակ ստանալու համար դիմած շահառուների թվաքանակին, %, 2014- 2015թթ.



Աղբյուրը ՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ

անմիջապես ստանում են իրենց կենսաթոշակը: Բացառություն են կազմում արտոնյալ պայմաններով և երկարամյա ծառայության համար կենսաթոշակ ստացողները:

Շահառուների այս խմբի շրջանում տվյալ տարում կենսաթոշակի համար դիմածների միայն համապատասխանաբար 75,2 և 78,6 տոկոսին էր նշանակվել կենսաթոշակ 2014թ.-ին իսկ արդեն 2015թ.-ին Երկարամյա ծառայության համար կենսաթոշակի համար դիմածների 90 տոկոսը ևս ստացել էր իր կենսաթոշակը: Պատճառը, հավանաբար, կենսաթոշակի այս տեսակների համար պահանջվող պայմաններին համապատասխան հիմքերի չապահովելն է դիմողների կողմից կամ նրանց ցածր իրազեկվածությունը իրավունակության պայմանների վերաբերյալ: **Հետևաբար այս ցուցանիշը ևս կարևորում է հանրային իրազեկման աշխատանքների ինտենսիվության բարձրացման անհրաժեշտությունը:**

Մյուս կողմից **աշխատանքային կենսաթոշակների նշանակման հետ կապված բողոք դիմումների** նվազող միտումը 2012-2014թթ.-ի համար, ցույց է տալիս, որ կենսաթոշակի նշանակման համար դիմած քաղաքացիներին տրամադրվող խորհրդատվությունն ու պարզաբանումներն իրենց իրավունակության մասին բավական բարելավվել է: 2015-2017թթ.-ի համար այս ցուցանիշի թիրախները կանխատեսվել են նկատված նվազող միտումը պահպանելով, ենթադրելով, որ բողոք դիմումները կնվազեն տարեկան 10 տոկոսով: Եթե այս ցուցանիշը հնարավոր լիներ ստանալ դասակարգված թե հիմնականում որ կենսաթոշակի վերաբերյալ են ստացվում բողոք-դիմումները, ապա հնարավոր կլիներ նաև առաջարկություն տալ կոնկրետ այդ կենսաթոշակի մասին իրազեկվածության բարձրացման կամ իրավունակության պայմանների վերանայման համար: Այդուհանդերձ, **բողոք-դիմումների ավելի քան 50 տոկոս նվազումը անցած 3 տարիների ընթացքում բավական լավ ցուցանիշ է ծրագրի վարչարարության և շահառուներին մատուցվող ծառայությունների որակի բարելավման տեսանկյունից:** Այս դրական միտումը վերահաստատվել է նաև շահառուների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքներով, քանի որ կենսաթոշակառուների մոտ 90 տոկոսը գոհ է եղել ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների կողմից տրամադրված ծառայությունից/խորհրդատվությունից:

ԳԾԱՊԱՏԿԵՐ 34 Աշխատանքային կենսաթոշակների նշանակման հետ կապված բողոք դիմումների թիվը



Աղբյուրը ՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ

Աշխատանքային կենսաթոշակի վերահաշվարկում

Համաձայն ՀՀ Պետական կենսաթոշակների մասին օրենքի, աշխատանքային կենսաթոշակներից **վերահաշվարկվում են միայն տարիքային և հաշմանդամության կենսաթոշակները:** Ակնհայտ է, որ տարիքային կենսաթոշակների վերահաշվարկման

համար ստացվող դիմումներն ավելին են, քան հաշմանդամության կենսաթոշակի վերահաշվարկման համար ստացված դիմումները: Սակայն, եթե դիտարկվում է տվյալ տարում կենսաթոշակի նշանակման համար ստացված դիմումների և կենսաթոշակի վերահաշվարկման համար ստացված դիմումների վիճակագրությունը, ապա կենսաթոշակի նշանակման դիմումների համեմատ տարիքային կենսաթոշակի վերահաշվարկման դիմումներն ավելի փոքր են, քան հաշմանդամության կենսաթոշակի վերահաշվարկման դիմումները, համապատասխանաբար 1,72 և 2,28 անգամ 2014թ.-ին: Կենսաթոշակի վերահաշվարկման համար ստացված դիմումների 97 տոկոսը բավարարվում է՝ հաշմանդամության կենսաթոշակների դեպքում բավարարված դիմումներն աննշան փոքր են՝ 96 տոկոս: Նույն միտումը պահպանվել է նաև 2015թ.-ին:

Գծապատկեր 35: Կենսաթոշակի վերահաշվարկման համար ստացված դիմումների բաշխվածությունն ըստ կենսաթոշակի տեսակի, 2014թ	Գծապատկեր 36: Դիմումի հիման վրա վերահաշվարկված աշխատանքային կենսաթոշակների տոկոսը աշխատանքային կենսաթոշակի վերահաշվարկման համար ստացված դիմումների ընդհանուր թվի նկատմամբ, 2014-15թթ.
	

Աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցում և վերականգնում

Աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերը կազմել են տվյալ տարում կենսաթոշակ ստացողների 13%-ը 2014թ.-ին՝ որոշակի աճ գրանցելով 2013թ.-ի 11%-ի նկատմամբ (59958 և 50836 դեպք համապատասխանաբար): Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է օրենքով նախատեսված հետևյալ դեպքերում, որոնցից, ըստ առկա վիճակագրության, առավել գերակշռում է կենսաթոշակառուի մահվան դեպքում կենսաթոշակի իրավունքի և վճարման դադարեցումը՝ կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերի 75 տոկոսը՝ 2013թ.-ին և 77.5 տոկոսը 2014թ.-ին: Աղյուսակն 7-ում բերված աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերի վիճակագրությունը հիմնված է ՀՀ ՍԱՊԾ կողմից ՄԳ ցուցանիշների շրջանակի համար տրամադրված տեղեկատվության վրա: Ըստ պատճառների աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերի մասին տեղեկատվությունը տրամադրվել է տեղեկատվության ստացման պահի դրությամբ և հնարավոր չի եղել տրամադրել միջին տարեկան տեղեկատվությունը:

Աղյուսակ 7: Աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերն ըստ պատճառների, 2013-2015թթ.-ին

	Դեպքերի թիվը			Տոկոսը ընդհանուրի մեջ		
	2013թ.	2014թ.	2015թ.	2013թ.	2014թ.	2015թ.
Աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերի թիվը, այդ թվում ըստ հետևյալ պատճառների.	29,794	31,604	27,869	100.0%	100.0%	100.0%
1. կենսաթոշակառուի մահվան, ինչպես նաև նրան մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում	22342	24479	21,882	75.00%	77.50%	78.52%
2. հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքում	1465	2514	1,369	4.90%	8.00%	4.91%
3. կերակրողին կորցնելու դեպքում նշանակված կենսաթոշակի սահմանված ժամկետը լրանալու կամ այդ կենսաթոշակի իրավունքը կորցնելու դեպքում	3872	1891	1,407	13.00%	6.00%	5.05%
4. օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալու կամ բնակվելու իրավունքը դադարելու դեպքում	2	2	2	0.01%	0.01%	0.01%
5. Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.	1	14	23	0.00%	0.04%	0.08%
6. Հայաստանի Հանրապետության երկքաղաքացու՝ մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակություն հաստատելու դեպքում	5	7	1	0.02%	0.02%	0.00%
7. կենսաթոշակի իրավունքը կորցնելու կամ կենսաթոշակի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում.	430	132	17	1.40%	0.40%	0.06%

	Դեպքերի թիվը			Տոկոսը ընդհանուրի մեջ		
	2013թ.	2014թ.	2015թ.	2013թ.	2014թ.	2015թ.
8. Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնող (մեկնած) անձանց կենսաթոշակի գործերն ուղարկելու դեպքում	1189	1799	1,899	4.00%	5.70%	6.81%
այդ թվում՝ տեղափոխված գործերից ետ վերադարձրած գործերի թիվը	*	*	14	*	*	0.05%
9. աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձին հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում.	425	643	1,145	1.40%	2.00%	4.11%
10. անձին սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) կենսաթոշակ նշանակված լինելու դեպքում:			21			0.08%
11. Իր դիմումի հիման վրա կենսաթոշակի տեսակը փոխելու դեպքում	9	11	23	0.03%	0.03%	0.08%
12. կենսաթոշակառուի՝ իր կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու մասին նոտարական կարգով վավերացված հայտարարությունը կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում ներկայացնելու դեպքում.	30	84	57	0.10%	0.30%	0.20%
13. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ կետով, ինչպես նաև 13-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ և 5.1.-րդ կետերով նախատեսված դեպքերում և անձանց, եթե նրանք աշխատում են:	24	28	9	0.10%	0.10%	0.03%

Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ

Ըստ առկա վիճակագրության 2013-2015թթ.-ի ընթացքում ավելացել են նաև հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքերում կենսաթոշակի դադարեցման դեպքերը, և, արտագաղթը փաստող հետևյալ դեպքերի թիվը՝ ՀՀ քաղաքացիությունը

դադարեցնելու դեպքում (2013թ.-ի 1-ից՝ 14 դեպք 2014թ.-ին և 23 դեպք 2015թ-ին); ՀՀ երկքաղաքացու՝ մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակություն հաստատելու դեպքում (5-ից 7 դեպքի, որը 2015թ.-ին հաշվառվել է որպես տեղափոխված գործեր՝ 14 դեպք); ՀՀ հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջպետական համաձայնագիր կնքած պետություններ մշտական բնակության մեկնած անձանց կենսաթոշակի գործերն ուղարկելու դեպքում (4%-ից՝ 5.7%-ի) և աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունք ունեցող կենսաթոշակառուին կամ նրա փոխարեն կենսաթոշակն ստանալու իրավունք ունեցող անձին հինգ տարի անընդմեջ կենսաթոշակ չվճարելու դեպքում (2013թ.-ի 423-դեպքից՝ 643 դեպքի 2014թ.-ին և 1145 դեպքի՝ 2015թ-ին):

Աշխատանքային կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև Ծրագրի վարչարարությունն էականորեն բարելավվել է, քանի որ 2014թ.-ին՝ 2013թ.-ի համեմատ, 30%-ով նվազել են կենսաթոշակի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու պատճառով կենսաթոշակի դադարեցման դեպքերը, 2015թ.-ին այդ դեպքերի թիվը նվազել է մինչև 17 դեպքի: Իսկ անձին սխալմամբ (ՀՀ օրենքի խախտմամբ) կենսաթոշակ նշանակված լինելու կենսաթոշակի իրավունքի դադարեցման ոչ մի դեպք չի արձանագրվել:

Միևնույն ժամանակ, կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերի համեմատությունը ըստ կենսաթոշակի տեսակի ցույց է տալիս, որ կենսաթոշակի իրավունքի դադարեցման դեպքերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն հաշմանդամության, տարիքային և կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակ ստացողները գծապատկեր 37, իսկ տվյալ տարում կենսաթոշակ ստացողների թվի նկատմամբ տարվա ընթացքում կենսաթոշակի իրավունքի դադարեցման դեպքերի մեծ տեսակակար կշիռ ունեն կերակրողին կորցնելու դեպքում նշանակված կենսաթոշակի սահմանված ժամկետը լրանալու կամ այդ կենսաթոշակի իրավունքը կորցնելու դեպքերը՝ 36,8% և հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքում կենսաթոշակի իրավունքի դադարեցման դեպքերը՝ 28,7%, գծապատկեր 38:

Գծապատկերներ 37 և 38: 2014թ.-ին կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերի մասնաբաժինը տվյալ տարում կենսաթոշակառուների թվի նկատմամբ, 2013-2014թթ.

Գծապատկերներ 37 **Կենսաթոշակի իրավունքի դադարեցման դեպքերի մասնաբաժինն ըստ կենսաթոշակի տեսակի**	Գծապատկերներ 38 **Տվյալ տարում կենսաթոշակ ստացողների թվաքանակի նկատմամբ տվյալ կենսաթոշակի իրավունքի դադրեցման դեպքերի մասնաբաժինը**



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ

Տարվա ընթացքում **կենսաթոշակ ստանալու իրավունքի վերականգնման** դեպքերի մասին վիճակագրությունն առկա է միայն 2014թ.-ի համար, և ըստ կենսաթոշակի տեսակի ցույց է տալիս, որ դեպքերի 80 տոկոսից ավելին կազմում են հաշմանդամության կենսաթոշակի իրավունքի վերականգման դեպքերը՝ աղյուսակ 8: 2015թ.-ի տվյալները հնարավոր է եղել ստանալ ոչ թե տարվա համար, այլ տարեվերջի դրությամբ և 2014թ.-ի հետ հանադրելի չեն:

Աղյուսակ 8: Տարվա ընթացքում կենսաթոշակ ստանալու իրավունքի վերականգնման դեպքերն ըստ կենսաթոշակի տեսակի, 2014թ.

	Տարվա ընթացքում կ/թ ստանալու իրավունքի վերականգնման դեպքերը, 2014թ.		
	Դեպքերի թիվը	Տոկոսն ընդհանուրի մեջ,	Տոկոսը տվյալ կենսաթոշակի իրավունքի դադարեցման դեպքերի նկատմամբ
Ընդամնեը	56,208	100,0%	110.6%
Տարիքային	700	1.2%	3.6%
Հաշմանդամության	48,860	86.9%	214.2%
Կերակրողին կորցնելու	6,600	11.7%	80.9%
Արտոնյալ	15	0.03%	17.6%
Երկարամյա	8	0.01%	11.4%
Մասնակի	25	0.04%	11.0%

Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ

Կենսաթոշակի իրավունքի վերականգնված դեպքերի թվի վիճակագրությունը դիտարկելով տվյալ կենսաթոշակի տեսակի իրավունքի դադարեցման դեպքերի նկատմամբ, պարզվում է, որ կենսաթոշակի իրավունքի վերականգնման դեպքերը կրկնակի ավելի հաճախ են հաշմանդամության կենսաթոշակի դադարեցման դեպքերի համեմատ և 80 տոկով ավելի՝ կերակրողին կորցնելու կենսաթոշակի իրավունքի դադարեցման դեպքերի համեմատ: Այս վիճակագրությունը պայմանավորված է օրենքով նախատեսված կարգավորումներով, քանի որ օրինակ, կերակրողին կորցնողի դեպքում

կենսաթոշակի իրավունք ունեցող 18-ից 23 տարեկան ուսանողների կենսաթոշակի իրավունքը դադարեցվում է հուլիսի 1-ի դրությամբ և վերականգնվում միայն երբ մինչև տվյալ տարվա դեկտեմբեր ամիսը նրանք տեղեկանք են ներկայացնում ուսումնական հաստատությունից՝ սովորելու մասին: Հաշմանդամություն ունեցող անձանց կենսաթոշակի իրավունքը վերականգնվում է հաշմանդամության կարգավիճակը վերահաստատելու դեպքում, անգամ եթե կարգավիճակի վերահաստատումը եղել է մեկ տարվա ընթացքում:

Աշխատանքային կենսաթոշակի վճարման դադարեցում և վերսկսում

Աշխատանքային կենսաթոշակների վճարման դադարեցման դեպքերն ավելի հաճախ են, քան իրավունքի դադարեցման դեպքերը, և 2014թ.-ի համեմատ 2015թ.-ին աճի միտում են գրանցել: Միևնույն ժամանակ, կենսաթոշակի վճարման վերսկսման դեպքերի մասնաբաժինը վճարման դադարեցման դեպքերի համեմատ ավելի ցածր է, քան կենսաթոշակի իրավունքի վերականգման դեպքերի մասնաբաժինը իրավունքի դադարեցման դեպքերի նկատմամբ՝ աղյուսակ 9:

	Տարվա ընթացքում կ/թ վճարման վերսկսման դեպքերը, 2014թ.		
	Դեպքերի թիվը	Տոկոսն ընդհանուրի մեջ,	Տոկոսը տվյալ կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքերի նկատմամբ
Ընդամնեը	54,303	100.0%	68.3%
Տարիքային	14,644	27.0%	40.7%
Հաշմանդամության	35,753	65.8%	93.6%
Կերակրողին կորցնելու	202	0.4%	5.6%
Արտոնյալ	143	0.26%	51.3%
Երկարամյա			0.0%
Մասնակի	847	1.6%	71.7%

Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ

Կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքերի հաճախականությունը տվյալ տեսակի կենսաթոշակի իրավունքի դադարեցման դեպքերի նկատմամբ բոլոր կենսաթոշակների համար ավելի բարձր է , բացառությամբ կերակրողին կորցնողի դեպքում կենսաթոշակ ստացուղների համար: Այս խմբի մոտ կենսաթոշակի իրավունքի դադարեցումներն ավելի հաճախ են, քան կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքերը, իսկ կենսաթոշակի վճարման վերսկսման դեպքերը շատ ցածր են, թեև կենսաթոշակի իրավունքի վերականգնման դեպքերը բավական բարձր են: Տվյալների այս հակասությունը հավանաբար առաջացել է տվյալների ժամկետներից և պետք լրացուցիչ ճշտգրտվի ՀՀ ՍԱՊԾ հետ: **Հակառակ դեպքում նման մեծ շեղումը կարող է լրացուցիչ ստուգման անհրաժեշտություն առաջացնել:**

Գծապատկերներ 39 և 40: 2014թ.-ին կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքերի մասնաբաժինը տվյալ տարում կենսաթոշակառուների թվի նկատմամբ

Գծապատկերներ 39 Կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքերն ըստ կենսաթոշակի տեսակի	Գծապատկերներ 40 Տվյալ տարում կենսաթոշակ ստացողների թվաքանակի նկատմամբ տվյալ կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքերի մասնաբաժինը
	

Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ

Աշխատանքային կենսաթոշակների վճարման դադարեցման պատճառների ցանկում բացի կենսաթոշակառուի մահվան պատճառով կենսաթոշակի վճարման դադարեցման դեպքերի, գերակշռում են կենսաթոշակառուների կողմից սահմանված կարգին համապատասխան տարեկան մեկ անգամ բանկ չներկայանալու պատճառները, ինչը վկայում է նրանց մոտ իրազեկվածության ցածր մակարդակի մասին: Ինչպես արդեն նշվել էր, այս փաստը վերահաստատվել է կենսաթոշակառուների շրջանում իրականացված հարցումների և բանկերի ներկայացուցիչների հետ ֆոկուս խումբ քննարկումների ժամանակ:

Գծապատկեր 41: Կենսաթոշակի վճարման դադարեցման պատճառները 2014թ.-ին



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ

Աշխատանքային կենսաթոշակների նշանակման համար ստացված դիմումների մշակման, կենսաթոշակի նշանակման, վերահաշվարկման, կենսաթոշակի իրավունքի դադարեցման և այդ իրավունքի վերսկսման, կենսաթոշակի վճարման համար ցուցակների կազմման և դադարեցված կենսաթոշակի վճարման վերսկսման գործառույթներն իրականացնելու համար ՀՀ ՍԱՊԾ աշխատողների օրական ծանրաբեռնվածությունը գնահատելու համար այդ բոլոր դեպքերի տարեկան թվերի գումարը բաժանվել է ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների տեսուչների թվաքանակի վրա: Ըստ ստացված արդյունքի ՀՀ

ՍԱՊԾ մեկ աշխատողն օրական զբաղվում է 2-3 գործերով, կամ ամսվա կտրվածքով 55-56 դեպքերով:

Ներքին մշտադիտարկման արդյունավետության բարելավման համար անհրաժեշտ է տեղեկավություն ունենալ կենսաթոշակների նշանակման, վերահաշվարկման, իրավունքի կամ վճարման դադարեցման հետ կապված բողոք դիմումների մասին, ըստ կենսաթոշակի տեսակների դրանց հաճախականության և ՀՀ ՍԱՊԾ կողմից տրված պատասխանների մասին: Բացի այդ ներքին մշտադիտարկման համար կարևոր վիճակագրություն է ստուգումների արդյունքում վեր հանված սխալ հիմքով նշանակված, դադարեցված և վերականգնված կենսաթոշակների ըստ տեսակի և ՀՀ ՍԱՊԾ ստորաբաժանումների մասին տեղեկատվությունը: Այս տվյալների մասին մի քանի տարի վիճակագրություն ունենալու դեպքում կարելի իրականացնել ներքին գնահատում՝ համապատասխան առաջարկություններ ձևավորելու համար: ՄԳ ցուցանիշների շարքից պետք է հանվեն նշված գործառույթների տևողության մասին ցուցանիշները, քանի որ դրանք մշտադիտարկման տեսակետից արժեք չեն ներկայացնում, ամեն գործառույթ կատարվում է տեղեկատվական համակարգի միջոցով, անգամ ավելի արագ քան պահանջվում է օրենքով:

Այս փուլում միակ առկա վիճակագրությունը սխալ հիմքով նշանակված/վերահաշվարկված կենսաթոշակների արդյունքում հետգանձված գումարների մասին վիճակագրությունն է, որը ՀՀ ՍԱՊԾ կողմից ստացվել է միայն 2012-2014թթ.-ի համար՝ գծապատկեր 42:



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ

Առկա վիճակագրությունը հուշում է , որ 2013թ.-ին նոր SS համակարգի կիրառման արդյունքում բացահայտված խախտումներով ՀՀ պետական բյուջե է վերադարձվել ավելի քան 1 միլիարդ դրամ, իսկ 2014թ.-ին խախտումների թիվը զգալի նվազել է: 2015թ.-ի փաստացի տվյալների առկայության դեպքում կարելի կլիներ հասկանալ, թե իրականում նվազման միտումն ինչպիսին է: Այս ցուցանիշի համար կանխատեսում չի կատարվել, քանի որ առկա վիճակագրությունը բավարար չէր խելամիտ գնահատական հաշվարկելու

համար։ Հետգանձված գումարների կանխատեսման համար անհրաժեշտ է վստահելի տեղեկատվություն ունենալ, թե ինչ դեպքերի հաշվին են ձևավորվում հետգանձվող գումարները, որ տեսակի կենսաթոշակներից, ինչպիսին է նման դեպքերում միջին կենսաթոշակի չափը և ինչ տևողությամբ սխալ վճարված գումարներ են հետգանձվում։

Այս ոլորտի մի շարք ցուցանիշների՝ մասնավորապես սխալ հիմքով նշանակված/վերահաշվարկված կենսաթոշակների թվի ու տեսակի մասին որոշակի տարիների համար վիճակագրություն ունենալու պարագայում հնարավոր կլինի տալ նաև այս ցուցանիշի կանխատեսումը։

Ինչպես վերը նշվեց, սույն բաժնում վերլուծվել են նաև ծրագիրն իրականացնելու համար առկա ռեսուրսների և աշխատանքային պայմանների մասին **ՀՀ ՍԱՊԾ աշխատողների կարծիքի հետազոտության արդյունքները**։ Հարցումներն անցկացվել են 2015թ.-ի հուլիսին՝ ՀՀ ՍԱՊԾ 51 տարածքային գրասենյակներից պատահականության սկզբունքով ընտրված 102 աշխատողների շրջանում; Հետազոտության մանրամասն զեկույցը և մեթոդաբանությունը ներկայացված են սույն հաշվետվության առդիր 5-ում։

Հետազոտության միջոցով տեղեկատվություն է ստացվել ՄԳ տեսանկյունից դիտարժան հետևյալ ցուցանիշների վերաբերյալ. ՀՀ ՍԱՊԾ աշխատողների գոհունակությունը՝

- օրենսդրական կարգավորումների հստակությունից;
- շահագործվող տեղեկատվական համակարգի ընձեռած հնարավորություններից
- շահագործվող տեղեկատվական համակարգի պարզությունից
- ընթացիկ փոփոխությունների մասին ժամանակին իրազեկումից
- ծրագրի վերաբերյալ իրազեկման ռեսուրսների առկայությունից։

ՀՀ ՍԱՊԾ աշխատողների գոհունակությունը օրենսդրական կարգավորումների հստակությունից

Որպես օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ իրազեկվածության աղբյուր՝ ՀՀ ՍԱՊԾ աշխատողների կողմից հիմնականում նշվել են վերադաս մարմինների կողմից ստացված համապատասխան գրությունները. բացի այդ տեղեկատվության աղբյուր են նշվել Arlis տեղեկատվական համակարգը, պաշտոնական տեղեկագրերը, իրենց իսկ կողմից կատարված և համացանցում տեղադրված ուսումնասիրությունների արդյունքները, հեռուստատեսությունից ստացված տեղեկատվությունը, ՍԱՊԾ ծառայության կայք էջը և այլն։ **Աշխատողների գերակշիռ մասը լիովին բավարարված է օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ իրազեկման ժամանակից և մատուցման ձևերից**։ ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների աշխատողների միայն 10%-ն է նշել այդ փոփոխությունների վերաբերյալ իրազեկման ժամանակի որոշ ուշացումների մասին։

Գծապատկեր 43 - ՍԱՊԾ աշխատողների բավարարվածությունն օրենսդրական կարգավորումների հստակությունից և իրավական ակտերի փոփոխությունների իրազեկումից



Աղբյուրը՝ 2015թ հուլիսին USAID/PRIP կողմից իրականացված ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների աշխատողների կարծիքի ընտրանքային հետազոտություն

Օրենսդրական կարգավորումների հստակությունից բավարարվածությունը ՀՀ ՍԱՊԾ աշխատողների շրջանում այնքան էլ բարձր չէ՝ իրավական ակտերում փոփոխությունների մասին իրազեկված լինելու աստիճանի համեմատ, և այդ տարբերությունը մասնակի մեկնաբանվում է, որ օրենսդրական կարգավորումները դժվար է միանգամից ընկալել, դրանք պարզ չեն, կան իրար հակասող օրենքներ, իսկ օրենքների որոշ կետեր լավ մշակված չեն և անընդհատ փոփոխությունների են ենթարկվում: Նրանք առաջարկում են, որ օրենսդրական կարգավորումներն ավելի մատչելի ձևակերպվեն:

ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների աշխատողների 60%-ը նշել է, որ կարիք ունի վերջին փոփոխությունների մասին խորը վերապատրաստման, ինչը վկայում է իրավական ակտերի փոփոխությունների ընկալման ոչ բարձր մակարդակի մասին: Պարզաբանումների համար տարածքային բաժինների աշխատողները հիմնականում դիմում են ՀՀ ՍԱՊԾ կենտրոնական գրասենյակ՝ ՍԱՊԾ կենտրոնական վարչության համապատասխան մասնագետներին: Քանի որ օրենսդրական կարգավորումներում բավականին շատ են խրթին և ոչ հստակ ձևակերպումները՝ ռեսպոնդենտները ստացված օրենսդրական կարգավորումները քննարկում են նաև տեղում՝ բոլոր աշխատակիցներով միասին: Պարզաբանման այս մեխանիզմի անբավարարվածության դեպքում՝ դիմում են իրենց անմիջական ղեկավարին՝ ՍԱՊԾ տարածքային բաժնի պետին: Շատ քիչ դեպքերում դիմում են նաև մյուս տարածքների գործընկերներին և իրենց բաժնի այլ աշխատակիցներին՝ պետի տեղակալ, իրավաբան, գլխավոր մասնագետ:

ՀՀ ՍԱՊԾ աշխատողները ցանկացել են վերապատրաստումներ անցնել յուրաքանչյուր օրենսդրական փոփոխությունից հետո՝ տարին 4-5 անգամ, 6 ամիսը մեկ, տարին 2-3 անգամ, կամ եռամսյակը մեկ: Նրանք առաջարկել են նաև, որ վերապատրաստումները լինեն նեղ մասնագիտական և առավել խորացված, այդ թվում՝ առնչվեն կառավարության, իրավական օրենքների փոփոխություններին, ինչպես օրինակ՝ զինվորական կենսաթոշակներին, պարգևավճարներին, արտոնյալ կենսաթոշակների փոփոխություններին, երեխայի միանվագ նպաստին և այլն: Ինչպես նաև, դրանք լինեն էթիկայի և հոգեբանության տեսանկյուններից, թե ինչպես պետք է հարաբերվել

քաղաքացիների հետ և այլն: Բովանդակային բարեփոխումների հետ մեկտեղ աշխատողները վերապատրաստումների գործընթացում ակնկալում են նաև տեխնիկական բնույթի փոփոխություններ, այդ թվում՝ վերապատրաստումների անցկացումն իրենց տարածքային բաժիններում, հարմար ժամերին (բնակավայր հասնելու համար), հյուրանոցային խնդիրների լուծում: Որպես առաջարկություններ աշխատողները նշում են նաև վերապատրաստումների բովանդակային մասի որոշման հարցում իրենց կարծիքի կարևորումն ու թեմաների վերաբերյալ իրենց նախօրոք իրազեկումը (որպեսզի կարողանան նախատեսված թեմայի շուրջ հարցեր նախապատրաստել):

ՀՀ ՍԱՊԾ աշխատողների գոհունակությունը շահագործվող տեղեկատվական համակարգի պարզությունից և ընձեռած հնարավորություններից

Հետազոտության միջոցով հնարավոր է եղել գնահատել աշխատողների կարծիքը՝ SS համակարգի ընձեռած հնարավորությունների մի քանի տեսանկյուններից: Նախ՝ գնահատվել է աշխատանքային գործընթացում SS համակարգի բաղադրիչների գործածման հարմարավետությունը, ապա՝ որոշակի ծառայությունների բարելավվման վրա վերջինիս ունեցած ազդեցությունը:

Հարցերը վերաբերել են SS համակարգի հետևյալ բաղադրիչներին.

- էլեկտրոնային դիմումի ձևավորում
- փաստաթղթերի սկանավորում
- դիմումի որոնում
- կենսաթոշակի գործի որոնում
- դիմումի և կից փաստաթղթերի դիտում:

SS համակարգի բաղադրիչները գնահատելիս հարցվողների պատասխաններում հաճախակի է հանդիպել «գերազանց» գնահատականը, իսկ ընդհանուր առմամբ բոլոր բաղադրիչների միջին գնահատականը տատանվել է 3.4-3.7-ի միջակայքում՝ 4 նիշանոց գնահատման սանդղակով (որտեղ 4-ն ամենաբարձր գնահատականն է): Հարկ է նշել, որ SS համակարգի բաղադրիչների գործածմանը «բավարար» և «անբավարար» գնահատականներ տրվել են հիմնականում բարձր տարիքային խմբի աշխատողների կողմից (50 և բարձր):

Աղյուսակ 10 – SS համակարգի ընձեռած հնարավորությունների գնահատումը

SS համակարգի բաղադրիչները	Գերա-զանց	Լավ	Բավա-րար	Անբա-վարար	Դժվ. են պատ.	Կիրա-ռելի չէ		Միջին գնա-հատականը
	=4	=3	=2	=1	-	-		
Էլեկտրոնային փաստաթղթերի ձևավորումը	44%	29%	5%	1%	0%	21%	▸	**3.5**
Փաստաթղթերի սկանավորումը	47%	32%	10%	1%	1%	9%	▸	**3.4**
Դիմումի որոնումը	59%	31%	5%	0%	1%	4%	▸	**3.6**

SS համակարգի բաղադրիչները	Գերա-զանց	Լավ	Բավա-րար	Անբա-վարար	Դժվ. են պատ.	Կիրա-ռելի չէ		Միջին գնա-հատականը
	=4	=3	=2	=1	-	-		
Կենսաթոշակի գործի որոնումը	68%	24%	6%	0%	1%	2%	▸	**3.6**
Դիմումի և կից փաստաթղթերի դիտումը	67%	30%	2%	0%	1%	0%	▸	**3.7**

Աղբյուրը՝ 2015թ հուլիսին USAID/PRIP կողմից իրականացված ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների աշխատողների կարծիքի ընտրանքային հետազոտություն

Չնայած տրված բարձր գնահատականին, աշխատողների կողմից առաջադրվել են նաև մի շարք դժվարություններ, որոնք կարող են ներկայանալ նաև որպես ՄԳ շրջանակում առաջարկություններ: Դրանք են՝

- դիմումը որոնելիս փոքրատառ գրելու դեպքում տվյալը (օրինակ ազգանունը) համակարգը չի բերում
- հնարավոր չի իրականացնել դիմումի ընդլայնված որոնում
- կենսաթոշակի գործը սոցքարտով որոնելիս չի բերում
- որոնման ժամանակ մեկ կետ չդնելու դեպքում տվյալները չեն բերում[13]
- տվյալների որոնումը շատ երկար է տևում՝ հատկապես կերակրողին կորցնողի կենսաթոշակի դեպքում
- տվյալների որոնումը կենսաթոշակառուի կոդով իրականացնելիս որոշ դեպքերում չի բերում
- դիմում ընդունողը շատ քիչ բան է կարողանում տեսնել: Խնդիրներ լինելու դեպքում ընթացք տվողն է տեսնում և տեղեկացնում
- նախկին «Արաքս» համակարգով աշխատելիս որոնման ժամանակ ազգանվան առաջին երեք տառը գրելու դեպքում բերում էր ողջ տեղեկությունը, հիմա պետք է ամբողջը գրվի
- աշխատանքային գրքույկի տվյալները լրացնելիս, եթե այդ տվյալը 5-6-րդ էջում է, հնարավոր չէ ծրագրում հենց այդ էջը բացել, պետք է նորից թերթել առաջին էջից՝ տվյալ էջը հասնելու համար
- դիմումի ձևավորման ժամանակ աշխատանքային գրքույկի տվյալները մուտքագրելիս 5-րդ էջում սխալ անելու դեպքում, համակարգը թույլ չի տալիս այդ էջում ուղղում անել: Պետք է նորից սկսել մուտքագրումն առաջին էջից, ինչը դժվարացնում է դիմումի ձևավորման գործընթացը
- լիազորագրի հիման վրա դիմում ընդունելիս բացակայում է բլանկի առաջին տողը: Բովանդակության այդ հատվածը հետո ձեռքով գրվում է աշխատողի կողմից

[13]Օրինակ, փողոց բառի դեպքում, եթե համակարգում գրված է «փող.», այդ կետը չդնելու դեպքում տվյալները չի բերում:

- էլեկտրոնային դիմումի ձևավորման ժամանակ չի երևում քաղաքացին երկքաղաքացիություն ունի, թե ոչ[14]
- առաջարկ՝ որոնման բաժնի մեջ երևա նաև կենսաթոշակառուի հասցեն, քանի որ անուն-ազգանուն-հայրանունով մի քանի կենսաթոշակառուի տվյալներ է բերում:

Հարցման մասնակիցների 82%-ը լիովին բավարարված է SS համակարգի ընձեռած հնարավորություններից: Միայն երկու աշխատող ընդհանրապես բավարարված չեն SS համակարգի ընձեռած հնարավորություններից՝ մեկնաբանելով, որ կենսաթոշակառուների քանակը չեն կարողանում տեսնել, չեն կարողանում տարանջատել տարիքային կենսաթոշակառուին հաշմանդամություն ունեցողից և որ անձնագրայինում եղած փոփոխությունները համակարգում միանգամից չեն երևում:

ՀՀ ՍԱՊԾ աշխատողների գերակշիռ մասը գտնում է, որ նոր SS համակարգը բարելավել է նաև շահառուներին մատուցվող ծառայությունների որակը: Գնահատականների մանրամասները բերված են աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11: SS համակարգի ազդեցությունը՝ ծառայությունների բարելավման վրա

Ծառայություններ	Բարելավվել է զգալիորեն	Բարելավվել է մասամբ	Չի բարելավվել	Դժվար. են պատ.		Միջին գնահատականը
	=3	=2	=1	-		
Շահառուներին մատուցվող ծառայությունների որակ	82%	7%	5%	6%	▸	**2.8**
Շահառուներին մատուցվող ծառայությունների ժամկետ	78%	11%	5%	6%	▸	**2.8**
Շահառուներին մատուցվող ծառայությունների համար անհրաժեշտ տեղեկատվության ստացում	74%	13%	8%	6%	▸	**2.7**
Շահառուների համար անհրաժեշտ տեղեկատվության ստացում	74%	13%	8%	6%	▸	**2.7**

Աղբյուրը՝ 2015թ հուլիսին USAID/PRIP կողմից իրականացված ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների աշխատողների կարծիքի ընտրանքային հետազոտություն

Հետազոտության միջոցով գնահատվել է նաև SS համակարգի բաղադրիչների պարզությունը հետևյալ հարցադրումներով՝

- SS համակարգի արտաքին տեսք,

[14] Նման դեպքերում դիմումը հասնում է կենսաթոշակի նշանակողի մոտ՝ նոր երևում է ինդիրը, որի պրոցեսնում քաջքշում է առաջանում:

- SS համակարգի բաժինների դասավորվածություն,
- SS համակարգի բաժինների համար բացված պատուհաններից մեկից մյուսին անցում,
- SS համակարգի բացվող մենյուներ:

Այս բաղադրիչների գնահատման մեջ գերակշռում է «լավ» որակական բնորոշումը, իսկ բաղադրիչների միջին գնահատականը տատանվում է 3.4-3.5-ի միջակայքում: Գնահատման այս սանդղակում ևս ցածր միավորները տրվել են հարցվողների միջին և բարձր տարիքային խմբերի կողմից:

Աղյուսակ 12 – SS համակարգի բաղադրիչների պարզությունը

SS համակարգի բաղադրիչները	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավա-բար	Դժվար. են պատ.		Միջին գնա-հատականը
	=4	=3	=2	=1	-		
Տեղեկատվական համակարգի արտաքին տեսքը	48%	50%	2%	0%	0%	▸	**3.5**
Տեղեկատվական համակարգի բաժինների դասավորվածությունը	42%	56%	2%	0%	0%	▸	**3.4**
Տեղեկատվական համակարգի բաժինների համար բացված պատուհաններից մեկից մյուսին անցումը	45%	45%	7%	1%	2%	▸	**3.4**
Տեղեկատվական համակարգի բացվող մենյուները	46%	49%	4%	0%	1%	▸	**3.4**

Աղբյուրը՝ 2015թ հուլիսին USAID/PRIP կողմից իրականացված ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների աշխատողների կարծիքի ընտրանքային հետազոտություն

ՀՀ ՍԱՊԾ աշխատողների գոհունակությունը SS համակարգում ընթացիկ փոփոխությունների մասին ժամանակին իրազեկումից

Այս խումբ հարցերով հնարավոր է եղել գնահատել արդյոք SS համակարգում կատարված փոփոխությունների մասին հրահանգները ՍԱՊԾ տարածքային բաժինների աշխատակիցները ստանու՞մ են ժամանակին, թե՞ լինում են որոշ կամ զգալի ուշացումներ:

Հարցման մասնակիցների 89%-ի հավաստմամբ SS համակարգում կատարված փոփոխությունների մասին հրահանգները ստանում են ժամանակին: Այս հարցում զգալի ուշացումներ բացարձակ չեն լինում: Իսկ հրահանգների՝ ժամանակին ստանալու բավարարվածության աստիճանը աշխատողների 91%-ի մոտ ամենաբարձր սանդղակի վրա է՝ լիովին բավարարված են:

Այս հարցը դիտարկվել է նաև հետևյալ տեսանկյունից՝ արդյո՞ք SS համակարգում փոփոխությունները կատարվում են իրավական ակտերի փոփոխմանը համահունչ: 79%-ի

գնահատմամբ SS համակարգում փոփոխությունները կատարվում են իրավական ակտերի փոփոխմանը համահունչ, 1%-ի հավաստմամբ դրանք այնքան էլ համահունչ չեն, իսկ փոփոխությունների զգալի ուշացումների վերաբերյալ գնահատական չի տրվել։

ՀՀ ՍԱՊԾ աշխատողների կողմից արվել են բազմաթիվ առաջարկություններ համակարգի շահագործման, նոր հնարավորությունների և լուծումների մասին, որոնք մանրամասն ներկայացված են Հետազոտության զեկույցում՝ Հաշվետվություն 3։

ՀՀ ՍԱՊԾ աշխատողների գոհունակության աստիճանը ծրագրի վերաբերյալ իրազեկման ռեսուրսների առկայությունից

Հնարավորինս իրական պատկեր ստանալու համար հարցը դիտարկվել է հետևյալ տեսանկյուններից. նախ գնահատվել են ՍԱՊԾ տարածքային բաժիններում կենսաթոշակառուներին իրազեկելու միջոցների առկայությունը, ապա դրանց մատչելիությունը շահառուների համար։ Այնուհետ, անդրադարձ է կատարվել կենսաթոշակային համակարգում կատարված փոփոխությունների մասին կենսաթոշակառուներին իրազեկելու աղբյուրների կիրառմանն ու դրանց կարևորության գնահատմանը։ Եվ, ամենավերջում, գնահատվել է իրազեկման առկա մեխանիզմներից աշխատողների բավարարվածության աստիճանը և ներկայացվել են այդ մեխանիզմներում ցանկալի փոփոխությունների առաջարկներ։

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ՍԱՊԾ տարածքային կենտրոններում որպես քաղաքացիներին իրազեկելու մեխանիզմներ ավելի շատ կիրառվում են պոստերները՝ պատերին փակցված նյութերը՝ ինչպես Ա4 թղթաչափի տեսքով, այնպես էլ առավել մշակված և մեծ ծավալներ ունեցող տեղեկատվական նյութերը, քան տպագիր նյութերը՝ մասնագետների կողմից քաղաքացիներին տրամադրվող նյութերը՝ այդ թվում՝ բուկլետներ, գրքույկներ, 1-2 էջ ծավալ և համապատասխան բովանդակությամբ տեղեկատվություն պարունակող թղթեր։

Իրազեկման մեխանիզմների ֆիզիկական և բովանդակային որակավորումների փոխկապակցված պատկեր ստանալու համար աշխատողների գնահատմանն է ներկայացվել վերոնշյալ աղբյուրների մատչելիությունն ու պարզությունը, ինչպես նաև նյութերի ձևավորման արտաքին տեսքը։ ՀՀ ՍԱՊԾ աշխատողների գնահատմամբ իրազեկման նյութերն այնքան էլ հարմար և մատչելի չեն կենսաթոշակառուների համար (տես աղյուսակ 12)։

Աղյուսակ 13 – Տպագիր նյութերի և պոստերների մատչելիության և պարզության գնահատում

SS համակարգի բաղադրիչները	Տպագիր նյութեր							Պոստերներ					
	Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	Դժվար. են պատասխ.	Միջին գնա-հատականը		Գերազանց	Լավ	Բավարար	Անբավարար	Դժվար. են պատասխ.	Միջին գնա-հատականը
	=4	=3	=2	=1	-			=4	=3	=2	=1	-	
Տեղեկատվական նյութերի մատչելիությունը կենսաթոշակառուների համար	11%	54%	30%	2%	4%	**2.8**		26%	38%	28%	8%	0%	**2.8**
Տեղեկատվական նյութերի ձևակերպման պարզությունը կենսաթոշակառուների համար	9%	53%	33%	2%	4%	**2.7**		23%	38%	28%	10%	0%	**2.7**
Տեղեկատվական նյութերի ձևավորման արտաքին տեսքը	37%	51%	11%	0%	2%	**3.3**		31%	28%	26%	15%	0%	**2.7**

Աղբյուրը՝ 2015թ հուլիսին USAID/PRIP կողմից իրականացված ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների աշխատողների կարծիքի ընտրանքային հետազոտություն

ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների աշխատողների հետ հարցումների ժամանակ ստացվել են բազմաթիվ առաջարկություններ ինչպես շահառուների սպասարկման որակի բարելավման, այնպես էլ նրանց հարմար իրազեկման նյութերի մատչելիության հետ կապված: ՀՀ ՍԱՊԾ աշխատողներն առաջարկություններ են ներկայացրել նաև իրենց աշխատանքային պայմանների և ՍԱՊԾ ներսում աշխատանքային ռեսուրսների բարելավման ուղղությամբ:

Այդ բոլոր առաջարկությունները ներկայացված են հետազոտության վերջին՝ երրորդ զեկույցում առդիր 5:

Ոլորտ 7 Աշխատանքային կենսաթոշակառուների բարեկեցությունը և եկամտի աղբյուրը

ՄԳ ցուցանիշների շրջանակի այս բաժնի տեղեկատվությունը հիմնականում ստացվում է ՀՀ ՍՎԾ կողմից իրականացվող Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության արդյունքների հիման վրա: Հետազոտության տեղեկատվական բազան՝ ամեն տարի հետատազոտությանը հաջորդող տարվա նոյեմբերին, ՀՀ ԱՎԾ տեղադրում է իր վեբ կայքում: Հետազոտության և տվյալների ստացման մանրամասները նկարագրված են սույն զեկույցի «Մեթոդաբանություն» գլխում: Այս հատվածում ներկայացված է ստացված տեղեկատվության վերլուծությունը և ինչպես կարելի է այն օգտագործել կենսաթոշակային համակարգի մշտադիտարկման և գնահատման համար:

ՄԳ շրջանակում ցուցանիշների մեծ մասը ԱԽ անդամների որոշմամբ բերված են բացարձակ թվերի տեսքով՝ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ հետազոտությամբ ստացված տվյալները կշռված են և համապատասխանում են իրական պատկերին՝ հետազոտության մեթոդաբանությամբ 95 տոկոս ճշգրտությամբ: Սակայն USAID/PRIP ծրագրի մասնագետների կարծիքով բացարձակ թվերը տվյալ ոլորտի գնահատման և համակարգի ՄԳ համար արդյունավետ չեն, ավելի նպատակահարմար է կիրառել ու դիտարկել ընտրված ցուցանիշների հարաբերական արժեքները, քանի որ հարաբերական ցուցանիշները հնարավորություն են տալիս գնահատելու պատկերը, իսկ հետազոտության ընտրանքի մեծությունից կախված շեղումները չեզոքացվում են:

Այսպիսով, ստորև վերլուծության ժամանակ դիտարկվել են ՄԳ ցուցանիշների շրջանակի 7-րդ ոլորտի ցուցանիշների նաև հարաբերական արժեքները: ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ տվյալները առկա են միայն 2012-2014թթ-ի համար՝ հետազոտության մեթոդաբանությամբ պայմանավորված:

Կենսաթոշակառու ունեցող ընտանիքների եկամուտների և բարեկեցության մասին լրացուցիչ տեղեկատվություն ստացվել է նաև USAID/PRIP ծրագրի աջակցությամբ 2015թ.-ի հունիսին կենսաթոշակառու ունեցող 1400 ընտանիքների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության միջոցով: Հետազոտության ընտրանքի և մեթոդաբանության մանրամասները բերված են սույն զեկույցին առդիր 3-ում՝ հետազոտության զեկույցներում: 2015թ-ի համար դիտարկվել են նաև այս հետազոտությամբ ստացված արդյունքները: Տվյալները ունեն որոշ շեղումներ՝ երկու հետազոտությունների մեթոդաբանություններով պայմանավորված, սակայն հարաբերական ցուցանիշները հնարավորություն են տալիս նկատել միտումները և կատարել համապատասխան եզրահանգումներ:

Այսպիսով, Հայաստանում առնվազն մեկ կենսաթոշակառու անդամ ունեն տնային տնտեսությունների գրեթե կեսը՝ 48-49 տոկոսը: Ընդ որում, կենսաթոշակառու անդամ ունեցող տնային տնտեսությունների մոտ մեկ երրորդն ունի երկու կենսաթոշակառու անդամ. գծապատկեր 44:

Կենսաթոշակառու ունեցող տնային տնտեսություններում **անդամների միջին թիվը** կազմում է 4.1 մարդ, իսկ Հայաստանի միջին ցուցանիշը՝ 3.9 մարդ[15] է:

[15] Աղբյուր՝ 2011թ. ՀՀ Մարդահամար

Կենսաթոշակառու անդամ ունեցող տնային տնտեսություններում **մեկ անձից բաղկացած տնտեսությունների** մասնաբաժինը կազմում է 11%, իսկ Հայաստանի միջին ցուցանիշը՝ 12% է: Գյուղերում բնակվող կենսաթոշակառու անդամ ունեցող տնտեսությունները բաղկացած են միջին հաշվով 4.9 անձից, այն դեպքում, երբ Հայաստանի միջին ցուցանիշը կազմում է 4.4 մարդ:

Գծապատկեր 44: Կենսաթոշակառու ունեցող տնային տնտեսությունների բաշխումն ըստ կենսաթոշակառու անդամների թվի, 2012-2015թթ.-ին



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ 2012-2014թթ. ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, 2015թ. USAID/PRIP ընտրանքային հետազոտություն

Բացի կենսաթոշակից, այդ տնային տնտեսությունների համար եկամտի կարևոր ազբյուր են զբաղվածությունից, ինքնազբաղվածությունից ստացված եկամուտները, գյուղացիական տնտեսությունից ստացված եկամուտները, ինչպես նաև բարեկամներից ստացված աջակցությունը, լինի այն Հայաստանից թե արտասահմանից:

Գծապատկեր 45: Կենսաթոշակառու անդամ ունեցող տնային տնտեսությունների եկամտի աղբյուները, %-ը եկամտի աղբյուրը նշած տնային տնտեսությունների մեջ՝ 2012-2015*թթ.



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ 2012-2014թթ. ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ, 2015թ. USAID/PRIP ընտրանքային հետազոտություն

Կենսաթոշակառու անդամ ունեցող տնային տնտեսությունների եկամուտների կառուցվածքում գերաշխռում է զբաղվածությունից ստացված եկամուտը, տնային

տնտեսությունների 45 տոկոսի համար այն նշվել է մեծությամբ առաջին եկամուտը 2015թ.-ի ընտրանքային հետազոտության ժամանակ: Կենսաթոշակն ու սոցիալական տրանսֆերտները նշվել են որպես եկամտի առաջին կարևոր աղբյուր հարցված տնային տնտեսությունների 34 տոկոսի կողմից:

ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ արդյունքներով կենսաթոշակառու անդամ ունեցող տնային տնտեսությունների եկամտի կառուցվածքում զբաղվածությունից եկամուտը նույնպես մեծությամբ առաջինն է և 2012-2014թթ.-ի ընթացքում դրամական արտահայտությամբ, այն դրսևորել է աճի միտում: Զգալի աճ նկատվել է գյուղացիական տնտեսությունից ստացված եկամուտներում և արտասահմանից ստացված տրանսֆերտներում (հավանաբար զգացվել է ֆինանսական ճգնաժամի անկման միտումը): Կենսաթոշակի չափի փոքր աճ նույնպես արձանագրվել է, պայմանավորված մինչև 2015թ-ը կենսաթոշակի ամենամյա՝ միջինում 15 տոկոս ավելացումները:

Գծապատկեր 46: Կենսաթոշակառու անդամ ունեցող տնային տնտեսությունների եկամտի կառուցվածքի փոփոխությունը 2012-2014թթ.-ի ընթացքում, դրամ



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ 2012-2014թթ. ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ,

Սակայն միջին ամսական եկամուտը որպես ցուցանիշ կենսաթոշակառու ունեցող ընտանիքների կենսամակարդակի գնահատման համար այդքան էլ արժանահավատ ցուցանիշ չէ, քանի որ Հայաստանում դեռ բացակայում է եկամուտների համատարած հաշվառման համակարգը: Ուստի որպես կենսամակարդակի գնահատական Հայաստանում հիմք է վերցվում տնային տնտեսության սպառումը՝ դրամական արտահայտությամբ: Սպառման ագրեգատի հիման վրա էլ հաշվարկվում է տնային տնտեսության աղքատության մակարդակը[16]:

[16] Աղքատության մակարդակի գնահատման մանրամասները տես ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» տարեկան զեկույցում՝ http://armstat.am/am/?nid=82&id=1718

Ինչպես ցույց է տալիս գծապատկեր 47-ը, կենսաթոշակառու ունեցող ընտանիքների միջին եկամուտն ավելի ցածր է քան սպառման ագրեգատը՝ դրամական արտահայտությամբ, թեև երկու ցուցանիշներն էլ գրանցել են աճի միտում 2012-2014թթ.-ին:



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ 2012-2014թթ. ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ,

Վերը նշված տրամաբանությամբ, ՄԳ ցուցանիշների շրջանակում «Աղքատության գծից ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների թիվը» ցուցանիշը վերցվել է որպես աղքատության գծից ցածր սպառում ունեցող տնային տնտեսությունների թիվ, որն ըստ էության աղքատ տնային տնտեսությունների թիվն է: Նմանապես «Ծայրահեղ աղքատության գծից ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների թիվը» վերանվանվել է «Ծայրահեղ աղքատության գծից ցածր սպառում ունեցող տնային տնտեսությունների թիվը»: Այս ցուցանիշը ծայրահեղ աղքատ կենսաթոշակառու անդամ ունեցող տնային տնտեսությունների թիվն է: 2012-2014թթ.-ի ընթացքում այս ցուցանիշը գրեթե չի փոփոխվել.



Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ 2012-2014 թթ. ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ,

USAID/PRIP կողմից 2015թ.-ին իրականացրած հետազոտության տվյալներով կենսաթոշակառու անդամ ունեցող ընտանիքներից կենսամակարդակի բարելավում

վերջին երկու տարում նշել է միայն հարցված ընտանիքների 6 տոկոսը: Հարցվածների 50 տոկոսը նշել է, որ անցած 2 տարիների համեմատ իրենց եկամուտները նվազել են: Հարցված ընտանիքների ակնկալիքներն իրենց կենսամակարդակի բարելավման մասին առանձնապես լավատեսական չեն. հարցվածների 32%-ը անորոշ է ապագայի հանդեպ, իսկ 29%-ը բացասական սպասումներ ունի: Իրենց ընտանիքների եկամուտների կայունություն կանխատեսում էին հարցվածների 24%-ը և միայն 15%-ն էր լավատես, որ իրենց ընտանիքների եկամուտները առաջիկա 1-2 տարում կաճեն:

Կենսաթոշակառու անդամ ունեցող ընտանիքների 71%-ը հարցման պահին նշել էր, որ ընտանիքն ունի պարտքեր: Պարտքեր ունեցող ընտանիքների ամենամեծ խումբը՝ 35%-ը պարտքեր ուներ մեկ աղբյուրից: Ամենամեծ թվով աղբյուրներից պարտքերով ծանրաբեռնված ընտանիքը պարտք էր 10 ուղղություններով: Տնային տնտեսությունների 45%-ը պարտքեր ուներ վարկերի գծով. այս խմբում գերակշռում են գյուղաբնակ ընտանիքները; 32%-ը պարտքեր ուներ գնված ապրանքների և ծառայությունների դիմաց (սնունդ, հագուստ): Գնված ապրանքների և ծառայությունների դիմաց պարտքեր ունեցող ընտանիքների ընդամենը 9%-ն էր Երևանից, իսկ 32%-ը և 59%-ը բնակվում էին համապատասխանաբար մարզերի քաղաքներում և գյուղերում: Հարցված ընտանիքների 27%-ը պարտքեր ուներ ապառիկ գնված գույքի և կենցաղային ապրանքների դիմաց: Պարտքեր ունեցող ընտանիքների մեծ մասը՝ 58%-ն իրենց պարտքերը մարում էին ընթացիկ եկամուտներից: Մյուսները պարտքերի մարման համար կրճատում էին ընթացիկ ծախսերը՝ 32%-ը կամ նոր պարտքեր վերցնում՝ 16%-ը, կամ այլ օգնությամբ:

Հետազոտության ուշագրավ բացահայտումն այն էր, որ **աշխատանքային կենսաթոշակառուների ընտանիքների 65%-ն իր կենսամակարդակը ինքնաբնորոշել է որպես «միջին»:** Իսկ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ արդյունքներով կենսաթոշակառու անդամ ունեցող ընտանիքներում աղքատության և ծայրահեղ աղքատության մակարդակներն ավելի բարձր են՝ երկրում աղաքատության միջին մակարդակի համեմատ (համապատասխանաբար 33.3%՝ 30.0%-ի և 2.8%՝ 2.3%-ի համեմատ):

ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ արդյունքները ցույց են տալիս, որ 2012-2014թթ.-ի ընթացքում կենսաթոշակառու անդամ ունեցող ընտանիքների ծայրահեղ աղքատության մակարդակը նվազել է և մոտեցել միջին մակարդակին, սակայն աղքատության մակարդակը շարունակում է բարձր մնալ: **Այդ չնչին բարելավումը հնարավոր է եղել 2014-2014թթ.-ին կենսաթոշակի չափի բարձրացման ուղղությամբ ՀՀ ԱՍՀՆ վարած քաղաքականության արդյունքում, որի արդյունքում կենսաթոշակի հաշվարկման բանաձևի փոփոխությամբ կենսաթոշակների բարձրացմանն ուղղված միջոցների մեծ մասը ուղղվեց շատ ցածր կենսաթոշակների բարձրացմանը,** մանրամասները տես Ոլորտ 1-ի վերլուծության բաժնում:





Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ 2012-2014թթ. ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ,

Աղքատության մակարդակի վրա կենսաթոշակի ազդեցությունը

Ըստ ՀՀ ԱՎԾ ՏՏԿԱՀ տվյալների, Հայաստանի տնային տնտեսությունների 55.2%-ը նշել է կենսաթոշակը, որպես եկամուտ: Իհարկե ՀՀ ԱՎԾ զեկույցը[17] չի առանձնացնում աշխատանքային, զինվորական և սոցիալական կենսաթոշակները/նպաստները, այդ իսկ պատճառով այս ցուցանիշը մի փոքր բարձր է քան սույն բաժնի սկզբում նշված 49%-ը, որը վերաբերում էր միայն աշխատանքային կենսաթոշակ ստացողներին:

2015թ.-ի հունիսին հարցմանը մասնակից ընտանիքների 36 տոկոսի ներկայացմամբ, կենսաթոշակը կազմում է իրենց ընտանիքի եկամուտների փոքր մասը (10-49%): Կենսաթոշակը եկամտի միակ աղբյուրն էր հարցված ընտանիքների միայն 9 տոկոսի համար, իսկ 27 տոկոսի համար այն կազմել է ընտանիքի բյուջեի գրեթե կեսը՝ աղյուսակ 14:

Աղյուսակ 14: Կենսաթոշակի դերը աշխատանքային կենսաթոշակառուների ընտանիքների եկամուտներում

Կենսաթոշակի դերը (մասնաբաժինը) եկամուտներում	%
Կենսաթոշակը կազմում է կենսաթոշակառուների ընտանիքի **միակ եկամուտը (100%)**	9%
Կենսաթոշակը կազմում է կենսաթոշակառուների ընտանիքի **եկամուտների մեծ մասը (50-99%)**	27%
Կենսաթոշակը կազմում է կենսաթոշակառուների ընտանիքի **եկամուտների փոքր մասը (10-49%)**	36%
Կենսաթոշակը կազմում է կենսաթոշակառուների ընտանիքի **եկամուտների չնչին մասը (մինչև 10%)**	27%
Չգիտեն / Դժվարացել են պատասխանել	0%
Ընդամենը	**100%**

Հարցվածների գնահատմամբ, թեև կենսաթոշակի չափը փոքր է և իրենց ընտանիքների եկամուտների մեջ ունի փոքր մասնաբաժին, սակայն կենսաթոշակն

[17] ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2015թ. էջ 175

ընտանիքի համար ապահովում է **կանոնավոր եկամտի աղբյուր,** ինչը թույլ է տալիս կատարել որոշակի պլանավորում և ապահովել ֆինանսական կարգապահություն (դիսցիպլինա):

Կենսաթոշակների ներգործությունն աղքատության մակարդակի վրա գնահատելու համար ՀՀ ԱՎԾ կողմից առաջարկվում է հետևյալ մոտեցումը. հետազոտությամբ դիտարկված աղքատության մակարդակի արդյունքները («հետտրանսֆերտային մակարդակ») համեմատվում են այն արդյունքների հետ, որոնք կստացվեին, եթե կենսաթոշակները չվճարվեին («նախատրանսֆերտային մակարդակ»): Գնահատման մեթոդաբանությունն այսպիսին է. տնային տնտեսությունների համար հաշվարկվում է «նախատրանսֆերտային» սպառման ագրեգատը՝ տնային տնտեսությունների համար հաշվարկված ընդհանուր սպառման ագրեգատից հանելով կենսաթոշակների գումարը, ելնելով այն ենթավարկածից, որ կենսաթոշակներն ամբողջությամբ սպառվում են տնային տնտեսության կողմից (իրավիճակ, որը շատ բնորոշ է Հայաստանի նման զարգացող երկրներին): Այդպիսով, «նախատրանսֆերտային» և «հետտրանսֆերտային» աղքատության մակարդակների տարբերությունն իրենից ներկայացնում է աղքատության մակարդակի փոփոխության վրա կենսաթոշակների ազդեցության գնահատականը: Ստորև աղյուսակում համեմատվել է 2014թ.-ին «նախատրանսֆերտային» աղքատության մակարդակը կենսաթոշակները ստանալուց հետո աղքատության մակարդակի հետ, այսինքն՝ «հետկենսաթոշակային» աղքատության մակարդակի հետ:

Աղյուսակ 15: Սոցիալական տրանսֆերտների ներգործությունն աղքատության մեղմացման վրա, 2014թ. տոկոսներով

	Աղքատներ			Ծայրահեղ աղքատներ		
	Աղքա-տության մակարդակ	Աղքա-տության խորություն	Աղքա-տության սրություն	Աղքա-տության մակարդակ	Աղքա-տության խորություն	Աղքա-տության սրություն
Հետտրանսֆերտային մակարդակ (հետ կ/թոշակային և հետ սոցիալական աջակցություն)	30.0	4.5	1.3	2.3	0.3	0.1
Նախատրանսֆերտային մակարդակ (նախակ/թոշակային և նախասոցիալական աջակցություն)	42.7	16.6	10.5	17.5	7.9	7

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2014թ.

Աղյուսակը ցույց է տալիս, որ կենսաթոշակների ազդեցությունը զգալի է բնակչության աղքատության մակարդակի, հատկապես ծայրահեղ աղքատության մակարդակի վրա: Այն զգալի մեղմում է աղքատության խորությունը և սրությունը: **Եթե կենսաթոշակները չվճարվեն, ապա աղքատության մակարդակը երկրում 30 տոկոսից**

կդառնա 42.7 տոկոս, իսկ ծայրահեղ աղքատությունը կավելանա 7.6 անգամ՝ 2.3 տոկոսից դառնալով 17.5 տոկոս:

Ակնհայտ է, որ կենսաթոշակների ազդեցությունը շատ ավելի մեծ է, եթե նույն համեմատությունը կատարվի միայն կենսաթոշակառու ունեցող ընտանիքների համար: 2012-2014թթ.-ի ՏՏԿԱՀ–ի տվյալները ցույց են տալիս, որ կենսաթոշակների ազդեցությունը աղքատության մեղմացման վրա պահպանել է իր կարևորությունը՝ **կրճատելով աղքատության մակարդակը կենսաթոշակառու ունեցող ընտանիքներում գրեթե 40 տոկոսով, իսկ ծայրահեղ աղքատությունը ավելի քան 80 տոկոսով՝ գծապատկեր 51**:



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2012-2014թթ. և հեղինակների հաշվարկները

Կենսաթոշակների ազդեցությունը աղքատության խորության և սրության վրա բավական բարձր է կենսաթոշակառու ունեցող ընտանիքների համար.

Աղյուսակ 16: Աղքատության մակարդակի վրա կենսաթոշակների ազդեցությունը կենսաթոշակ ստացող տնային տնտեսությունների համար, %-ով

		Ծայրահեղ աղքատներ	Աղքատներ	Աղքատության խորություն (P1/P0)	Աղքատության սրություն
2012թ.	Մինչև կենսաթոշակ ստանալը	26.8	56.8	24.8	15.9
	Կենսաթոշակ ստանալուց հետո	3.6	35.7	6.4	1.9
2013թ.	Մինչև կենսաթոշակ ստանալը	27.0	58.7	25.0	27.1
	Կենսաթոշակ ստանալուց հետո	3.0	35.2	6.6	1.9
2014թ.	Մինչև կենսաթոշակ ստանալը	25.2	54.0	23.3	14.9
	Կենսաթոշակ ստանալուց հետո	2.8	33.3	5.6	1.5

Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2012-2014թթ.

Կենսաթոշակների դերը մեծ է նաև բնակչության եկամուտների բևեռացման մեղմացման համար: Ջինիի գործակիցի նախատրանսֆերտային և հետտրանսֆերտային արժեքները ցույց են տալիս, որ 2008-2014թթ;-ի ընթացքում կենսաթոշակների կարևորությունը տնային տնտեսությունների համար չի նվազել: Ավելին, այս տվյալները ցույց են տալիս, որ անգամ խորացող անհավասարության պայմաններում, կենսաթոշակի չնչին բարձրացումը կարողացել է զսպել անհավասարության աճը:

Աղյուսակ 17: Կենսաթոշակների ներգործությունը սպառման ագրեգատի բաշխվածության անհավասարության վրա (սպառման ագրեգատի Ջինիի գործակիցները) 2008-2014թթ.-ին

	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.
Նախատրանսֆերտային (մինչև կենսաթոշակի և սոց աջակցության գումարներ ստանալը)	0.316	0.346	0.359	0.357	0.359	0.354	0.377
Հետ կենսաթոշակային (ավելացել է կենսաթոշակների գումարը՝ առանց սոցիալական աջակցության)	0.258	0.272	0.282	0.28	0.282	0.282	0.289



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» 2014թթ

Կենսաթոշակների ազդեցության այս խումբ ցուցանիշները առավել կարևոր են աշխատանքային կենսաթոշակների ծրագրի ՍԳ համար և կարելի է կենսաթոշակառուների կենսամակարդակը գնահատող հիմնական ցուցանիշ դիտարկել միայն կենսաթոշակների նախատրանսֆերտային/հետտրանսֆերտային մակարդակների փոփոխությունը:

Աշխատող կենսաթոշակառուների և նրանց միջին աշխատավարձի մասին տեղեկատվությունը ՀՀ ԱՍՀՆ կողմից ամբողջությամբ չի ստացվել; Այս ցուցանիշները տեղեկատվական են և դուրս են Ծրագրի արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ ցուցանիշների շրջանակից: Այդուհանդերձ տեղեկատվությունը հետաքրքիր կլիներ ստանալ առնվազն երկու տարիքային խմբերով՝ մինչև 70 տարեկաններ և 70-ից բարձր տարեկանների համար, գնահատելու արդյոք տարեց կենսաթոշակառուները աշխատում են կենսաթոշակի չափի փոքր լինելու պատճառով:

USAID/PRIP կողմից իրականացված հետազոտության տվյալներով աշխատող աշխատանքային կենսաթոշակառուների թիվը կազմում է ընդհանուրի 28%-ը: «Կենսաթոշակառուի աշխատանքի» ներքո հասկացվել է նրա ֆորմալ և ոչ ֆորմալ աշխատանքը, ինքնազբաղվածությունը և գյուղատնտեսական աշխատանքների մեջ նրա ներգրավվածությունը:

Կենսաթոշակի անցնելուց հետո աշխատելու պատճառները տարբեր են: Աշխատող կենսաթոշակառուների մեծ մասը՝ **53%-ն աշխատում էր ընտանիքի կարիքներից ելնելով**: **13%-ն աշխատում էր առանց կոնկրետ պատճառի**. պարզապես ցանկանում էր աշխատել՝ ապահովելով կյանքի ռիթմը և ակտիվ կենսագործունեությունը: Աշխատող կենսաթոշակառուների **33%**-ի համար իրենց աշխատելու հիմնավորումն այն էր, որ **պարզապես ցանկանում են աշխատել՝ միաժամանակ հոգալով իրենց ընտանիքների կարիքները:**

Ոլորտ 8 Կենսաթոշակառուների բավարարվածությունը մատուցվող ծառայություններից

Այս ոլորտի համար ընտրված ցուցանիշների տեղեկատվության հիմնական աղբյուրը կենսաթոշակառուների շրջանում իրականացված հարցումներն են: Հետազոտության մեթոդաբանությունը և ստացված տեղեկատվության մասնրամասն վերլուծությունը ներկայացված է սույն հաշվետվությանն առդիր՝ հետազոտության երկու զեկույցներում՝ տես առդիր 3 և 4:

Հաշվետվության այս հատվածը համառոտ ներկայացնում է ՄԳ շրջանակում առանձնացված ցուցանիշների համար ստացված արդյուքները և հետազոտության արդյուքնում ձևավորված առաջարկությունները:

2015թ.-ին 1000 կենսաթոշակառուների հետ հարցազրույցների արդյուքները ցույց են տվել, սր ընդհանուր առմամբ շահառուները գոհ են ծրագրի շրջանակում իրենց մատուցվող ծառայություններից, միակ դժգոհությունը կապված էր կենսաթոշակի ցածր մակարդակի հետ: **Կենսաթոշակի չափից** ցածր բավարարվածությունը կենսաթոշակառուները բացատրում են նրանով, որ այն չի բավարարում կենսագործունեության համար անհրաժեշտ ծախսերի (սնունդ, հագուստ, կոմունալ վճարումներ) նվազագույն մակարդակն ապահովելու համար:

ՑՈՒՑԱՆԻՇ 1. - Կենսաթոշակառուների բավարարվածությունը կենսաթոշակի չափից
ՑՈՒՑԱՆԻՇ 1.Ա. - Կենսաթոշակառուների տարբեր խմբերի բավարարվածությունը կենսաթոշակի չափից

Գծապատկեր 53 - Կենսաթոշակառուների բավարարվածությունը կենսաթոշակի չափից

Աղյուսակ 18 - Կենսաթոշակառուների տարբեր խմբերի բավարարվածությունը կենսաթոշակի չափից



Կենսաթոշակառուների խմբեր	Բավարարվա-ծությունը
Տարիքային	6%
Հաշմանդամության	4%
Մասնակի	8%
Արտոնյալ պայմաններով	14%
Երկարամյա ծառայության	40%
Կերակրողին կորցնելու դեպքում	0%

Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ, USAID/PRIP աջակցությամբ 2015թ.-ի հունիսին կենսաթոշակառուների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքները

Չնայած երկարամյա ծառայության կենսաթոշակառուների կենսաթոշակները համեմատաբար բարձր են, միևնույն է՝ նրանց մեծ մասը ևս դժգոհություն է հայտնել կենսաթոշակների չափից ֆոկուս խումբ քննարկումների ժամանակ: Շահառուների ճնշող մեծամասնությունը (98%) նշել էր, որ պետության կողմից կենսաթոշակի ժամանակ առ ժամանակ իրականացվող բարձրացումները համարժեք չեն գների աճին և չեն կարող մեղմել դրանց բարձրացման հետևանքները:

Կենսաթոշակի բաղադրիչների չափից գոհունակության աստիճանը գնահատելու համար, նախ հետազոտությամբ պարզվել է կենսաթոշակի բաղադրիչների մասին իրազեկվածությունը: Հարցման մասնակիցների մեծ մասը (58%) տեղյակ չէր, թե ինչ մասերից (բաղադրիչներից) է բաղկացած իրենց կենսաթոշակը: Երևանում բնակվող կենսաթոշակառուներն ավելի լավ էին տեղեկացված կենսաթոշակի կառուցվածքի մասին, քան մարզերում բնակվող կենսաթոշակառուները:

Կենսաթոշակի բաղադրիչներից իրազեկ շահառուների միայն 40%-ն էր կենսաթոշակի նման կառուցվածքը համարում ճիշտ: Հարցման մասնակիցների 37%-ը կենսաթոշակի ներկայիս կառուցվածքը համարում էր սխալ՝ իրենց դիրքորոշումը բացատրելով երկու հետևյալ պատճառներով.

- **Աշխատավարձի չափը կապ չունի կենսաթոշակի հետ:** Շահառուները կարծում են, որ անարդար է, երբ նույն աշխատանքային ստաժի պայմաններում տարբեր մասնագիտական որակավորում ունեցող և աշխատանքային գործունեության ընթացքում տարբեր աշխատավարձեր ստացած անձինք ստանում են միևնույն կենսաթոշակը: Նրանք առաջարկում են գտնել որևէ ձև (օրինակ՝ կիրառել գործակից), որը թույլ կտա անձի աշխատավարձի կամ վճարած հարկերի մեծությունը ևս մասնակից դարձնել կենսաթոշակի հաշվարկին:
- **Աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը հաստատուն չէ**: Շահառուները կարծում են, որ ճիշտ չէ, որ մինչև 10 տարվա և 10 տարուց ավելի աշխատանքային ստաժի արժեքները տարբեր են : Իսկ եթե դրանք պետք է տարբեր լինեն, ապա պետք է կիրառել հակառակ մոտեցումը՝ որքան մեծ լինի աշխատանքային ստաժը, այնքան բարձր պետք է լինի աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը:

Հարցման մասնակիցների միայն 5%-ն էր նշել բավարարվածություն հիմնական կենսաթոշակի չափից, իսկ աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքից գոհ էին միայն

3%-ը: Ընդ որում, գոհունակության այս ցածր տոկոսները ձևավորվել են գյուղական բնակչության հաշվին, քանի որ քաղաքաբնակների համեմատ, նրանք որոշ չափով լոյալ են արտահայտվել կենսաթոշակի կառուցվածքի և չափերի մասին:

Կենսաթոշակի վճարման ժամկետներից շահառուների բավարարվածությունը հանդիսանում է կենսաթոշակառուների բավարարվածության գնահատման 2-րդ ցուցանիշը: Այս դեպքում պատկերը ճիշտ հակառակն է՝ ի տարբերություն կենսաթոշակի չափի. **կենսաթոշակի վճարման ժամկետներից կենսաթոշակառուների բավարարվածությունը կազմում է 99%**: Ակնհայտ է, որ կենսաթոշակի վճարման ժամկետների հարցը լուծված է, որի ապացույցը կենսաթոշակառուների միասնական և բարձր գոհունակության աստիճանն է, առանց տարբերության՝ քաղաքային և գյուղական բնակչության շրջանում:

Կենսաթոշակի վճարման ժամկետներից դժգոհություն են հայտնել հարցմանը մասնակից կենսաթոշակառուների միայն 1%-ը (1,000-ից 10-ը), նշելով, որ կենսաթոշակի վճարումը միշտ ուշացնում են (1,000-ից 5-ը) կամ հաճախ են ուշացնում (1,000-ից 5-ը): Այդ 10 շահառուն բնակվում են 7 համայնքներում, որտեղ հարցազրույցներին մասնակցած մյուս բոլոր ռեսպոնդենտները բավարարվածություն են հայտնել կենսաթոշակի վճարման ժամկետներից: Ստորև ներկայացված է այդ 7 համայնքներում կենսաթոշակի վճարման ժամկետներից շահառուների բավարարվածության ցուցանիշները.

Աղյուսակ 19 - Կենսաթոշակի վճարման ժամկետներից դժգոհ կենսաթոշակառուների թիվն ըստ համայնքների

Համայնքներ	Ռեսպոնդենտների ընդհանուր թիվը, որից՝	Կենսաթոշակի վճարման ժամկետից...	
		...գոհ են	...դժգոհ են
Էրեբունի վարչ. շրջան (Երևան)	40	38	2
Արաբկիր վարչ. շրջան (Երևան)	39	38	1
ք. Արտաշատ (Արարատի մարզ)	23	21	2
գ. Այնթապ (Արարատի մարզ)	20	19	1
գ. Գառնի (Կոտայքի մարզ)	18	16	2
գ. Բյուրական (Արագածոտնի մարզ)	31	30	1
գ. Փարաքար (Արմավիրի մարզ)	26	25	1

Աղբյուրը՝ USAID/PRIP աջակցությամբ 2015թ.-ի հունիսին կենսաթոշակառուների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքները

Շահառուների գոհունակության աստիճանը կենսաթոշակի նշանակման գործընթացից

Կենսաթոշակի նշանակման գործընթացից կենսաթոշակառուների բավարարվածությունը **կազմում է 76%:**

Գծապատկեր 54 - Կենսաթոշակառուների բավարարվածությունը կենսաթոշակի նշանակման գործընթացից



Աղյուսակ 20 - Կենսաթոշակառուների տարբեր խմբերի բավարարվածությունը կենսաթոշակի նշանակման գործընթացից

Կենսաթոշակառուների խմբեր	Բավարարվա-ծությունը
Տարիքային	74%
Հաշմանդամության	81%
Մասնակի	75%
Արտոնյալ պայմաններով	86%
Երկարամյա ծառայության	60%
Կերակրողին կորցնելու դեպքում	100%

Աղբյուրը՝ ՄԳ ցուցանիշների շրջանակ, USAID/PRIP աջակցությամբ 2015թ.-ի հունիսին կենսաթոշակառուների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքները

Կենսաթոշակային համակարգում տեղի ունեցող բարեփոխումների արդյունքում համակարգի և կենսաթոշակառուների փոխհարաբերությունները բավական պարզեցվել են: **Կենսաթոշակի նշանակման գործընթացից շահառուների գոհունակության հիմնական պատճառները վերաբերվում են գործընթացի արագությանը, հարմարավետությանը և իրավական նորմերին համապատասխանությանը** (բազմակի պատասխաններ).

- **69%՝** կենսաթոշակի նշանակման գործընթացում **քաշքշուկներ չեն ստեղծվել,**
- **52%՝** կենսաթոշակի նշանակման **գործընթացը տևել է շատ կարճ,**
- **24%՝** կենսաթոշակի նշանակման **գործընթացն անցել է օրենքի սահմաններում:**

Կենսաթոշակառուների դժգոհության պատասխանները հիմնականում կապված են աշխատանքային ստաժի տարիների թվի հաշվարկի մեթոդի հետ, ինչպես նաև աշխատանքային ստաժի հիմնավորման համար կենսաթոշակառուներից պահանջվող փաստաթղթերի հետ: Աշխատանքային ստաժի տարիների թվի հաշվարկի հետ կապված խնդիր նշել է կենսաթոշակի նշանակման գործընթացից դժգոհություն արտահայտած կենսաթոշակառուների 43%-ը («Կենսաթոշակ նշանակելիս ոչ բոլոր գործոններն են հաշվի առել» - 43%):

Կենսաթոշակի նշանակման գործընթացից դժգոհությունը հիմնականում պայմանավորված է **արհեստական քաշքշուկների հետ (դժգոհողների 33%)**: Խնդրին բախվել են այն կենսաթոշակառուները, որոնց փաստաթղթերում (անձնագրում և աշխատանքային գրքույկում) առկա է եղել անվան տարբերություններ (մեկ կամ մի քանի տառերի չհամընկնում), աշխատանքային գրքույկի մաշվածություն և ոչ ընթեռնելի նշում(ներ): Կենսաթոշակի նշանակման գործընթացից դժգոհող շահառուների **15%**-ն ուղղակիորեն հայտարարել է, որ իրենցից **կաշառք են պահանջել**:

Գծապատկեր 55 - Կենսաթոշակառուների բավարարվածությունը կենսաթոշակի նշանակման գործընթացից (բազմակի պատասխաններ)

Կենսաթոշակի նշանակման գործընթացից...



Աղբյուրը՝ USAID/PRIP աջակցությամբ 2015թ.-ի հունիսին կենսաթոշակառուների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքները

Կենսաթոշակ ստանալու իրավունքի վերականգնման գործընթացից բավարարվածությունը

Հարցման մասնակիցներից միայն 6 կենսաթոշակառուներ էին անցել կենսաթոշակի իրավունքի վերականգնման գործընթացի միջով (ընդհանուր 1,000-ի մեջ 0.6%): ՖԽՔ-ների ժամանակ ևս մասնակիցների մեջ կենսաթոշակ ստանալու իրավունքի վերականգնման գործընթացին առնչվածներ չեն եղել: Այդ 6 մասնակիցներից բոլորն էլ **կենսաթոշակ ստանալու իրավունքի վերականգնման գործընթացից գոհ էին՝ 100%**, քանի որ, ըստ նրանց, կենսաթոշակ ստանալու իրավունքի վերականգնման գործընթացը տևել է շատ կարճ և քաշքշուկներ չեն ստեղծվել:

Գոհունակության աստիճանը ծրագրի շրջանակներում տրամադրվող խորհրդատվությունից

Հետազոտության արդյունքներով, հարցման մասնակիցների 89%-ը նշել էին, որ առնվազն մեկ անգամ շփվել են ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների հետ՝ այցելելով և ինչ-որ հարցի հետ կապված ստացել են խորհրդատվություն: Մնացած 11%-ի մեծ մասը կազմում էին այն կենսաթոշակառուները, որոնց հարցերով ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժիններ էին այցելել հարազատները, կամ նրանք ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժին էին այցելել շատ վաղուց (առնվազն կենսաթոշակի նշանակման հարցով), որի մասին արդեն մոռացել են:

ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժիններ այցելելու համար կենսաթոշակառուների կողմից նշվել էին հետևյալ 5 հիմնական առիթները (բազմակի պատասխաններ).

- **92%՝** կենսաթոշակի **նշանակման** հարցերով,
- **12%՝** աշխատանքային ստաժի մասին **տեղեկություն տալու** համար,
- **11%՝** կենսաթոշակի **վերահաշվարկման** հարցով,
- **6%՝ հաշմանդամության** հետ կապված հարցով
- **4%՝ փաստաթղթեր** և **տեղեկանքներ ստանալու** համար:

ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժիններում տրամադրվող խորհրդատվությունից կենսաթոշակառուների բավարարվածությունը կազմել է 85%: Նրանց գերակշիռ մեծամասնության (72%,) գոհունակության պատճառը ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինների աշխատողների բարեհամբույր և քաղաքավարի սպասարկումն է: Որպես օրինակ՝ նշվել էր, որ եթե ՍԱՊԾ տարածքային բաժինը տեղակայված է շենքի 3-4-րդ հարկում, իսկ կենսաթոշակառուն հաշմանդամ է և դժվարություն ունի բարձր հարկեր բարձրանալու, ապա ՍԱՊԾ տարածքային բաժնի աշխատողն ինքն է իջնում ներքև՝ կենսաթոշակառուին սպասարկելու համար:

Միևնույն ժամանակ ՀՀ ՍԱՊԾ այցելած շահառուների 12 տոկոսի կողմից նշվել են նաև դժգոհություններ: Գծապատկեր 56-ը ներկայացնում է գոհունակության և դժգոհության պատճառները.

Գծապատկեր 56 - Կենսաթոշակառուների բավարարվածությունը «Աշխատանքային կենսաթոշակներ» Ծրագրի շրջանակներում տրամադրվող խորհրդատվությունից՝ ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժիններում (բազմակի պատասխաններ)

ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժիններում տրամադրվող խորհրդատվությունից...



Աղբյուրը՝ USAID/PRIP աջակցությամբ 2015թ.-ի հունիսին կենսաթոշակառուների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքները

ՀՀ ՍԱՊԾ կենտրոնական գրասենյակ կենսաթոշակառուներն անհամեմատ ավելի քիչ են այցելում: Հարցման մասնակիցներից միայն **3%**-ն էր նշել, որ ինչ-որ հարցով այցելել է ՀՀ ՍԱՊԾ կենտրոնական գրասենյակ: Այս խմբի գերակշիռ մասը (74%) Երևանի բնակիչներ են: Կենսաթոշակառուների կողմից ՀՀ ՍԱՊԾ կենտրոնական գրասենյակ այցելելու 5 հիմնական առիթները հետևյալն են (բազմակի պատասխաններ).

- **32%՝** կենսաթոշակի **վերահաշվարկման** հարցով,
- **24%՝ փաստաթղթեր** և **տեղեկանքներ ստանալու** համար,
- **12%՝** կենսաթոշակի **վճարման վերականգնման** հարցով,
- **6%՝** կենսաթոշակի **պայմանների** հարցով,
- **6%՝** աշխատանքային ստաժի մասին **տեղեկություն տալու** համար:

Ծրագրի շրջանակներում ՀՀ ՍԱՊԾ կենտրոնական գրասենյակում տրամադրվող խորհրդատվությունից կենսաթոշակառուների բավարարվածությունը կազմել է 82%: Նրանց գերակշիռ մեծամասնությունը (68%), ինչպես և ՍԱՊԾ տարածքային բաժինների դեպքում,

իրենց գոհունակության պատճառ են նշել աշխատողների բարեհամբույր և քաղաքավարի սպասարկումը: Միևնույն ժամանակ ՀՀ ՍԱՊԾ կենտրոնական գրասենյակ այցելած շահառուների 18%-ը դժգոհություն է հայտնել այնտեղ իրենց տրամադրված խորհրդատվությունից, որպես հիմնական պատճառ նշելով աշխատողների պրոֆեսիոնալիզմի ցածր մակարդակը (67%):

Շահառուների գոհունակության աստիճանը ծառայության մատչելիությունից

Ծառայությունների մատչելիությունից ծրագրի շահառուների բավարարվածությունը գնահատելու համար դիտարկվել են 6 գործոններ.

1. ՍԱՊԾ կենտրոնների ֆիզիկական մատչելիությունը
2. Կենսաթոշակների մասին տեղեկատվության առկայությունը
3. Կենսաթոշակների մասին տեղեկատվության պարզությունը
4. ՍԱՊԾ կենտրոնների աշխատողների վերաբերմունքը
5. Կենսաթոշակի նշանակման համար պահանջվող փաստաթղթերի հավաքման հարցում ՍԱՊԾ աշխատողների ուղղորդման աշխատանքները
6. Աշխատանքային կենսաթոշակ ստանալու համար պահանջվող փաստաթղթերի հավաքման գործընթացը:

Այդ գործոններից յուրաքանչյուրին տրվել է հավասար արժեք (կշիռ), և գնահատվել, որ **ծառայությունների մատչելիությունից շահառուների բավարարվածությունը կազմում է 68%**: Միջինից ավելի բարձր է վերևում 1, 4, 5 և 6 թվագրված ծառայություններից բավարարվածությունը, իսկ ավելի ցածր՝ 2 և 3 թվագրված ծառայություններից բավարարվածությունը:

ՑՈՒՑԱՆԻՇ 6. - Կենսաթոշակառուների բավարարվածությունը ծառայությունների մատչելիությունից

Գծապատկեր 57- Կենսաթոշակառուների բավարարվածությունը ծառայությունների մատչելիությունից



Աղբյուրը՝ USAID/PRIP աջակցությամբ 2015թ.-ի հունիսին կենսաթոշակառուների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքները

Կենսաթոշակառուների շրջանում իրականացրած հետազոտության արդյունքները փաստում են, որ կենսաթոշակային համակարգում ընթացող գործընթացները որոշ ուղղություններով ապահովել են զգալի առաջընթաց, ինչի մասին են վկայում կենսաթոշակառուների բավարարվածության բարձր ցուցանիշները, սակայն որոշ ուղղություններով դեռևս կան խնդիրներ և լուրջ անելիքներ: Եզրահանգման համար հիմք են ծառայել հետևյալ բացահայտումները.

1. Կենսաթոշակային համակարգի աշխատանքից և մատուցվող ծառայություններից կենսաթոշակառուների բավարարվածության բարձր մակարդակի ապահովման գլխավոր խոչընդոտը **կենսաթոշակների ցածր մակարդակն է**, ընդ որում՝ ավելի ցածր, քան սպառողական զամբյուղի արժեքը: Քանի որ կենսաթոշակի չափը կենսաթոշակառուների համար ամենամեծ կարևորություն ներկայացնող հարցն է, ապա, առանց այդ հարցում էական տեղաշարժերի (կենսաթոշակի էական բարձրացման), այդ խնդիրը միշտ ստվեր է գցելու կենսաթոշակային ծառայություններից կենսաթոշակառուների բավարարվածության վրա:
2. Կենսաթոշակառուների մի զգալի մասը (37%) կենսաթոշակի ներկայիս կառուցվածքը (որի հիմնական բաղադրիչներն են հիմնական կենսաթոշակը և աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը) համարում են սխալ և առաջարկում են, որ **կապ ստեղծվի ապագա կենսաթոշակառուի կենսաթոշակի և նրա ֆորմալ աշխատավարձի** (կամ կատարած սոցիալական վճարների) **միջև**: Այս առաջարկը ներկայացվում է որպես սոցիալական արդարության վերականգնման խնդիր:
3. Կենսաթոշակային ծառայությունների հետ կապված խնդիրը, որը կենսաթոշակառուների ընկալմամբ ամբողջությամբ լուծված է՝ դա **կենսաթոշակի վճարման ժամկետների** հարցն է: Պետությունը կարողացել է հասնել կայունության և կանոնավորության:
4. ՍԱՊԾ տարածքային բաժիններում **կենսաթոշակառուների սպասարկման մակարդակը բավականին բարձր է**: Գերակշիռ դեպքերում աշխատողները բարեհամբույր են, պրոֆեսիոնալ, արագ են աշխատում: Դա վերաբերվում է բոլոր հիմնական հարցերին, որոնց պարագայում կենսաթոշակառուներն այցելում են ՍԱՊԾ տարածքային բաժիններ, մասնավորապես՝ կենսաթոշակի նշանակման, վճարումների վերականգնման կամ կենսաթոշակային իրավունքի վերականգնման գործընթացներին: Դժգոհություններն հիմնականում պայմանավորված են կենսաթոշակառուների աշխատանքային ստաժի տարիների թվի հաշվարկման մոտեցումների հետ, որի հետ են կապված նաև որոշ փաստաթղթերի հայթայթման դժվարությունները և կոռուպցիոն ռիսկերի առկայությունը:

Ուղղություն 9: Կենսաթոշակային համակարգին աջակցությունը հասարակության կողմից

Կենսաթոշակային համակարգի մասին իրազեկվածությունը պայմանավորում է նաև հասարակության վերաբերմունքն ու մասնակցության աստիճանը կենսաթոշակային

համակարգին: ՄԳ ցուցանիշների շրջանակում առանձնացված երեք խումբ հարցադրումներով փորձ է կատարվել գնահատել որքանով է Հայաստանի հասարակությունն իրազեկ և աջակցում կենսաթոշակային համակարգին: 2015թ.-ին կենսաթոշակառու ունեցող ընտանիքների շրջանում իրականացված հետազոտության միջոցով ստացվել է նաև այդ հարցադրումների պատասխանը: Հետազոտության զեկույցը առդիր ներկայացված է սույն հաշվետվությանը՝ զեկույց 2: Ստորև բերված են ՄԳ շրջանակի երեք հարցադրումների պատասխանները:

Կենսաթոշակի չափի հաշվարկման սկզբունքի իմացության աստիճանը

Կենսաթոշակի չափի հաշվարկման սկզբունքի իմացության աստիճանը շատ բարձր չէ և կազմում է 6%: Հանրության մի զգալի մասի՝ մոտ 20%-ի տրված պատասխաններով կենսաթոշակի չափի հաշվարկման սկզբունքի իմացությունը կարելի է համարել ճիշտ, սակայն մասնակիորեն՝ քանի որ այն լիարժեք չէ: Որպես կանոն, այդ խումբը կարծում է, որ կենսաթոշակի չափը կախված է կամ միայն աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքից (16%), կամ էլ դրանից և ևս մեկ այլ գործոնից (4%) (հիմնականում նշել են կենսաթոշակի հաշվարկման մեջ տարբեր առանձնահատուկ դեպքերի հետ կապված գործակիցները՝ կապված հաշմանդամության, վնասակար պայմաններում աշխատած լինելու, երկարամյա ծառայության և այլ գործոնների հետ):

Մինչև կենսաթոշակի անցնելու հիմնական տարիքը՝ 63 տարեկանը, մարդկանց տեղեկացվածությունը կենսաթոշակի բաղադրիչների մասին բավականին ցածր է՝ 4-5%: 63 և ավելի տարիքի անձանց շրջանում կենսաթոշակի բաղադրիչների մասին տեղեկացվածությունը ավելի քան երկու անգամ բարձր է: Ակնհայտ է, որ մինչև կենսաթոշակի անցնելու տարիքը մարդիկ ավելի քիչ են հետաքրքրվում կենսաթոշակի հարցերով: Կենսաթոշակի անցնելուց հետո, երբ նրանք անցնում են կենսաթոշակի նշանակման գործընթացով, ավելի շատ են շփվում թեմայի հետ և, տեղեկանում կամ մտապահում կենսաթոշակի բաղադրիչների մասին տեղեկատվությունը:

Միևնույն ժամանակ հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ ցանկության դեպքում հարցման մասնակիցները (91%-ը) գիտեն թե որտեղից կարող են տեղեկություն ստանալ կենսաթոշակի կամ նրա բաղադրիչների մասին: Մասնակիցների մեծ մասը նշել են ՀՀ ՍԱՊԾ տարածքային բաժինները կամ նրա վեբ կայքը.

Աղյուսակ 21 - Կենսաթոշակի և նրա բաղադրիչների մասին տեղեկություն ստանալու հնարավոր աղբյուրներն ըստ հարցման մասնակիցների բնակության վայրի և սեռատարիքային կազմի

	Ըստ սեռային կազմի	
	Արական	Իգական
Կենսաթոշակի և նրա բաղադրիչների մասին տեղեկություն	1. ՍԱՊԾ տարածքային բաժին - 45% 2. Ծանոթ, ընկեր, բարեկամ - 19%	1. ՍԱՊԾ տարածքային բաժին - 52% 2. Ինտերնետ - 28%

ստանալու հնարավոր աղբյուրներից 3 հիմնականները	3. Ինտերնետ - 19%	3. Ծանոթ, ընկեր, բարեկամ - 10%

	Ըստ տարիքային կազմի			
	20-24 տ.	25-39 տ.	40-62 տ.	63 և + տ.
Կենսաթոշակի և նրա բաղադրիչների մասին տեղեկություն ստանալու հնարավոր աղբյուրներից 3 հիմնականները →	1. Ինտերնետ - 46% 2. ՍԱՊԾ տարածքային բաժիններ - 21% 3. Հայփոստ - 17%	1. ՍԱՊԾ տարածքային բաժիններ - 37% 2. Ինտերնետ - 35% 3. Ծանոթ, ընկեր, բարեկամ - 14%	1. ՍԱՊԾ տարածքային բաժին - 49% 2. Ինտերնետ - 12% 3. Ծանոթ, ընկեր, բարեկամ - 11%	1. ՍԱՊԾ տարածքային բաժին - 64% 2. Ծանոթ, ընկեր, բարեկամ - 13% 3. Հեռուստատեսություն - 13%

	Ըստ բնակության վայրի		
	Երևան	Այլ քաղաքներ	Գյուղեր
Կենսաթոշակի և նրա բաղադրիչների մասին տեղեկություն ստանալու հնարավոր աղբյուրներից 3 հիմնականները →	1. ՍԱՊԾ տարածքային բաժին - 31% 2. Ինտերնետ - 30% 3. ՀՀ Աշխ. և սոցիալ. հարցերի նախարարություն - 17%	1. ՍԱՊԾ տարածքային բաժին - 57% 2. Ինտերնետ - 25% 3. Ծանոթ, ընկեր, բարեկամ - 16%	1. ՍԱՊԾ տարածքային բաժին - 61% 2. Ինտերնետ - 17% 3. Հայփոստ - 12%

Աղբյուրը՝ USAID/PRIP աջակցությամբ 2015թ.-ի հունիսին կենսաթոշակառուների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքները

Կենսաթոշակային իրավունքի ձևավորման պայմանների մասին իրազեկվածության աստիճանը

Կենսաթոշակային իրավունքի ձեռքբերման համար ֆորմալ աշխատանքային ստաժը պարտադիր պայման է: Հասարակության մեջ այս փաստի գիտակցումը կարող է նպաստել, որպեսզի աշխատողները ներկա և ապագա գործատուների հետ հարաբերություններ կառուցելիս ձգտեն ֆորմալ (ձևակերպված) հարաբերությունների:

Հարցման մասնակիցների 85%-ը նշել է, որ տեղյակ են կենսաթոշակային իրավունքի ձեռքբերման համար աշխատանքային ստաժի պարտադիր պայման լինելու մասին: Սակայն նրանցից ոչ բոլորն են ճիշտ պատկերացնում, թե ինչ պայմաններում է ձևավորվում իրենց աշխատանքային ստաժը (տես **Գծապատկեր**):

Գծապատկեր 58 - Աշխատանքային ստաժի ձևավորման պայմաններն ըստ հարցման մասնակիցների



Աղբյուրը՝ USAID/PRIP աջակցությամբ 2015թ. -ի հունիսին կենսաթոշակառուների շրջանում իրականացված ընտրանքային հետազոտության արդյունքները

Հարցման մասնակիցների մեծ մասը՝ 71%-ը ճիշտ գիտեն, որ աշխատանքային ստաժը ձևավորվում է միայն ֆորմալ (գրանցված) աշխատանք ունենալու պարագայում: իսկ 9%-ը սխալմամբ կարծում է, թե աշխատանքային ստաժը ձևավորվում է ցանկացած աշխատանք ունենալու դեպքում: Ոմանք այդ խմբում կարծում են, թե սեփական հողատարածքի վրա իրականացված գյուղատնտեսական գործունեությունը ևս համարվում է աշխատանքային ստաժ, ոմանք կարծում են, որ մեկ տարուց ավելի ժամկետով ցանկացած աշխատանք կատարելիս անձանց համար ձևավորվում է աշխատանքային ստաժ և այլն: Հարցման մասնակիցների մի փոքր խմբի՝ 4%-ի կարծիքով աշխատանքային ստաժը ձևավորվում է միայն «պետական աշխատանք» ունենալու դեպքում:

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ կենսաթոշակային իրավունքի ձեռքբերման համար աշխատանքային ստաժի պարտադիր պայման լինելու հարցում հասարակության տեղեկացվածությունը կազմում է 71%:

Կենսաթոշակային համակարգի նկատմամբ հասարակության դրական վերաբերմունքի աստիճանը

Հետազոտության արդյունքներով՝ կենսաթոշակային համակարգի նկատմամբ հասարակության դրական վերաբերմունքի աստիճանը կազմել է 20%, որից

- **50%-ը դրական է վերաբերվում համակարգին, նշելով որ «լավ է, որ գոնե այդքան էլ կենսաթոշակ վճարում են»**: Հասարակության մեջ լուրջ դժգոհություն է կա կապված երկրի դժվարին սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ և այդ դժգոհությունն ուղղված է դեպի պետությունը՝ ի դեմս իշխանությունների: Մարդիկ մտածում են կամ գիտակցում են, որ պետությունը դժվարությամբ է միջոցներ հայթայթում՝ կարևոր ծախսերը, այդ թվում՝ բնակչության սոցիալական ապահովության նկատմամբ իր պարտավորությունները կատարելու համար: Այդ ֆոնի ներքո կենսաթոշակային վճարումների իրականացումը արժանացել է հասարակության 10%-ի (կամ կենսաթոշակային համակարգի նկատմամբ դրական վերաբերմունք ունեցողների 20%-ի 50%-ի) գոհունակությանը:

- **46%-ը դրական է վերաբերվում կենսաթոշակային համակարգին, քանի որ «վճարումները կատարվում են ժամանակին»**: Ինչպես ցույց տվեց կենսաթոշակառուների հետազոտությունը (տես **Հաշվետվություն 1**), կենսաթոշակային համակարգի գործառույթների մեջ ամենամեծ գոհունակությանն արժանացել է կենսաթոշակների վճարման ժամկետը, քանի որ պետությունն ապահովում է վճարումների հստակ կանոնավորություն և ժամկետայնություն: Դա է պատճառը, որ հասարակության մեջ ևս մեծ թիվ են կազմում նրանք (9% (20%-ի 44%-ը)), ովքեր բարձր են գնահատում կենսաթոշակների վճարման ժամկետների ապահովման պետության ջանքերը:
- **8%-ի գոհունակությունը պայմանավորված է սպասարկման արագության և առանց քաշքշուկների հանգամանքով**:
- **3%-ը գոհ են, քանի որ «կենսաթոշակի գումարը ստանում են առանց պահումների»**: Այն շահառուները, ովքեր կենսաթոշակն արդեն ստանում են բանկոմատներից՝ բանկային քարտերի միջոցով կամ տեղյակ են կենսաթոշակի անկանխիկ վճարումների առանձնահատկությունների մասին, գոհունակություն են հայտնել, որ կենսաթոշակառուներն ի վերջո սկսել են իրենց գումարներն ստանալ ամբողջությամբ:

Հասարակության մի զգալի մասը, մոտ 26%-ը, չեզոք վերաբերմունք ունի կենսաթոշակային համակարգի նկատմամբ: Չեզոքության ներքո շատերը ցույց են տալիս կենսաթոշակային համակարգի նկատմամբ իրենց անտարբերությունը և անտեղյակությունը:

Հետազոտության արդյունքներով՝ **հարցման մասնակիցների 52%-ը նշել է, որ կենսաթոշակային համակարգի նկատմամբ իրենց վերաբերմունքը բացասական է:** Հասարակության մեջ կենսաթոշակային համակարգի նկատմամբ բացասական վերաբերմունքի պատճառներն են (բազմակի պատասխաններ, %՝ բացասական վերաբերմունք ունեցողների մեջ).

- **80%-ի համար՝ «Թույլ չի տալիս ապահովել լիարժեք սոցիալական պաշտպանություն և ապահովել բարեկեցիկ ծերություն»**: Կենսաթոշակի փոքր չափերը կենսաթոշակային համակարգի նկատմամբ հասարակության ամենամեծ դժգոհության աղբյուրն են: Մարդիկ բերել են բազմաթիվ օրինակներ, թե ինչ խնդիրներ են առաջանում՝ կապված կենսաթոշակի փոքր չափերի հետ: Այսպես, եթե կենսաթոշակառուն առողջ է և նրա մասով օրինակ՝ դեղերի ծախսեր չեն կատարվում, ապա կենսաթոշակը կարող է բավարարել միայն կոմունալ վճարումների իրականացմանը, այն էլ՝ միայն ամռան ամիսներին: Բայց եթե կենսաթոշակառուն նաև վատառողջ է, ապա ստիպված խնայում են կամ կոմունալ, կամ՝ առողջապահական ծախսերի վրա: Եթե կենսաթոշակառուի եկամտի աղբյուրը միայն կենսաթոշակն է, ապա, բացի սննդամթերքի ծախսերից՝ որևէ այլ ծախս թույլ տալ նա չի կարողանում: Նմանատիպ շատ օրինակները և դատողությունները հասարակության շրջանում ձևավորում են կենսաթոշակային համակարգի նկատմամբ լուրջ դժգոհություն և բացասական վերաբերմունք:

- **18%-ի կարծիքով «կենսաթոշակի հաշվարկման մոտեցումը սխալ է»**: Այս խմբում կա կարծիքների մեծ բազմազանություն: Ոմանք քննադատում են, ոմանք էլ կողմ են կուտակային կենսաթոշակային համակարգին: Շատերը դժգոհում են, որ մարդկանց աշխատանքի տարիներին կատարած սոցիալական վճարների և նրանց ստացած կենսաթոշակի միջև կապ չկա: Անհանգստացած են, որ կենսաթոշակը կախված է կենսաթոշակի անցնելու պահին երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակից:
- **12%-ը կարծում է, որ «սոցիալական քաղաքականությունը սխալ է»**: Այս խմբում մարդիկ հիմնականում դժգոհում են նրանից, որ կենսաթոշակային իրավունքի ձեռքբերման համար սահմանված տարիքային շեմը շատ բարձր է (նկատի ունեն 63 տարեկանը): Մարդիկ գտնում են, որ Հայաստանում կյանքի տևողությունը այնքան բարձր չէ, որ 63 տարեկանից անցնեն կենսաթոշակի:
- **5%-ի համար «ֆինանսական համակարգը անվստահելի է»**: Այս խմբին անհանգստացնում է Հայաստանի ֆինանսական համակարգի անկայունությունը: Ոմանք նկատի ունեն ազգային արժույթի թուլությունը և անկայուն փոխարժեքը, ոմանք երկարաժամկետ կուտակումներ անելու աննպատակահարմարությունը:
- **3%-ը նշել է, որ «սպասարկումը վատն է, հերթեր են գոյանում, աշխատակիցներն անբարեկիրթ են»**:
- **2%-ը տեղեկատվություն չունի կարծիք ասելու համար**:

Հարցման մասնակիցների պատասխաններից ստացվող ընդհանուր տպավորությունն այն է, որ **կենսաթոշակային համակարգի նկատմամբ վերաբերմունքի ձևավորման վճռորոշ երկու գործոններն են կենսաթոշակի չափը և վճարումների կանոնավորությունը**: Ընդ որում, կենսաթոշակի չափն էլ ավելի մեծ կարևորություն ունի, քան վճարումների կանոնավորությունը: Ուստի կենսաթոշակային համակարգի նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու ամենակարճ ուղին կենսաթոշակի չափի բարձրացումն է:

«Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի իրականացման վերաբերյալ ԱԽ անդամների ձևավորված դիրքորոշումը և առաջարկություններ

Ծրագրի վարչարարությունը բավական արդյունավետ է և նոր ՏՏ համակարգի ներդրմամբ զգալի բարելավվել է ծրագրի արդյունավետությունն ու մատուցվող ծառայությունների որակը: Կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման համար հատկացված միջոցների 99%-ն ուղղվում է աշխատանքային կենսաթոշակների վճարմանը, մնացած 1%-ի հաշվին ֆինանսավորվում են համակարգի աշխատողների աշխատավարձի, իրազեկման և այլ վարչական ծախսերը: **Ծրագրի վարչարարությունն էականորեն բարելավվել է.** 2013թ.-ին նոր ՏՏ համակարգի կիրառման արդյունքում բացահայտված խախտումներով ՀՀ պետական բյուջե է վերադարձվել ավելի քան 1 միլիարդ դրամ, իսկ 2014թ.-ին խախտումների թիվը զգալի նվազել է, **2014թ.-ին՝ 2013թ.-ի համեմատ, 30%-ով նվազել են կենսաթոշակի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու պատճառով կենսաթոշակի դադարեցման դեպքերը, 2015թ.-ին այդ դեպքերի թիվը նվազել է մինչև 17 դեպքի իսկ անձին սխալմամբ (ՀՀ օրենքի խախտմամբ) կենսաթոշակ նշանակված լինելու կենսաթոշակի իրավունքի դադարեցման ոչ մի դեպք չի արձանագրվել:**

2014-2015թթ.-ին կենսաթոշակի համար առաջին անգամ դիմած և առաջին անգամ կենսաթոշակ ստացող շահառուների տվյալները վկայում են, որ ավելի քան 90 տոկոսով բավարարվում են նրանց դիմումները: Գրեթե 96 տոկոս է կազմում նաև կենսաթոշակների վերահաշվարկման համար ստացված դիմումների նկատմամբ տվյալ տարում վերահաշվարկված կենսաթոշակների թիվը: ՀՀ ՍԱՊԾ կողմից ստացվող բողոք դիմումների նվազող վիճակագրությունը նույնպես վկայում է գործընթացների և շահառուների սպասարկման որակի բարելավման մասին:

Շահառուների գոհունակության աստիճանը Ծրագրի շրջանակում մատուցվող ծառայություններից, տրամադրվող խորհրդատվությունից և վերաբերմունքից բավական բարձր է նաև ըստ հետազոտության տվյալների:

Շահառուների դժգոհության հիմնական պատճառը կենսաթոշակի ցածր մակարդակն է: Թեև կենսաթոշակների անընդհատ ավելացման արդյունքում կենսաթոշակ/ծայրահեղ աղքատության գիծ հարաբերակցությունը 2015թ. կազմել է 150.7%, այնուամենայնիվ, հիմնական կարիքների բավարարման և տարեցների շրջանում աղքատության կանխարգելման իմաստով աշխատանքային միջին կենսաթոշակը հեռու է համարժեք լինելուց: Միջին կենսաթոշակ/աղքատության գիծ հարաբերակցությունը 2012թ-ի 69.5%-ից 2015թ. հասել է 85.2%-ի, իսկ միջին կենսաթոշակ/ՆՍԶ հարաբերակցությունը կազմել է 60% և 75.8% համապատասխանաբար:

Սերունդների համերաշխության սկզբունքի վրա հիմնված կենսաթոշակային համակարգը Հայաստանում չի երաշխավորում անհատի անձնական եկամտին/ կատարած հատկացումներին համարժեք փոխհատուցում (համարժեքություն լայն իմաստով), այն ուղղված է նվազագույն կարիքների բավարարմանը, թեև կենսաթոշակների փաստացի

մակարդակն այսօր չի ապահովում նաև նեղ իմաստով այդ համարժեքությունը։ Կենսաթոշակային ծախսերը, կազմելով սոցիալական ապահովության համակարգի ծախսերի ամենամեծ հոդվածը (կենսաթոշակների ֆինանսավորմանն են ուղղվում սոցիալական ոլորտի համար հատկացվող ֆինանսական միջոցների ավելի քան 30%-ը, բյուջեի ընդամենը ծախսերի 16%-17%-ը և ՀՆԱ-ի մինչև 4.4%-ը), չեն կարողանում մեղմել սպառման կտրուկ անկումը կենսաթոշակի անցնելիս՝ կենսաթոշակի անցնելուց հետո կենսաթոշակառուն ստիպված է, այնուամենայնիվ, իր սպառումը կրճատել 70-75%-ով։

Ծրագրի ֆինանսական բեռը տնտեսության վրա շարունակում է ծանր լինել և ծրագրի առջև դրված քաղաքական թիրախներին հասնելու համար լրացուցիչ ֆինանսական ռեսուրսները կվտանգեն կենսաթոշակային համակարգի «ֆինանսական կայունությունը»։ Վարվող կենսաթոշակային քաղաքականության արդյունքում խաթարվել է նաև սերունդների համերաշխության սկզբունքը։ Իրավիճակի բարելավման մեխանիզմները որոշ չափով դուրս են ծրագրի իրավասությունների շրջանակից, այդուհանդերձ բնակչության զբաղվածության մակարդակի, և հատկապես ֆորմալ զբաղվածության մակարդակի խթանման համար մեծ լծակ կլինի կենսաթոշակների հաշվարկման բանաձևի փոփոխությունը և վերջինիս կապը վճարված հարկերի հետ։ Այդ դեպքում կվերականգվի նաև ծրագրի սերունդների համերաշխության սկզբունքը։

Տնտեսության վրա կենսաթոշակների ֆինանսավորման բեռն ունի աճի միտում՝ պայմանավորված հասարակության ծերացմամբ։ Միջազգային առանձին փորձագիտական գնահատականների համաձայն հանրային ծախսերը կենսաթոշակների վրա՝ պայմանավորված կյանքի սպասվող տևողության բարելավմամբ, մոտակա հիսուն տարիների ընթացքում կավելանան ՀՆԱ-ի 1.5%-ից 2%-ով, նույնիսկ այն դեպքում, եթե հաշվի առնվեն հասարակության ծերացման ազդեցությունը մեղմացնող (offset) այնպիսի գործոններ, ինչպիսիք են աշխատուժի տնտեսական ակտիվության (ի հաշիվ զբաղվածության աճի) և կենսաթոշակային համակարգում ընդգրկվածության մակարդակների բարելավումը։

Կենսաթոշակային համակարգում բնակչության համարժեք ընդգրկվածության ապահովումը ինչպես բազմաթիվ երկրներում, այնպես էլ **Հայաստանում կենսաթոշակային քաղաքականության լրջագույն մարտահրավերներից է.** կենսաթոշակային համակարգում ընդգրկվածության մակարդակը՝ հարկատուների տեսակարար կշիռը զբաղվածների ընդհանուր թվաքանակում 2014թ. կազմել է 53.9%, 2015թ.՝ 55.3% է և ունի բարելավվելու մեծ պոտենցիալ։ Դա նաև նշանակում է, որ տնտեսության մեջ զբաղվածների 44.4%-ը դուրս է մնացել կենսաթոշակային համակարգից և չի ձևավորում կենսաթոշակային իրավունք։ Մինչդեռ կենսաթոշակային ցանկացած համակարգ պետք է տրամադրի իրավական կարգավորման այնպիսի շրջանակ, որը բոլոր քաղաքացիներին հավասարաչափ կընձեռի հնարավորություն ակտիվ աշխատանքային կյանքի ընթացքում կուտակել բավարար կենսաթոշակային իրավունք։ Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ներդրումը մասամբ է միայն լուծում քաղաքականության այս բացը։ Կուտակային կենսաթոշակային 3-րդ բաղադրիչը թեև հնարավորություն է տալիս ոչ ֆորմալ զբաղվածություն ունեցող կամ գյուղացիական տնտեսության մեջ զբաղված քաղաքացիներին իրականացնելու կամավոր

կուտակային կենսաթոշակային խնայողություններ, սակայն արդեն մոտ 4 տարի գործող կամավոր կենսաթոշակային բաղադրիչի մասնակիցների աննշան թվաքանակը 2016թ. մարտի վերջի դրությամբ (816 մարդ), վկայում է, որ կամավոր կենսաթոշակային բաղադրիչի շրջանակում տրամադրվող հարկային արտոնությունները բավարար չեն կամավոր կենսաթոշակային խնայողությունները խրախուսելու համար: Ցածր է նաև բնակչության իրազեկվածության և որոշումներ կայացնելու համար անհրաժեշտ գիտելիքի մակարդակը:

Ծրագրի հիմնական «թույլ» կողմը իրազեկման աշխատանքներն են: Զրոյացված ֆինանսավորումն անընդունելի է երկրի տնային տնտեսությունների 50 տոկոսին ծառայություն մատուցող ծրագրի համար: Բարելավման կարիք ունեն շահառուների շրջանում իրազեկման քարոզարշավների և տեղեկատվության տրամադրման աղբյուրներն ու ձևերը: «114» թեժ գծի մասին իրազեկվածությունը պետք է ավելի մեծ թափով տարածվի շահառուների շրջանում և տարածքային բաժիններում:

Աշխատանքային կենսաթոշակառուները կազմում են աշխատունակ տարիքի և աշխատունակ տարիքից բարձր տարիքի բնակչության ընդհանուր թվաքանակի 18.8%-ը և համաձայն կանխատեսումների այն շարունակելու է դրսևորել թույլ, բայց աճի միտում: Ըստ այդմ նպատակահարմար է Ծրագրի արդյունավետության բարձրացման համար լրացուցիչ ռեսուրսներ հատկացնել շահառուների իրազեկվածության բարձրացման համար տեղեկատվական նյութերի, հատկապես պարզ և մատչելի տեղեկատվական բուկլետների պատրաստման համար: Բուկլետների և տեղեկատվական այլ նյութերի պատրաստման ժամանակ մշտապես պետք է հաշվի առնվի Ծրագրի շահառուների առանձնահատկությունները. 63-ից բարձր տարիքի անձանց համար տպագիր նյութերը պետք է լինեն ընթեռնելի տառատեսակներով և գունավորմամբ, պարունակեն կարճ ու հասկանալի նախադասություններով պարզաբանումներ: Ողջունելի կլինի նաև Բրայլյան տառատեսակով նյութերի պատրաստումը՝ տեսողական հաշմանդամություն ունեցող շահառուների համար:

Կենսաթոշակային համակարգում բնակչության ընդգրկվածության համարժեք մակարդակի ապահովման դեպքում՝ համակարգի վարչարարության արդյունավետության ներկայիս բարձր մակարդակի պայմաններում, կարելի կլինի ապահովել հանրային ֆինանսների առավել արդյունավետ օգտագործում:

Եկամտային հարկ վճարողների թվաքանակի վերաբերյալ անհրաժեշտ ձևաչափով տեղեկատվության ստացումը թույլ կտա կատարել առավել համակողմանի վերլուծություն և իրատեսական կանխատեսումներ ինչպես հարկ վճարողների, այնպես էլ հարկային մուտքերի վերաբերյալ: Կարևորվում է նշված տեղեկատվությունը տրամադրող կառույցի/կառույցների հետ գործընկերային հարաբերությունների կառուցումը և անհրաժեշտ պարբերականությամբ և ձևաչափով տեղեկատվության ստացումը:

Ծրագրի արդյունավետության բարձրացման համար նպատակահարմար է նաև մեծացնել ՀՀ ՍԱՊԾ աշխատողների վերապատրաստումների պարբերականությունը՝ նրանց

կարիքներին համապատասխան։ Տարածքային բաժինների համակարգիչների վերազինումը ևս արդիական է նոր ՏՏ համակարգի արդյունավետ շահագործման համար։

Մշակվող օրենսդրական կարգավորումները պետք է աշխատողներին ներկայացվեն ավելի մատչելի և ընկալելի։ Աշխատողնրի համար կազմակերպվեն ավելի նեղ մասնագիտական և առավել խորացված վերապատրաստումներ, որոնք կառնչվեն կառավարության, իրավական օրենքների փոփոխություններին, ինչպես օրինակ՝ զինվորական կենսաթոշակներին, պարգևավճարներին, արտոնյալ կենսաթոշակների փոփոխություններին, երեխայի միանվագ նպաստին և այլն։ Ինչպես նաև, դրանք լինեն էթիկայի և հոգեբանության տեսանկյուններից, թե ինչպես պետք է հարաբերվել քաղաքացիների հետ և այլն։

Վերապատրաստումների բովանդակային մասի որոշման հարցում ճիշտ է հաշվի առնել աշխատողների գնահատված կարիքը և կարծիքը, իսկ վերապատրաման մասին ու թեմաների վերաբերյալ նախօրոք իրազեկել, որպեսզի նրանք ժամանակ ունենան նախատեսված թեմայի շուրջ հարցեր նախապատրաստել։ Վերապատրաստումների կազմակերպման ժամանակ նպատակահարմար է , որ հաշվի առնվեն նաև լոջիստիկ պայմանները և տրանսպորտային ու կացության հարցերը։

ՄԳ ցուցանիշների արդյունավետ ստացման և օգտագործման համար ՏՏ համակարգում լուծումներ ստեղծել տվյալների մասին կոմուլյատիվ տեղեկատվություն ստանալու համար։

ՄԳ իրականացման համար անհրաժեշտ վիճակագրական տեղեկատվության որակի և պահանջվող ձևաչափի մասին առաջարկությունները ներառված են համապատասխան ենթաբաժիններում։

Ծրագրի ՄԳ արդյուանվետ իրականացման համար առանձնացվում են երկու կարևոր նախապայմաններ .

ա/ վարչական տեղեկատվության ինքնաշխատ եղանակով ստացումը, որը հնարավոր կլինի համապատասխան ծրագրային ապահովման առկայության դեպքում և էապես կբարելավի ստացվող տեղեկատվության որակը։

բ/ ծրագրի ՄԳ կարևորագույն ցուցանիշների համար իրատեսական և հիմնավոր թիրախների սահմանումը, ինչպես նաև այդ աշխատանքն իրակացնելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորումը։

Հավելվածներ

ՀԱՎԵԼՎԱԾ Ա. Աշխատանքային խմբի կազմը

ՀԱՎԵԼՎԱԾ Բ. ՀՀ ԱՍՀՆ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման փաստաթղթեր

ՀԱՎԵԼՎԱԾ Գ ՀՀ ԱՍՀՆ «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման փաստաթղթեր

Առդիր փաստաթղթեր

Առդիր 1: ՀՀ ԱՍՀՆ «Աշխատանքային կենսաթոշակներ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակ:

Առդիր 2: ՀՀ ԱՍՀՆ «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ» ծրագրի արդյունքի վրա հիմնված մշտադիտարկման ցուցանիշների շրջանակ:

Առդիր 1-ը և 2-ը ներկայացված են առանձին Excel ձևաչափով ֆայլերով:

Առդիր 3: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության Հաշվետվություն 1՝ Կենսաթոշակառուների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները

Առդիր 4: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության Հաշվետվություն 2՝ ՀՀ ՍԱՊԾ աշխատողների շրջանում անցկացված հետազոտության արդյունքները

Առդիր 5: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության Հաշվետվություն 3՝ Հանրային կարծիքի և իրազեկվածության աստիճանի գնահատման հետազոտության արդյունքները

Առդիր 6: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության մեթոդաբանությունը

Առդիր 7: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության հարցաշարերը՝ տնային տնտեսությունների հարցաշար,

Առդիր 8: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության հարցաշարերը՝ ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հարցաշար,

Առդիր 9: Աշխատանքային կենսաթոշակներ ծրագրի մշտադիտարկման ցուցանիշների լրացման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրման հետազոտության հարցաշարերը՝ Ֆոկուս խումբ քննարկումների հարցաշար

Առդիր 10: «Կենսաթոշակային ապահովության, ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստների, պարգևավճարների, պատվովճարների և այլ ծրագրերի վճարման հետ կապված ծառայություններ»

ծրագրի շրջանակում իրականացված ֆոկուս խումբ քննարկումների հաշվետվություններ՝

- ՀՀ ՍԱՊԾ աշխատողների հետ;
- Հայփոստի ներկայացուցիչների հետ
- ՀՀ ՍԱՊԾ հետ պայմանագիր ունեցող բանկերի ներկայացուցիչների հետ

Առդիր 11: USAID/PRIP կարճաժամկետ խորհրդատու դոկտոր Ջոզեֆ Անդերսոնի հաշվետվությունը

Առդիր 12: Մշտադիտարկման և գնահատման վերաբերյալ ՀՀ ԱՍՀՆ նախարարին և ՀՀ ԱՍՀՆ ՄԳ աշխատանքային խմբին ներկայացված պրեզենտացիաներ